



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի ընթերցող,

Քո դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսի հինգերորդ համարը:

Հոդվածներ են ներկայացված հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ «Գրադարան. տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մատենագիտություն. տեսական և գործնական խնդիրներ», «Համայնքային գրադարաններ», «Գրադարանային վիճակագրություն և վերլուծություն», «Մշակութային ժառանգություն», «Համագործակցություն»: Ներառված է նաև մեկ հաղորդում:

1922 թ. դեկտեմբերի 22-ին Հ.Ս.Խ.Հ. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի «Բիբլիոգրաֆիական գործը Լուսժողկոմատին հանձնելու» դեկրետով Երևանում բացվեց Տոմարագրության պալատը, որը հետագայում վերանվանվեց ՀՀ պետական գրապալատ, ապա՝ Հայաստանի ազգային գրապալատ՝ դառնալով հանրապետությունում ազգային մատենագիտության, մամուլի մատենագիտական տեղեկատվության ու վիճակագրության, սոցիոլոգիական հետազոտությունների, կենտրոնացված քարտագրացուցակավորման, ինչպես նաև համահայկական տպագիր արտադրանքի անձեռնմխելի ազգային արխիվային ավանդադրված ֆոնդի պահպանության կենտրոն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. նոյեմբերի 24-ի թիվ 1204-Ն որոշմամբ «Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ը միացման ձևով վերակազմակերպվելով՝ միացավ Հայաստանի ազգային գրադարանին:

«Հայաստանի ազգային գրապալատի» անցած ուղու մասին է հոդվածներից մեկը:

Պահպանելով նախորդ համարներում որդեգրած մոտեցումը՝ ներառել ենք մագիստրոսական երկու ավարտաճառ: Արդյունավետ համագործակցություն է սկսված Հայաստանի ազգային գրադարանի և «Հրանտ Դինք» հիմնադրամի միջև: Հոդվածներից մեկը ներկայացնում է համագործակցության շրջանակում ձեռք բերված արդյունքները: Հակիրճ ներկայացված է Գրատպության նորաբաց թանգարանը: Լիահույս ենք, որ Հայաստանում նման եզակի թանգարանի առկայությունը, մեծապես կնպաստի Հայ գրքի հետազոտմանն ու հանրահռչակմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՊԱԼԱՏ

(Գործունեությունը և դերը Հայաստանի գիտական-մշակութային կյանքում)

Բանալի բառեր՝ մշակույթ, մատենագիտություն, պատմություն, գրքագիտություն, տեղեկատվություն, վիճակագրություն, հրատարակչական գործունեություն:

Keywords. Culture, bibliography, history, book studies, information, statistics, publishing activities.

ՀՀ կառավարության 2016 թ. նոյեմբերի 24-ի N 1204-Ն որոշմամբ, ըստ էության, դադարեց գոյություն ունենալ Հայաստանի գիտական-մշակութային հին և կարևոր հաստատություններից մեկը՝ «Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (նախկինում ՀՀ պետական գրապալատ), որը մեր հանրապետությունում հրատարակությունների պետական գրանցման և հաշվառման, հրատարակությունների ազգային անձեռնմխելի ավանդադրված հավաքածուների պահպանության, ազգային մատենագիտության, գրքագիտության, կենտրոնացված քարտազրացուցակավորման, մամուլի վիճակագրության և տեղեկատվության, ճյուղային սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնն էր: Գրապալատում էին հիմնադրվել և գործում գրքի միջազգային ստանդարտ համարակալման՝ ISBN (1988 թվականից) և երաժշտական /նոտագրական/ հրատարակությունների միջազգային ստանդարտ համարակալման՝ ISMN (2002 թվականից) համակարգերի ազգային գործակալությունները, ինչպես նաև պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման՝ ISSN (2004 թվականից) ազգային կենտրոնը:

Գրապալատը հիմնադրվել էր դեռևս Հայաստանի խորհրդայնացման առաջին տարիներին՝ ՀԽՍՀ Ժողկոմխորհի 1922 թ. դեկտեմբերի 27-ի դեկրետով՝ որպես պետական մատենագիտության կենտրոն:

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում Գրապալատն իր որոշակի դերն ուներ հանրապետության ինչպես գրահրատարակչական ոլորտի աշխատանքների կանոնակարգման, տպագիր մշակութային ժառանգության պահպանման բնագավառներում, այնպես էլ մամուլի և գրականության մատենագիտական տեղեկատվության ձևավորման գործում:

Հանրապետությունում լույս տեսած ամեն կարգի հրատարակությունների և տպագիր նյութերի՝ գրքերի, թերթերի, ամսագրերի, նոտաների, գեղարվեստական ալբոմների, քարտեզների, գիտաժողովների նյութերի, թատերական և մշակութային

միջոցառումների, ազդագրերի, ծրագրերի, ցուցահանդեսների բուկլետների, հրավիրատոմսերի և այլն, պարտադիր անվճար օրինակների ստացմամբ՝ Գրապալատում ձևավորվում և պահպանվում էին տպագիր արտադրանքի պետական անձեռնմխելի արխիվային հավաքածուները: 1990-ականների սկզբին անձեռնմխելի հավաքածուներում պահպանվող տպագիր նյութերի թիվը արդեն մոտենում էր մեկ միլիոնի շեմին: Դրանք մատչելի չէին զանգվածային օգտագործման համար և որպես ավանդադրված մշակութային արժեքներ, նախատեսված էին պահպանվելու ապագա սերունդների համար: Շնորհիվ այս հազամանքի՝ Գրապալատում պահվող հայաստանյան հրատարակությունների անձեռնմխելի հավաքածուները հնարավորինս ամենաամբողջական էին հանրապետության գրադարանային նմանատիպ հավաքածուներից, և ոչ միայն առանձին գրքերի, մամուլի օգանների և այլ նյութերի առումով, այլև մեր մշակույթի պատմության համար առանձին պատմամշակութային փաստերի առումով: Բանն այն է, որ 20-րդ դարի 30-ական թվականների ստալինյան բռնաճնշումների շրջանում հանրապետության կենտրոնական և շրջանային թերթերում հայ մեծանուն գրողների, արվեստագետների, գիտնականների և քաղաքական գործիչների դեմ զրպարտագիր հոդվածներով հանդես եկած գրչակները հետագայում իրենց կատարած սև գործերի հետքերը վերացնելու համար հանրապետության հանրային գրադարաններում որպես շարքային ընթերցողներ պատվիրում էին իրենց զրպարտագրերն ու մատնագրերը պարունակող թերթերը և սրիչով կտրում, հանում էին իրենց հոդվածները: Միակ տեղը, ուր պահպանվում էին պատմության համար ժամանակաշրջանը և պատմական դեմքերը ճանաչելու և գնահատելու համար էական նշանակություն ունեցող մամուլի օրգանները անխաթար վիճակում, Գրապալատն էր:

Հավաքված տպագիր նյութերի հիման վրա Գրապալատում կազմվում էր ընթացիկ հրատարակությունների պետական մատենագիտությունը, որ կոչված էր սպասարկելու հանրապետության (և ոչ միայն) գրադարաններին, գիտահետազոտական և մշակութային կազմակերպություններին և դրանցում աշխատող հետազոտողներին: 1925 թվականից Գրապալատը կազմում է հայ առաջին մատենագիտական պարբերականը՝ «Գրքի տարեգիր»-ը, որին հետևում են՝ «Ժուռնալային հոդվածների տարեգիր»-ը (1939 թ.) և «Լրագրային հոդվածների տարեգիր»-ը (1949 թ.):

«Գրքի տարեգիր»-ը 1971 թվականից ամսական պարբերականությամբ լույս էր տեսնում արդեն «Տպագրության տարեգիր» վերնագրով և իր մեջ ներառում էր նաև երաժշտական և կերպարվեստի հրատարակությունների, ինչպես նաև ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների մամուլում Սովետական Հայաստանի մասին հրապարակված նյութերի մատենագիտական նկարագրությունները: «Ժուռնալային հոդվածների տարեգիր»-ը և «Լրագրային հոդվածների տարեգիր»-ը 1972 թվականից, պահ-

պանելով իրենց ամսական պարբերականությունը, լույս են տեսնում «Հոդվածների և գրախոսությունների տարեգիր» մեկ ընդհանուր վերնագրով:

1972 թվականից Գրապալատում կազմված պետական մատենագիտության օրգանները հավելվածների տեսքով հրապարակում են նաև ադրբեջանական և քրդական տպագիր արտադրանքի մատենագիտական նկարագրությունները՝ «Ադրբեջանական տպագրությունը Սովետական Հայաստանում» և աշխարհում առաջին՝ «Քրդական տպագրությունը Սովետական Հայաստանում» խորագրերով:

Բացի ընթացիկ մատենագիտության պարբերական ցանկերից խորհրդային տարիներին Գրապալատում են կազմվել և հրատարակվել Հովհ. Պետրոսյանի Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիան» (1941 թ.), «Սովետահայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիան» (1949 թ.), «Հայ գրականության բիբլիոգրաֆիան» (1953 թ.), եռահատոր «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան» (1954 թ., 1956 թ., 1957 թ.), «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» (1960 թ.) կենսամատենագիտական հատորը, «Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա» (Բիբլիոգրաֆիա ծանոթագր.) (1958 թ.): Խորհրդային տարիներին Գրապալատում կազմված մատենագիտություններից կարելի է թվել նաև «Սովետական Հայաստանը ՍՍՀՄ մամուլում (1946-1955 թթ.)» (1974 թ.), «Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980 թթ.)» (1983 թ.) մատենագիտական ցանկերը, 1920 թվականից հետայսու առանձին տասնամյակների ընդգրկումով Հայաստանի Հանրապետությունում լույս տեսած «Գիրքը Սովետական Հայաստանում» մատենագիտական ժողովածուի առաջին երկու հատորները (1978, 1988 թթ.) և այլն:

Դեռևս խորհրդային տարիներից Գրապալատում էր իրականացվում հանրապետությունում լույս տեսնող հրատարակությունների պետական գրանցումն ու հաշվառումը:

Ստացվող հրատարակությունների հսկիչ օրինակների հիման վրա Գրապալատը կոչված էր վերահսկելու հանրապետությունում լույս տեսնող գրքերի և պարբերական մամուլի օրգանների հրատարակչական ձևավորման, դրանցում զետեղված հրատարակչական տեղեկությունների տվյալների (ելից և թողարկման տվյալների) համապատասխանությունը ստանդարտներով սահմանված նորմերին:

Գրապալատում էին նշանակվում հանրապետությունում գերատեսչական հրատարակչությունների կողմից հրատարակվող գրքերի ելից տվյալների դասակարգման ցուցիչները (ինդեքսները):

Գրապալատում էր կազմվում և հրապարակվում հանրապետությունում գրքերի և պարբերական մամուլի մասին տարեկան պետական վիճակագրությունը՝ սկզբում

որպես «Գրքի տարեգրի» հավելված՝ 1957-1961 թթ. համար, իսկ 1962 թվականից՝ որպես առանձին հրատարակություն:

Խորհրդային ժամանակաշրջանում հանրապետության 1000-ից ավելի գրադարաններ՝ հանրային, քաղաքային, գյուղական և այլն, հանրապետությունում լույս տեսած տարաբնույթ գրականությամբ համալրվում էին գրադարանային բաշխիչի միջոցով: Բաշխվող գրքերը իրենց հետ ունենում էին միասնական մատենագիտական նկարագրությամբ կատալոգային քարտեր, որոնք կենտրոնացված կարգով կազմվում և մշակվում էին հենց Գրապալատում:

Գրապալատի կողմից տրվում էին մատենագիտական և վիճակագրական տեղեկանքներ հանրապետության և, ինչպես նախկին Միության հանրապետությունների, այնպես էլ Միությունից դուրս գտնվող երկրների շահագրգիռ կազմակերպություններին ու անհատներին:

Գրապալատը հետխորհրդային շրջանում էլ հիմնականում շարունակում էր իր գործունեությունը վերը նշված բնագավառներում՝ միաժամանակ ձգտելով ընդգրկուն մի շարք ծրագրերի շրջանակներում իրականացնել խնդիրներ, որոնք պայմանավորված էին վերջին տասնամյակներում Հայաստանում տեղի ունեցող պատմական իրադարձություններով (անկախ պետականության հռչակում) և նորոյա սոցիալ-տնտեսական իրողություններով (ազատ շուկայական հարաբերություններ):

Անկախության առաջին տարիները՝ զուգորդված արցախյան պատերազմով, հանրապետության շրջափակմամբ, էներգետիկ ճգնաժամով, ֆինանսա-տնտեսական ծանր վիճակով և այլն, կատարյալ քաոսի էին մատնել հանրապետության հրատարակչական կյանքը: Ժողովրդավարության ուղին բռնած մեր երկրում տասնամյակներով երազված խոսքի ազատության ընձեռած հնարավորությունների ներքո լույս էին ընծայվում գրքեր (և բավական արժեքավոր) առանց հրատարակչական տեղեկությունների, առանց որևէ պետական մարմնում գրանցման և հաշվառման, հաճախ հեղինակային իրավունքի կոպիտ խախտումներով և այլն: Հանրապետությունում չէին գործում տպագիր արտադրանքի պարտադիր անվճար օրինակի հատկացման վերաբերյալ ընդունված նախկին որոշումներն ու հրահանգները, նորերն էլ դեռ չկային, որի պատճառով գրեթե ամբողջությամբ կազմալուծված էր Գրապալատի գործունեությունը. Խաթարված էր տպագիր արտադրանքի ազգային անձեռնմխելի հավաքածուների համալրման գործընթացը, չէին կազմվում և հրատարակվում պետական մատենագիտության պարբերականներն ու մատենագիտական այլ ցանկեր, չէր կազմվում հրատարակությունների մասին տարեկան վիճակագրությունը և այլն:

Այդ պայմաններում, կարևորելով Գրապալատի գործունեության հնարավոր բացառիկ դերը նորանկախ հանրապետության հրատարակչական ոլորտի կանոնա-

կարգման գործում, ինչպես նաև գիտական և մշակութաբանական մտքի զարգացման համար պետական մատենագիտության հսկայական նշանակությունը, հանրապետության իշխանության մարմինները ոչ միայն որոշում են պահպանել Գրապալատը, այլև գործուն անակցություն ցույց տալ նրա զարգացմանը: Արդեն 1994 թվականից զգալիորեն ավելացվում է գրապալատի բյուջետային ֆինանսավորումը, հաջորդ տարում հատկացվում են ֆինանսական միջոցներ Գրապալատի համար համակարգչային տեխնիկա ձեռք բերելու նպատակով (մինչ այդ Գրապալատի ունեցած տեխնիկական միջոցները ընդամենը իրենց դարձնում էին քանի գրամեքենաներ էին), իսկ 1996 թ. հատկացվում է գրապահոցի համար համապատասխան մի նոր տարածք և ֆինանսական միջոցներ՝ այն վերանորոգելու համար: Ձեռնարկված միջոցառումները աննախադեպ էին պատերազմից նոր դուրս եկած և ֆինանսատնտեսական ծանր պայմաններում գտնվող նորանկախ հանրապետության մշակութային և գիտական կազմակերպությունների պարագայում: Իսկ, ամենակարևորը, ՀՀ կառավարությունն ընդունում է տնօրինության կողմից Գրապալատի զարգացման նոր հայեցակարգ-ծրագիրը, որը, պահպանելով Գրապալատի գործունեության հիմնական ուղղությունները, նախատեսում էր.

1. Գրապալատում հավաքել, համակարգել և մշակել ոչ միայն հանրապետությունում, այլև ամբողջ աշխարհում հայերեն և օտար լեզուներով լույս տեսնող հայ գրականության ու մամուլի օրինակները, տպագիր այլ կարգի նյութերի նմուշները, ինչպես նաև Հայաստանի և հայ ժողովրդի մասին օտար մամուլում հրապարակված հոդվածները՝ նպատակ ունենալով՝

ա. այսօրվա և ապագա սերունդների համար ձևավորել ու գոյացնել համազգային տպագիր արտադրանքի ազգային անձեռնմխելի ավանդադրված ֆոնդ,

բ. ստեղծել լիարժեք ազգային մատենագիտություն, ստացված մամուլի ու գրականության օրինակների հիման վրա կազմել գրքերի, մամուլում լույս տեսած գիտական և մշակութաբանական հոդվածների ամենամյա եռալեզու մատենագիտական ցանկեր և դրանք բաժանել ինչպես մեր հանրապետության, այնպես էլ ամբողջ աշխարհի հայ և օտար գրադարաններին ու գիտամշակութային կենտրոններին,

գ. Հայաստանի Հանրապետությունում (հնարավորության և անհրաժեշտության դեպքում նաև սփյուռքում) բնակչության լայն խավերի շրջանակներում իրականացնել սոցիոլոգիական հետազոտություններ գրահրատարակությունների թեմատիկ-բովանդակային առումով հասարակական պահանջարկը ուսումնասիրելու և մշակված տվյալները պետական կառավարման համապատասխան մարմիններին և հրատարակչություններին տրամադրելու նպատակով՝ նպաստելու համար գրահրատարակչական ոլորտի աշխատանքների նպատակային պլանավորմանը:

2. Որպես անկախ հանրապետություն, հանդես գալով միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ՝ անդամագրվել ISBN (գրքի միջազգային ստանդարտ համարակալման), ISMN (երաժշտական (նոտագրական) հրատարակությունների միջազգային ստանդարտ համարակալման) և ISSN (պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման) գործակալություններին և Գրապալատում ներդնել ու կազմակերպել պարբերական և ոչ պարբերական հրատարակությունների գրանցման միջազգային ISBN, ISMN և ISSN համակարգերը՝ ապահովելու ինչպես հայաստանյան հրատարակությունների միջազգային լիարժեք շրջանառությունը, այնպես էլ արդի ավտոմատացման պայմաններում հրատարակությունների վերաբերյալ մատենագիտական տեղեկատվության միջազգային փոխանակման և տարածման լայն հնարավորությունը:

3. Կիրառելով մատենագիտական տվյալների համակարգչային մշակման նորագույն եղանակները՝ ձեռնարկել ազգային մատենագիտության ավտոմատացված համակարգի ստեղծմանը:

Ծրագրի այս կետի իրականացման անհրաժեշտությունը բխում էր ազգային մատենագիտության տվյալների էլեկտրոնային շտեմարանը ստեղծելու, համացանցի, հեռահաղորդակցության և տեղեկատվության փոխանցման այլ միջոցներով այդ տվյալների միջազգային շրջանառությունը լիարժեքորեն ապահովելու, սփյուռքի և հանրապետության գրադարաններին, գիտահետազոտական ու մշակութային կենտրոններին և շահագրգիռ այլ կազմակերպություններին ու անձանց Հայաստանում և Հայաստանի մասին անցյալ և ընթացիկ հրատարակությունների վերաբերյալ օպերատիվ մատենագիտական տեղեկատվություն տրամադրելու արդիականությամբ թելադրված պահանջներով, որը կնպաստեր ինչպես հանրապետությունում գրադարանային համակարգերի լիարժեք գործունեությանը, կրթական, մշակութաբանական և գիտահետազոտական մտքի զարգացմանը, ամբողջ աշխարհում հայագիտության ասպարեզում մատենագիտական տվյալների փոխանակության դյուրացմանը և ընդհանրապես հնարավորինս միջազգային տեղեկատվական համակարգերին ինտեգրվելուն: Ծրագրի իրականացումը մեծապես կնպաստեր նաև հանրապետության գրավաճառ ցանցերի զարգացմանը:

Ծրագրի վերջնական և ամբողջական նպատակը հրատարակչական ոլորտի զարգացմանը նպաստելուն զուգահեռ միջազգային տեղեկատվական համակարգերին ինտեգրված մատենագիտական լիարժեք տեղեկատվական միասնական դաշտի ստեղծումն էր:

Իհարկե, ցավով պետք է նկատել, որ հետագա տարիներին ինչ-ինչ պատճառներով հնարավոր չեղավ ամբողջությամբ կյանքի կոչել Գրապալատի զարգացման ծրագրով նախատեսված որոշ կետեր՝ հետաձգելով դրանց իրականացումը առավել

նպաստավոր ժամանակների: Չիրականացված կետերից էին, օրինակ, Գրապալատի աշխատանքները ամբողջությամբ ավտոմատացնելու, ընթացիկ մատենագիտական ցանկերը եռալեզու դարձնելու, Հայաստանի Հանրապետությունում (հնարավորության և անհրաժեշտության դեպքում նաև սփյուռքում) բնակչության լայն խավերի շրջանակներում գրահրատարակությունների թեմատիկ-բովանդակային առումով հասարակական պահանջարկը ուսումնասիրելուն ուղղված սոցիոլոգիական հետազոտություններ կատարելու կետերը, և կամ սփյուռքում հրատարակված գրականությունն ու մամուլը ամբողջությամբ և ժամանակին ստանալու խնդրի չլուծվելը: Պատճառները տարբեր էին՝ բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների անբավարարություն, պետական կառավարման մարմինների անտարբերություն և այլն:

Այնուամենայնիվ, Գրապալատի զարգացման ծրագիրը իր հիմնական կետերով, թեկուզ և բավական դժվարություններով, հնարավոր եղավ հետագա տարիներին իրականացնել: Նախ՝ ՀՀ պետական գրապալատը իր նոր Կանոնադրությամբ վերանվանվեց Հայաստանի ազգային գրապալատ: Որոշ նախապատրաստական աշխատանքներից հետո 1995 թվականից սկսեց հրատարակվել ընթացիկ մատենագիտության պարբերականը «Հայ տպագրության տարեգիրք» ընդհանուր վերնագրով, որը ներառում էր նախկին «Տպագրության տարեգիրք» և «Հոդվածների և գրախոսությունների տարեգիրք»: Միայն «Հայաստանը ՍՍՀՄ ժողովուրդների մամուլում» և 1990-1995 թթ. դրան հետևած «Հայաստանը աշխարհի մամուլում» տարեգրերի փոխարեն սկսում է հրատարակվել «Սփյուռքահայ մամուլի տարեգիրքը»:

Դեռևս 1994 թ. Հայաստանի ազգային գրապալատը ազգային մատենագիտություն ստեղծելու և համահայկական տպագիր արտադրանքի ազգային անձեռնմխելի արխիվային ֆոնդ հիմնելու աշխատանքներին նպաստելու խնդրանք-ուղերձով դիմել էր (և շարունակում էր պարբերաբար դիմել) սփյուռքահայ հրատարակիչներին, խմբագիրներին և գրողներին՝ իրենց հրատարակած թերթերից, գրքերից ու այլ կարգի նյութերից օրինակներ, ինչպես նաև իրենց երկրների օտար մամուլում Հայաստանի և հայ ժողովրդի մասին հրապարակված հոդվածներն ու ուսումնասիրությունները ուղարկել Գրապալատ: Ուղերձը տպագրվեց սփյուռքի մի շարք օրաթերթերում և իր որոշակի արձագանքը ունեցավ. Գրապալատը սկսեց ստանալ սփյուռքում լույս տեսած որոշակի թվով գրքեր ու պարբերականներ, որոնց հիման վրա էլ հնարավոր էր լինում կազմել «Սփյուռքահայ մամուլի տարեգիրքը»:

1995 թվականից «Հայ տպագրության տարեգրքերը» կանոնավոր ամսական պարբերականությամբ լույս տեսան մինչև 2016 թ.: Գրապալատի գործունեության վերջին շրջանում այն տարեկան ընդգրկում էր արդեն ընթացիկ հրատարակությունների՝ գրքերի, ատենախոսությունների սեղմագրերի, ամսագրային և լրագրային

հողվածների, պատկերահրատարակությունների, նոտագրական հրատարակությունների, գրախոսությունների, սփյուռքահայ մամուլի ավելի քան երեսուն հազար (2014 թ. տվյալներով այն կազմում էր 33103 միավոր) մատենագիտական նկարագրություն: Տարեգրքերում գրանցումների խմբավորումը կատարվում էր համաձայն միջազգային «Համընդհանուր տասնորդական դասակագման» համակարգի:

Գրապալատը պատրաստվում էր 2009 թվականից կյանքի կոչել մի կարևոր ծրագիր, որն էր՝ ազգային մատենագիտության ամսագրային և լրագրային հայագիտական հողվածների մատենագիտական էլեկտրոնային շտեմարանի ստեղծման և համալրման ծրագիրը: Ծրագիրը հավանության էր արժանացել ՀՀ կառավարության կողմից և այն անհրաժեշտ համակարգչային տեխնիկա և ծրագրային ապահովում ձեռք բերելու մասով տեղ էր գտել 2009 թ. պետական բյուջեում:

Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված էր հայագիտության զարգացման հեռանկարային հույժ կարևոր ու արդիական հիմնախնդիրներով, քանի որ հայ ժողովրդի պատմական զարգացման վերջին հարյուրամյակների ընթացքում ընդհանրապես գիտական միտքը և մասնավորապես հայագիտությունը պատմական հանգամանքների բերումով առավելապես իր դրսևորումն ունեցել էր հայկական պարբերական մամուլում, և ըստ այդմ էլ, հայագիտության զարգացման համար խիստ էական էր ունենալ ամսագրային և լրագրային հայագիտական հողվածների մատենագիտական տվյալների էլեկտրոնային շտեմարանի ստեղծումը և շահագործումը: Սակայն, ցավոք, ծրագիրը այդպես էլ բախտ չունեցավ իրականանալու: 2009 թ. հանրապետությունում սկսված ֆինանսական ճգնաժամը առիթ հանդիսացավ Գրապալատի՝ ՀՀ բյուջեով հատկացված պահպանության ծախսերից հենց այդ կարևոր ծրագրի ֆինանսավորումը ՀՀ մշակույթի նախարարության կողմից կրճատվելուն: Եվ ավաղ, հետագայում հանրապետության բյուջեում այդպես էլ ֆինանսական միջոցներ չգտնվեցին այդ ծրագիրն իրականացնելու համար: Եվ Գրապալատը ստիպված եղավ իր նպատակների իրականացումը մասամբ իրագործել՝ թվայնացնելով և էլեկտրոնային հրատարակությամբ ու համացանցում առցանց հասանելի դարձնելով դեռևս Խորհրդային ժամանակներում կազմված մատենագիտական բոլոր պարբերական ցանկերը: Դա հսկայական աշխատանք էր, որ ենթադրում էր մեծաթիվ մատենագիտական գրանցումների համակարգչային շարվածքի իրականացում: Այս ծրագիրը կարևոր էր նաև նրանով, որ ամենասկզբում կազմված մատենագիտական ցանկերը մեզ էին հասել անգամ ձեռագիր վիճակում, իսկ նախկինում լույս տեսած մատենագիտական պարբերական ժողովածուները գրադարաններում երկարատև օգտագործման հետևանքով մաշվել և շարքից դուրս

էին եկել՝ անհասանելի լինելով օգտվողների համար: Ծրագրի իրականացման դեպքում շատ ավելի դյուրացված կլիներ դրանց մատչելիությունը հանրությանը:

Անկախության շրջանում, բացի «Հայ տպագրության տարեգրքի» պարբերական թողարկումներից, Գրապալատը կազմել և իրականացրել է հետադարձ հետևյալ մատենագիտական ժողովածուների հրատարակությունները. 1920-2010 թվականների ընթացքում Հայաստանում լույս տեսած գրքերի մատենագիտական ցանկերի երրորդից ինը հատորները (առաջին երկու հատորները լույս էին տեսել Խորհրդային շրջանում)՝ «Գիրքը Խորհրդային Հայաստանում» և «Գիրքը Հայաստանի Հանրապետությունում» ընդհանուր խորագրերով, 1935-2005 ժամանակաշրջանը ընդգրկող եռահատոր՝ «Հայաստանում պաշտպանված մատենախոսությունների սեղմագրերի մատենագիտություն»-ը, «Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010)», «Հայ թարգմանական գրականություն 1920-2010 : Գիրք Ա., 1920-1970 : Գիրք Բ. 1971-2010» մատենագիտությունները:

Վերջին տարիներին Գրապալատը մատենագիտական ցանկերի թղթային տպագրությանը զուգահեռ իրականացնում էր նաև դրանց էլեկտրոնային հրատարակությունը CD սկավառակով: Այսպես. 2005 թ. էլեկտրոնային հրատարակությամբ թողարկվեց «Հայ տպագրության տարեգրքերի» 2001-2005 թթ. հավաքածուն, 2011 թ.՝ 2001-2011 թթ. Հավաքածուն, իսկ 2015 թ.՝ ամբողջ անկախության ժամանակաշրջանն ընդգրկող 1990-2015 թթ. համարների հավաքածուն: 2014 թ. նույն եղանակով թողարկվեցին նաև «Հայ թարգմանական գրականություն 1920-2010» մատենագիտության Ա. և Բ. հատորները:

Սկսած 2005 թվականից՝ «Հայ տպագրության տարեգրքի» բոլոր համարները ընթերցողների և հետազոտողների համար առցանց ռեժիմով մատչելի էին նաև Գրապալատի կայքում:

Ինչպես «Հայ տպագրության տարեգրքերի», այնպես էլ իր կազմած և հրատարակած մատենագիտական այլ ժողովածուների անվճար ստացողների ցանկերը մինչև 2009 թ., նախապես ՀՀ մշակույթի նախարարության հետ համաձայնեցնելով, Գրապալատն ինքն էր բաշխում հանրապետության հանրային, մարզային և մասնագիտական գրադարաններին, գիտամշակութային հաստատություններին, նաև՝ սփյուռքի մշակութային կենտրոններին: Գրքափոխանակության մի ծրագրի շրջանակներում, համագործակցելով Հայաստանում ԱՄՆ դեսպանատան տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի հետ, Գրապալատի հրատարակությունները մինչև 2016 թ. ուղարկվում էին ԱՄՆ Կոնգրեսի գրադարան: Իսկ 2009 թվականից, ՀՀ մշակույթի նախարարի 17.09.2009 թվականի N 578-Ա հրամանի համաձայն, Հայաստանի ազգային գրապալատի հրատարակած տեղեկատվական-մատենագիտական գրականությունը

հանձնվում էր ՀՀ մշակույթի նախարարության «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ին Գրապալատի և մշակույթի նախարարության միջև համաձայնեցված կազմակերպությունների ցանկին համապատասխան հրատարակությունների բաշխումը իրականացնելու համար:

Դեռևս Խորհրդային ժամանակներից Գրապալատն էր վիճակագրության պետական պատասխանատու մարմնին տրամադրում ՀՀ-ում հրատարակությունների վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, որոնք նաև, ինչպես նշվեց իր տեղում, առանձին պրակներով հրապարակվում էին: Նույնը շարունակվում էր նաև անկախության շրջանում:

2001 թ. հրատարակվում է 1990-2000 թթ. Հայաստանի Հանրապետություն լույս տեսած հրատարակությունների տարեկան տվյալների ժողովածուն: Հետագա տարիներին արդեն ժողովածուն լույս էր տեսնում ամեն տարի՝ ամփոփելով տվյալ տարվա վիճակագրական տվյալները: Այդ տվյալները տրամադրվում էին Հայաստանի Հանրապետության վիճակագրության ազգային ծառայությանը, ինչպես նաև Կրթության, գիտության և մշակույթի հարցերով Միացյալ ազգերի կազմակերպության վիճակագրության ինստիտուտին, միաժամանակ ՌԴ ազգային գրապալատի ԱՊՀ անդամ երկրների հրատարակությունների գծով վիճակագրության կենտրոնին: 2005 թվականից այն ևս ընթերցողների և հետազոտողների համար առցանց ռեժիմով մատչելի էր Գրապալատի կայքում:

Անկախության առաջին տարիներին հանրապետության հրատարակչական ոլորտում տիրապետող քառսային իրավիճակի կարգավորված գործում կարևոր էր Գրապալատի դերը: Եվ այդ հարցում հսկայական դեր ունեցավ հրատարակչության ասպարեզում միջազգային ստանդարտ համարակալման համակարգերի ներդրումը Հայաստանում: Խոսքը գրքի միջազգային ստանդարտ համարակալման՝ ISBN, երաժշտական (նոտագրական) հրատարակությունների միջազգային ստանդարտ համարակալման՝ ISMN, ինչպես նաև պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման՝ ISSN, համակարգերի մասին է:

Գրքի միջազգային ստանդարտ համարակալման՝ ISBN, և պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման՝ ISSN, համակարգերը դեռևս նախորդ դարի 80-ական թվականներից առկա էին մեր հանրապետության հրատարակչական կյանքում՝ որպես Խորհրդային Միության մաս: 10 պետական և գերատեսչական հրատարակչություններ ընդգրկված էին ISBN համակարգում և ունեին համապատասխան համարախմբեր: Բանն այն է, որ համակարգում գրանցված էր Խորհրդային Միությունը՝ որպես պետություն, իսկ նրանում ընդգրկված հանրապետությունները՝ որպես առանձին պետական միավորներ, գոյություն չունեին այդ համակարգի

համար: Խորհրդային Միության ISBN ազգային գործակալությունը գտնվում էր մոսկովյան Գրապալատում, որն էլ հենց լիազորված էր բաշխելու նույնականացուցիչ համարախմբերը հանրապետությունների առանձին հրատարակչություններին: Խնդիրը մոտավորապես նույնն էր նաև պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման՝ ISSN-ի պարագայում: Խորհրդային Հայաստանում հրատարակվող շուրջ 196 պարբերականներ և շարունակվող հրատարակություններ ժամանակին ստացել են ISSN համարանիշեր՝ կրկին մոսկովյան Գրապալատի միջոցով:

Մինչև Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանում առանձին ISBN-նույնականացուցիչ համարախմբերով գրքեր էին հրատարակում 8 պետական հրատարակչություններ, մեկ հասարակական կազմակերպություն՝ «Գիտելիք» ընկերությունը, ինչպես նաև մոտ 20 գերատեսչական հրատարակչություններ, որոնց հրատարակած գրքերին ISBN-ներ էր նշանակվում ՀՀ պետական գրապալատի կողմից: 10-րդ ISBN-նույնականացուցիչ համարախումբը տրված էր Գրապալատին հենց այդ նպատակով:

Հայաստանի անկախացումից բազմանում են հրատարակչությունները, որոնցից շատերը իրենց կայացման ճանապարհին պետք է անդամագրվեին հրատարակությունների միջազգային ստանդարտ համարակալման համակարգերին, սակայն անդամագրողը չկար: Չկար Խորհրդային Միությունը, նրա Գրապալատը: Իհարկե, փլուզումից մի որոշ ժամանակ անց Ռուսաստանի Դաշնությունը, իրեն հռչակելով ԽՍՀՄ իրավահաջորդ, ԽՍՀՄ գրապալատը՝ Ռուսաստանի ազգային գրապալատ, նամակով դիմեց ՀՀ Գրապալատի տնօրենին՝ առաջարկելով տվյալ դեպքում Հայաստանում ISBN գործառույթների իրականացումը իրենց լիազորելու առաջարկով: Սակայն շատ լավ պատկերացնելով միջազգային այդ համարախմբերի հսկայական դերը առանձին երկրների գրահրատարակչական ոլորտի կայացման ու զարգացման գործում՝ Գրապալատի տնօրինությունը, մերժելով ռուսաստանյան ISBN ազգային գործակալության առաջարկը, դեռևս 1997 թ. սկզբներից գործուն քայլեր է ձեռնարկում կապեր հաստատելու ISBN միջազգային գործակալության տնօրինության հետ՝ Հայաստանի Հանրապետությունը այդ համակարգերում ընդգրկելու համար: Տեղի ունեցած հանդիպումների և բանակցությունների ընթացքում, այս անգամ արդեն մերժելով ISBN միջազգային գործակալության առաջարկը՝ Վրաստանում ստեղծել անդրկովկասյան երեք հանրապետությունների համար ISBN գործակալության տարածաշրջանային կենտրոն և անդամագրվել այդ կենտրոնին, Գրապալատի տնօրինությունը հասնում է այն բանին, որ 1998 թ. Հայաստանի Հանրապետությունը, որպես անկախ պետություն, ընդգրկվում է ISBN միջազգային համակարգում և 1998 թ. հունվարից սկսում է իր գործունեությունը: Հենց սկզբից համակարգում գրանցվում են

հայաստանյան ավելի քան 200 հրատարակություն իրականացնող կազմակերպություններ: 2016 թ. այդ թիվը 381 էր: ISBN ստացող գրքերի քանակը վերջին շրջանում տարեկան հասնում էր միջինը 2500 գրքի, որի մոտ 10% -ը սովորաբար լինում էին այն գրքերը, որոնք պատեհության բերումով հրատարակվում էին հրատարակչություն չհանդիսացող կազմակերպությունների կողմից, իսկ մոտ 15%-ը՝ հեղինականին հրատարակություն համարվող՝ իրենց սեփական ստեղծագործությունները հրատարակող ֆիզիկական անձանց կողմից: Վերջիններս հիմնականում այն գրքերն էին, որոնք ժամանակին տպագրվում էին առանց հրատարակչության, առանց հրատարակչական ելքային տեղեկությունների և, դուրս մնալով որևէ մարմնում գրանցվելուց և հաշվառվելուց, դատապարտվում էին փոշիացման :

Շնորհիվ ISBN ազգային գործակալության գործունեության, ինչպես նաև այն հանգամանքի, որ Գրապալատում էին կատարվում հրատարակվելիք գրքերի նախնական գրանցումները, գրքի միջազգային ստանդարտ համարանիշին զուգահեռ նշանակվում էին նաև գրքերի ելքային տեղեկությունների դասակարգման ինդեքսները և կատարվում էր տիտղոսաթերթերի ելքային տվյալներով ձևավորումը միջազգային ստանդարտներին համապատասխան, ամբողջությամբ հանրապետությունում լույս տեսած հրատարակչական արտադրանքը բերվում էր օրինական և միանգամայն հաշվառելի դաշտ:

ISBN-ին հետևեց երաժշտական (նոտագրական) հրատարակության միջազգային ստանդարտ համարի՝ ISMN համակարգի ներդրումը մեզանում: Գրապալատը ISMN միջազգային գործակալության հետ անդամակցության պայմանագիր կնքեց 2002 թ.: Մինչ այսօր ISMN համակարգում գրանցված հայաստանյան հրատարակչությունների ընդհանուր քանակը 11 է: Միաժամանակ ամեն տարի համակարգի ծառայություններից օգտվում և ISMN են ստանում մի քանի տասնյակ անձինք՝ իրենց սեփական ստեղծագործությունների համար հանդես գալով իբրև հրատարակիչներ, ինչպես նաև հրատարակչություն չհանդիսացող, սակայն նոտագրական հրատարակություն իրականացնող մի շարք կազմակերպություններ: Տարեկան ISMN ստացող նոտագրական հրատարակությունների թիվը մեզանում տատանվում է 30-ից 40-ի միջակայքում:

Պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման (ISSN) համակարգին Հայաստանը անդամագրվեց կրկին Գրապալատի նախաձեռնությամբ: 2004 թ. հունվարի 21-ին՝ Պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման փարիզյան կենտրոնի և «Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ի միջև կնքված համապատասխան համաձայնագրի հիման վրա «Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ում ստեղծվեց ISSN (Պարբերականների միջազգային ստանդարտ

համարակալման) ազգային կենտրոնը: 2016 թ. վերջի տվյալներով այդ համակարգում գրանցված են և ISSN են ստացել ընդհանուր թվով 693 պարբերականներ:

Գրապալատի գլխավոր հանձնառություններից մեկն էլ հանրապետությունում և սփյուռքում լույս տեսած տպագիր արտադրանքի ազգային անձեռնմխելի հավաքածուների համալրումն էր: Առանց այդ տպագիր արտադրանքի ժամանակին և հնարավորինս ամբողջական ստացման հնարավոր չէր լինի ո՛չ ազգային մատենագիտական պարբերական ժողովածուների, ո՛չ էլ հրատարակությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների կազմումը: Գրապալատում տպագիր արտադրանքի ազգային անձեռնմխելի հավաքածուների համալրումն իրականացվում էր հրատարակությունների պարտադիր անվճար օրինակի ստացումով: Հրատարակիչները իրավական ինչ-ինչ ակտերի հիման վրա իրենց հրատարակչական արտադրանքից պարտադիր անվճար օրինակներ էին հատկացնում Գրապալատին, ինչպես նաև հանրապետության այլ խոշոր գրադարաններին: Անկախության շրջանում առաջին օրենքը, որ նախատեսում էր նման հոդված, 1991 թ. ընդունված «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքն էր, որի 21 հոդվածը նախատեսում էր. «Տպագիր բոլոր տեսակի հրատարակությունների օրինակները ուղարկել Հայաստանի Հանրապետության գրապալատ, Ազգային գրադարան, հիմնադրին և զանգվածային լրատվության տվյալ միջոցին վկայագիր տված մամուլին»:

Օրենքը վարչական տույժ կամ որևէ պատիժ չէր սահմանում իրենց պարտականություններում թերացողներին, և այդ պատճառով էլ, ցավոք սրտի, ստացող մարմիններում մամուլի հավաքածուների համալրումը կատարվում էր թերի՝ ոչ ամբողջությամբ:

Գրքային հրատարակությունների համար խնդիրը կոչված էր լուծվելու 2005 թ. ընդունված «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» օրենքով, որը, սակայն, իր անկատարության, իր մեջ պարունակող սխալ ձևակերպումների, անընդունելի և անիրականանալի կետերի պատճառով, այդպես էլ մնաց անկիրառելի: Օրենքում նշված գրքային հրատարակությունների պարտադիր անվճար օրինակ ստացող կազմակերպություններից և ոչ մեկը երբևէ ոչ մի օրինակ գիրք այդպես էլ չստացավ այդ օրենքով սահմանված կարգով:

Այդ կարևոր հանձնառությունը իրականացնելու համար մնում էր Գրապալատում հավաքչական աշխատանքների (ունեցած հնարավորությունների օպտիմալ օգտագործումով) ճիշտ կազմակերպում: Օգտագործելով ISBN, ISMN և ISSN համակարգերում լույս տեսնելիք հրատարակությունների նախնական գրանցման հանգամանքը հրատարակություններին միջազգային ստանդարտ համարանիշեր հատկացնելիս, և ըստ այդմ, տիրապետելով հրատարակվելիք գրքերի մասին արժեքավոր տեղե-

կատվությանը, Գրապալատը կարողանում էր ինդեքսավորման իր մատուցած ծառայությունների դիմաց հրատարակիչների հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա ձեռք բերել հանրապետությունում տարեկան արտադրված տպագիր արտադրանքի մոտ 70-80 տոկոսը: Այս ճանապարհով ամեն տարի Գրապալատի հավաքածուները համալրվում էին ավելի քան 20 հազար միավոր տպագիր նյութերով: 2016 թ. վերջում անձեռնմխելի հավաքածուներում պահվում էին արդեն մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազարից ավելի տպագիր նյութեր:

2001 թ. Հայաստանի ազգային գրապալատը Հայաստանի Ազգային, ՀՀ ԳԱ հիմնարար, Երևանի պետական համալսարանի, Խնկո Ապոր անվան մանկական ազգային, ՀՀ առողջապահության նախարարության բժշկագիտական և այլ գրադարանների հետ համատեղ ձևավորեց Կոնսորցիում: Ծրագիրը մասամբ հովանավորվում էր Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան գրասենյակի կողմից՝ համաձայն Հայաստանի գրադարանների Կոնսորցիումի կողմից Հայաստանի գրադարանների միացյալ ավտոմատացված համակարգի ստեղծման համար Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան գրասենյակին ներկայացված դրամաշնորհային հայտի: Որոշ նախապատրաստական աշխատանքներից հետո Կոնսորցիումին մասնակից գրադարանները և Գրապալատը 2003 թվականից սկսում են կազմել Հանրապետության գրադարանների համահավաք քարտարանը: Գրապալատի կազմած գրացուցակը ընդգրկում էր 1920 թվականից հետայսու ընկած ժամանակահատվածը:

2007 թվականից Գրապալատում իրականացվում էր հայ մշակույթի զարգացման համար խիստ էական՝ համակարգչային հայկական տառատեսակների մշակման, թվայնացման և պահպանման մի ծրագիր: Հայաստանի ազգային գրապալատում նախագծված և թվայնացված «Գրապալատ» և «Մարիամ» տառատեսակները ՀՀ կառավարության կողմից 2010 թ. ընդունվեցին որպես պետական փաստաշրջանառության մեջ կիրառվող պարտադիր տառատեսակներ: Այս ծրագրի շրջանակներում Գրապալատը ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ 2008 թվականից ամեն տարի անց էր կացնում սկզբում միայն հայկական, հետագայում նաև ընդհանրապես ոչ լատինական տառատեսակների միջազգային «Գրանշան» մրցույթը: Իր գործունեության սկզբնավորումից ի վեր 2007-2016 թթ. ընթացքում Գրապալատի հայկական տառատեսակների մշակման և պահպանման բաժնում մշակվեցին համակարգչային մոտ 30 հայկական տառատեսակներ:

Գոյության վերջին շրջանում Գրապալատն իր գործունեությունն իրականացնում էր իր կառուցվածքում ունենալով հետևյալ բաժինները.

1. Հրատարակությունների նախնական գրանցման բաժին

Բաժինն իրականացնում էր Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող գրքերի նախնական գրանցումը և հրատարակչական ելից տվյալների դասակարգման ինդեքսների նշանակումը, ինչպես նաև կազմակերպում և վարում էր գրքի միջազգային ստանդարտ համարակալման (ISBN), երաժշտական (նոտագրական) հրատարակությունների միջազգային ստանդարտ համարակալման (ISMN) ազգային գործակալությունների և պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման (ISSN) ազգային կենտրոնի աշխատանքները:

2. Հրատարակությունների ընդունման և վիճակագրության բաժին

Բաժինն իրականացնում էր Հայաստանի Հանրապետությունում գործող հրատարակչություններից և սփյուռքից տպագիր արտադրանքի անվճար օրինակների (գրքերի, ատենախոսությունների, պատկերահրատարակությունների, նոտագրական հրատարակությունների, քարտեզների, ամսագրերի, թերթերի, ամսագրերի, մանր նյութերի) ընդունումը, պետական գրանցումը և վիճակագրական հաշվառումը: Կազմում և հրատարակության էր պատրաստում «Հրատարակությունները Հայաստանի Հանրապետությունում» ամենամյա վիճակագրական ժողովածուները, օգտվողներին էր տրամադրում հայաստանյան հրատարակությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկանքներ:

3. Անձեռնմխելի ֆոնդերի պահպանության և քարտագրացուցակավորման բաժին

Բաժինն իրականացնում էր Հայաստանում և սփյուռքում լույս տեսած պարբերական և ոչ պարբերական հրատարակությունների և այլ կարգի տպագիր նյութերի «Մայր մատյանում» գրանցումը, հաշվառումը, քարտագրացուցակավորումը և դրանց ազգային անձեռնմխելի ավանդադրված հավաքածուներում պահպանությունը, ինչպես նաև քարտարանների վարումը:

4. Ընթացիկ մատենագիտության բաժին

Բաժինն իրականացնում էր Հայաստանում և սփյուռքում լույս տեսած ընթացիկ հրատարակությունների մատենագիտական մշակումը: Կազմում և տպագրության էր պատրաստում ազգային ընթացիկ մատենագիտության ամենամյա ցանկերը «Հայ տպագրության տարեգրքերը», որոնք ներառում էին՝

«Գրքի տարեգիրքը», «Ատենախոսությունների սեղմագրերի տարեգիրքը», «Կերպարվեստի տարեգիրքը», «Նոտաների տարեգիրքը», «Գրախոսությունների տարեգիրքը», «Լրագրային հոդվածների տարեգիրքը», «Ամսագրային հոդվածների տարեգիրքը», «Սփյուռքահայ մամուլի տարեգիրքը», «Քարտեզների տարեգիրքը» և այլն:

5. Հետադարձ մատենագիտության բաժին

Բաժինը կազմում և տպագրության էր պատրաստում 1920 թվականից Հայաստանում հրատարակված գրքերի 10-ամյա ընդգրկումներով մատենագիտական ցանկերը և հետադարձ մատենագիտության գծով թեմատիկ այլ ժողովածուներ, ինչպես նաև խորհրդային շրջանում կազմված մատենագիտական պարբերականների տեքստերի համակարգչային շարվածքները:

6. Ավտոմատացման և համակարգչայնացման բաժին

Բաժինը մասնակցում էր Հայաստանի գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում ազգային մատենագիտական տվյալների շտեմարանի ձևավորման աշխատանքներին՝ շտեմարանում գրանցելով Հայաստանի ազգային գրապալատի ֆոնդերում առկա և նոր ստացվող գրքերի, պարբերականների և ատենախոսությունների սեղմագրերի մատենագիտական տվյալները:

7. Համակարգչային հայկական տառատեսակների ստեղծման և պահպանության բաժին

Բաժնի խնդիրներն էին՝

1. ուսումնասիրել հայկական տառարվեստի պատմությունը, տառատեսակների կառուցվածքային առանձնահատկություններն ու ոճական յուրահատկությունները,

2. հայտնաբերել մշակութային արժեք ունեցող պատմական տառատեսակներն ու թվայնացնել դրանք,

3. ուսումնասիրել ժամանակակից հայկական տառատեսակները,

4. նախագծել ու թվայնացնել նոր հայկական տառատեսակներ:

Բաժինը ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ և պետական աջակցությամբ կազմակերպում և ամեն տարի անցկացնում էր համակարգչային տառատեսակների միջազգային «Գրանշան» մրցույթը, որի հիմնական նպատակն էր նպաստել ընդհանրապես տառարվեստի և, մասնավորապես, հայկական տառարվեստի նոր ու ավանդական ձևերի զարգացմանն ու միջազգային ճանաչմանը, տառաստեղծների հեղինակային իրավունքի պաշտպանությանը, հայ և այլազգի տառաստեղծների համագործակցությանն ու մշակութային կապերի ամրապնդմանը, թվային տեխնոլոգիաների ու էլեկտրոնային հաղորդակցության միջոցների զարգացմանը, ավանդական տառատեսակների թվայնացումն ու կիրառումը, նոր տառատեսակների նախագծումն ու թվայնացումը:

Դժվար է գերազնահատել Գրապալատի ունեցած դերը Հայաստանում հրատարակչական ոլորտի կանոնակարգման, հայկական տառարվեստի զարգացման, տպագիր նյութերի ազգային անձեռնմխելի հավաքածուների պահպանության և

հատկապես գրադարանային գործին, գիտությանն ու մշակույթին ի նպաստ հայկական մատենագիտության զարգացման տեսանկյունից: Իր գոյության 94 տարիների ընթացքում հրատարակած, իրենց նախադեպը չունեցող մատենագիտական պարբերականները և բազմաթիվ ժողովածուները դրա լավագույն վկայությունն են: Այն անտարակույս կենսական կարևորություն ունեցող մի օղակ էր Հայաստանի գիտա-մշակութային հաստատությունների ցանկում:

Դժվար է ասել, թե ինչով էր պայմանավորված ՀՀ կառավարության կողմից Հայաստանի ազգային գրապալատի՝ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 1204-Ն որոշման համաձայն, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության «Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առևտրային կազմակերպության միացման ձևով վերակազմակերպումը և «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացումը, որ, ըստ էության, գրապալատի ինքնուրույն գոյության վերացում էր նշանակում: Ճի՞շտ էր արդյոք տապագիր նյութերի ազգային անձեռնմխելի հավաքածուների մեկտեղումը մի տանիքի տակ՝ անտեսելով մեր հանրապետության սեյսմիկ ակտիվ գոտում գտնվելու հանգամանքը, և այն, որ սեյսմակայունության և տեխնիկական անհրաժեշտ զինվածության առումով մեր հանրապետությունում այսօր ոչ մի կազմակերպություն (նաև Ազգային գրադարանը) չունի գրապահոցային հուսալի մասնաշենք: Կարելի՞ էր արդյոք ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս կազմող մեր տպագիր նյութերը մեկտեղել և սերունդների համար դրանց պահպանությունը իրականացնել մեկ վայրում: Որևէ աղետի, վթարի կամ հրդեհի դեպքում կորուստը անխուսափելի և անդառնալի կլինի: Կշարունակվե՞ն արդյոք այն ծավալներով ու ընդգրկումներով մատենագիտական միակ հայկական պարբերականի՝ «Հայ տպագրության տարեգրքերի», ինչպես նաև մատենագիտական թեմատիկ ու այլ ժողովածուների կազմումն ու հրատարակությունները մեզանում, և կամ ավարտին կհասցվե՞ն Գրապալատի ձեռնարկած ու կիսատ մնացած ծրագրերը...

Ժամանակը ցույց կտա...

SUMMARY

National Book Chamber of Armenia starting from 1922 was the center for state registration of publications in the Republic of Armenia. This organization was in charge also for ISBN (since 1988), ISSN (since 2004), ISMN (since 2002) services. Starting from March 2017, National Book Chamber was merged with the National Library of Armenia.

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պրոֆեսոր,
մանկավարժական գիտությունների դոկտոր*

**ԳԻՐՔԸ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ XXI ԴԱՐԻ ԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ
(գրադարանային-տեղեկատվական վերլուծություն)**

Բանալի բառեր՝ բանավեճ, տեղեկատվական և տեխնոլոգիական հաղորդակցություն, ընթերցանություն, գրագիտություն, կիբեռհարձակում, գրադարանային-տեղեկատվական աղբյուրների անվտանգության ապահովում

Keywords. Discussion, information and technological communication, reading, literacy, cyber attack, security of library information sources.

Համակարգչային-տեխնոլոգիական միջոցների լայնամասշտաբ զարգացումները, որոնք հիմնականում հատուկ են արևմուտքի երկրներին, դրանց ներդրումը տնտեսության, մշակույթի, կրթության և այլ ոլորտներում, առաջ են բերել մի շարք խնդիրներ: Մի կողմից՝ ընթերցանության «ճգնաժամ» և գրադարանային-մատենագիտական գործի կատարելագործում, մյուս կողմից՝ տեխնոլոգիական (վիրտուալ) միջավայրում կիբեռհարձակումների դեմ պայքար՝ տեղեկատվական աղբյուրի օբյեկտիվությունը պահպանելու համար, մեկ այլ դեպքում՝ հասարակության գրագիտության բարձրացման նպատակով գրականության սպասարկման և հաղորդակցության որակական ապահովում:

Աղբյուրների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ XXI դարի տեղեկատվական հասարակարգի զարգացումներում լրջագույն դեր ունեցող այդ խնդիրները չունեն միասնական լուծում և մասնագիտական շրջանակներում շարունակում են բանավեճերի առիթ տալ: Առաջ են եկել տարակարծություններ՝ կապված իրական գրքի համեմատ էլեկտրոնային (համակարգչային) տեղեկատվության «գերազնահատման» և իրական գրքի՝ որպես ընթերցանության օբյեկտի դերի «նվազեցման» հետ: Այդ տեսանկյունից ուշագրավ է ընթերցանության բնագավառի ամերիկացի մասնագետ Ն. Կապլանի «Կարդալ կամ չկարդալ. ազգային կարևոր հարց» զեկույցը, ուր նշվել են.

1. Երեխաների և դեռահասների շրջանում ոչ ծրագրային ընթերցանության պատմական ցուցանիշների նվազում:

2. Ավագ դասարանցիների շրջանում ընթերցանության ունակությունների աստիճանաբար անկում:

3. Ընթերցանության ունակությունների անկում մեծահասակների մոտ:

Այս միտումները հաստատվել են զեկույցի՝ ապագա ընթերցանության վերաբերյալ հանրագումարային հետևյալ դրույթով. «Գրքերի ընթերցանությունը հաճույքի համար ուղիղ համեմատական է ընթերցանության որակի հետ այնպես, որ երբ պահանջմունքների բավարարման համար ցածրանում են ընթերցանության ցուցանիշները, մենք նկատում ենք նաև ընթերցանության որակի նվազումը»:¹

Անհրաժեշտ է նշել, որ գրքերի թվայնացման և ինտերնետից (համացանցից) օգտվելու մատչելիությունը գնահատվում է ոչ միայն Նյու Յորքի հանրային գրադարանում (որի ֆոնդը ավելի քան 53 մլն միավոր է): Եթե տվյալ գործում պահանջվում են ավելի խորը մասնագիտական գիտելիքներ, ապա կարելի է հաստատել, որ տեխնոլոգիական միջոցները երբեք չեն կարող փոխարինել գրքի («փաստաթղթի») բնագրին, գրադարանավար-մատենագետին, գրադարանին ընդհանրապես՝ որպես տեղեկատվական համակարգի: Ավելին՝ տեխնոլոգիական ոչ մի միջոցի, այդ թվում «Էլեկտրոնային գրադարանին» վիճակված չէ դուրս մղել «կենդանի գրքին», որովհետև ոչ բոլոր գրքերը կարելի է գտնել «թվային» տարբերակում, և ամեն ինչ չէ, որ կարելի է թվայնացնել՝ վատնելով աշխատաժամանակ և մեծ գումարներ:

Փաստորեն, «պահպանություն», «մատչելիություն» հասկացությունները խորհրդանշում են ժամանակակից գրադարանների (ինչպես նաև՝ արխիվների և թանգարանների) գործունեության հիմնական ուղղությունները, սակայն ունեն տարբեր ընկալումներ և հակադրելի են: Այսպես, գրքի պահպանության մասին խոսելով հաճախ հասկացվում է լոկ որպես նյութական օբյեկտի պահպանում՝ նրանից ընթերցողին (սպառողին) ինֆորմացիա փոխանցելու համար (շրջանցելով նրա մշակութային արժեքը): Եվ պատահական չէ, որ շատ գրադարաններում պահպանված ամբողջ գրավոր (տպագիր) ինֆորմացիան համառորեն փոխադրում են էլեկտրոնային ձևի մեջ: Այդպիսի որոշման վտանգավորությունը կայանում է նրանում, որ պատճենահանելով (անգամ վնասելով)՝ բնագրերը դառնում են «մեռյալ ֆոնդ», որոնք կարող են ոչնչանալ չօգտագործելու («ոչ պիտանիություն») պայմաններում: Մինչդեռ առանց գրադարանային ֆոնդի ֆիզիկական առկայության հնարավոր չէ գիրքը ընթերցողին մատչելի դարձնել: Կամ, եթե խոսելու լինենք թվայնացված «փաստաթղթի» մասին, ապա մշտապես այն համադրելի է անգամ շատ վատ վիճակում գտնվող բնագրի հետ: Տեղին է ասվել. «Գրքային մշակույթն ունի իր պատմությունը և իրավունք ունի պահպանվելու՝ ոչ միայն

¹ Kaplan, N. To read, responsibly //Public Library Quarterly.- 2008.- Vol. 27.- N 3.- p. 193-201.
<http://www.tandfonline.com/toc/wplq20/27/3?nav=tocList>

որպես տեղեկատվության աղբյուրի, այլ՝ որպես մարդկության նվաճումների մասին հիշողության»²:

Բացի այդ, գրադարանային ֆոնդերի թվայնացման դեպքում (հատկապես մատենագիտական ցանկերի կազմման գործում) անընդունելի են կրկնությունները և հեղինակային իրավունքի պահպանությունը, որոնք հաճախ շրջանցվում են: Ի դեպ, 2014 թ. հունիսին Երևանում կայացած գիտաժողովում հեղինակային իրավունքի և տեխնոլոգիական միջավայրում տեղեկատվական աղբյուրների անվտանգության խնդիրների մասին իր կարծիքը հեռուստակապով հայտնեց նաև Թոմ Սլոունը Նյու Յորքից³: Ակնհայտ է, որ ընթերցանությունը և հասարակության (անհատների) գրագիտությունը չպետք է միակողմանիորեն կապել համակարգչի հետ, երբ կարելի է հաղորդակցությունը ապահովել նաև գրադարանային-մատենագիտական աղբյուրների միջոցով:

Ընթերցանության և հասարակության գրագիտության հարցերը XXI դարի սկզբներին բարձրացվել են նաև Բրիտանիայում: Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ «յուրաքանչյուր չորրորդ չափահաս անգլիացին դժվարությամբ է կարդում լիաֆորմատ թերթը, իսկ յուրաքանչյուր վեցերորդը ընդունակ չէ կարդալ այն մակարդակով, որպեսզի կարողանա հաղթահարել կյանքի առջև ծառայած հասարակ առաջադրանքները ... ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով Մեծ Բրիտանիայի բնակչության 22%-ը անգրագետ է»⁴:

Հակասական կարծիքներ է հայտնել Ջեֆֆ Փեյնը՝ առաջ քաշելով «ֆունկցիոնալ գրագիտության» հասկացությունը: Մի դեպքում նա նշում է, որ «ֆունկցիոնալ գրագիտության» որոշումը պետք է հիմնված լինի սոցիալական տարբեր իրավիճակներում անհատական փորձի վրա, մյուս դեպքում՝ ասելով հակառակը՝ «նույնիսկ նորությունների ազահ սիրահարը, ինչպիսին ես եմ, հաճախ գերադասում եմ նայել նորություններ հեռուստացույցով, քան կարդալ լուրջ թերթ»⁵: Ամերիկյան միջավայրում «ֆունկցիոնալ գրագիտությունը» բնութագրվում է որպես կարդալու և գրելու կարողություն այն մակարդակի վրա, ինչը թույլ է տալիս ապրել արտաքին նորմալ կյանքով, սակայն ներքին կյանքը աղքատիկ է: Ըստ Մայքլ

² Перминова О. И. Сохранность и доступность. Миф или реальность (Из опыта НИЦКД РГБ) // Библиотековедение.-, 2010.- N 6.- С. 37-41.

³ Գրադարանային-տեղեկատվական կրթության համակարգում նոր տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի կիրառման արդի միտումները: Հանրապետ. գիտաժողովի զեկ. Ժողովածու (2014 թ. հունիսի 10) /Կազմող, առաջադրանքի հեղ. և մասնագիտ. խմբագիր՝ Գ. Ա. Սուքիասյան. - Եր.: Էդիթ պրինտ, 2014.- էջ 5-6:

⁴ Payne, G. Re-counting "illiteracy": literacy skills in the sociology of social inequality // The British Journal of Sociology, 2006. Vol. 57, N 2, p. 223.

⁵ Payne, G. The same article, The British Journal of Sociology, 2006. Vol. 57, N 2, pp. 228-229.

Գորմանի՝ ԱՄՆ-ի դպրոցների շատ աշակերտներ այսօրվա պահին էլ սահմանափակվում են՝ «ընթերցել քեզ համար»: Նրա խոսքով՝ «կան միլիոնավոր ամերիկացիներ, ովքեր կարող են կարդալ հայտարարություններ, բայց չեն կարող կարդալ գիրք, կողմնորոշվել լրագրային ծավալուն հոդվածում, կամ գրել համոզիչ հոդված»⁶: Քննարկելով հասարակության մեջ տարածված գրագիտության վերաբերյալ նոր խնդիրներ, ամերիկյան սոցիոլոգներից ու մանկավարժներից շատերը վիճարկելիորեն պնդում են, որ գոյություն չունի «չկա գրագիտություն» հասկացություն, ինչը, մեր կարծիքով, նշանակում է գիտակցաբար հրաժարվել օգտվելու գրագիտության հմտություններից: Մ. Գորմանը այսպես է բնութագրել նմաններին. «Նրանք կարդում են միայն այն, ինչը պետք է կարդալ, բայց ոչ ավելի և, եթե ինչ-որ բան գրում են, ապա ամենաշատը՝ էսեմենտներ»⁷:

Հարկ է նշել, որ «չկա գրագիտությունը» կարդալու հմտությունն է՝ ցանկության բացակայության դեպքում այդ անելու:

Աղբյուրների վերլուծությունը և գիտամանկավարժական մեր փորձը հիմք են տալիս վստահորեն ասել, որ գրագիտության ընդհանուր մակարդակը կախված չէ նաև ինֆորմացիայի ծավալի «մեծացումից կամ փոքրացումից», այլ՝ նրանից, թե տվյալ երկրի բնակչությունը (կամ՝ սոցիալական խումբը, անհատը) ինչպես է վերաբերում տեղեկատվակիր օբյեկտներին (սեպագիր, ձեռագիր, տպագիր, էլեկտրոնային), ինչպես է պատկերացնում գրադարանային-տեղեկատվական և տեխնոլոգիական մշակույթի դերը տեղեկատվական հասարակության զարգացման մեջ⁸: Ինչպես նշել է Ա. Բանդին՝ «Ինֆորմացիայի մեծ քանակությամբ հոսքը դեռ չի նշանակում, որ մարդիկ ավելի են այն արդյունավետ օգտագործել...»⁹, մեր կարծիքով՝ չխորանալով նաև դրանց արժանահավատությունը որոշելու մեջ:

Կարևոր նշանակություն է ստացել օրակարգի հարց դարձած «տեղեկատվական գրագիտության» խնդիրը, որի լուծման գործում մեծ են գրադարանային-տեղեկատվական ոլորտի մասնագետների դերը՝ փաստաթղթային-տեղեկատվական աղբյուրներից օգտվողների պահանջները¹⁰ բավարարելու նպատակով ճշտելու տեղեկատվական աղբյուրի լրիվությունը, պատմականությունը, գիտա-

⁶ Agee, J. Literacy, aliteracy and lifelong learning, New Library World, 2005, Vol. 106, N 1212, p. 249.

⁷ Agee, J. The same article, New Library World, 2005, Vol. 106, N 1212, p. 244.

⁸ Սուքիասյան Գ. Ա., Գրադարանային-տեղեկատվական և տեխնոլոգիական մշակույթը տեղեկատվական հասարակարգի զարգացման մեջ: 8-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու: Եր.: Հայրուսակ համալսարան, 2016.- էջ 85-92:

⁹ Wallis, J. Cyberspace, information literacy and the information society, Library Review, 2005, Vol. 54, N 4, p. 221.

¹⁰ Сукиасян Г. А. Информационные потребности: проблемы развития [Текст]. Молодежь в науке и культуре XXI века: материалы междунар. науч.-творч. форума. 31 окт.-3 нояб. 2016. / Челябин. гос. ин-т культуры; сост. Е.В. Швачко.-Челябинск, 2016. – С. 81-83.

կրթական նշանակությունը, որոնման առանձնահատկությունները: Տեղեկատվահաղորդակցական հարաբերություններում և կազմակերպական այլ գործընթացներում կարևոր է հաշվի առնել մատենագիտական տեղեկատվության հիմնական հասարակական գործառույթները՝ «որոնողական, հաղորդակցական և գնահատողական»¹¹: Օգտվելով էլեկտրոնային-տեխնոլոգիական միջոցներից՝ չպետք է նաև մոռանալ տեղեկատվական գրագիտությանը խթանող մատենագիտության մասին՝ որպես «հավերժական գործընթացի»¹²:

Այդպիսով, միայն բազմակողմանի իմացությամբ գրադարանավարերը կօգնեն ընթերցողներին լրիվացնել ընթերցանության նպատակից պատասխանելու հարցերին այնպես, ինչպես որ նրանք կցանկանան: «Իսկ ո՞վ կարող է դա անել վիրտուալ աշխարհում», - խնդիրն այսպես է դրել Կեյտ Վիտտենբերգը Կոլումբիայի համալսարանից¹³: Ի դեպ, տեղեկատվության ձեռք բերման (որոնման) կապակցությամբ հետաքրքիր հետևության է հանգել «Սերչեր» հանդեսի խմբագիր Բարբարա Կվինտը, ով դեռ 1970-ական թթ. ձևավորված և տեղեկատվության տարածմանը նպաստող «Օնլայն աշխարհի» մասին ասել է. «Մարդիկ կկարողանան բավարարվել առանց գրադարանների, բայց նրանք չեն կարող շրջանցել առանց գրադարանավարների»¹⁴: Մեր կարծիքով այդ համոզմունքը չի փոխվել նաև այսօր, երբ մարդիկ ավելի, քան երբևէ, կարիք ունեն գրադարանավար-մատենագետ մասնագետների: Անհրաժեշտ է ավելացնել, որ ընթերցողների տեղեկատվական պահանջների բավարարումը գրադարանագիտության և մատենագիտության հիմնարար խնդիրներից է, որի լուծման շնորհիվ գրադարանը ապահովում է հասարակական կյանքի կայունությունը:

Բացի վերոնշյալներից, արևմուտքում խոսվում է նաև ընթերցասեր խմբերի աճի մասին, ովքեր գրքի հասարակական-ճանաչողական և կրթադաստիարակչական դերն ու նշանակությունը բարձրացնելու նպատակով հավաքվում և քննարկում են կարդացվելիք գիրքը: Այդ տեսանկյունից ուշագրավ է հեռուստատեսային թոք-շոուի հաղորդավար Օպրա Ուինֆրիի՝ 1996 թ. ԱՄՆ-ում կազմակերպած «Օպրայի գրքերի ակումբի» դերը: Այն գրքասերների շրջանում հայտնի է դառնում նրանով, որ յուրաքանչյուր ամիս կազմակերպված թոք-շոուի քննարկման համար ընտրվում է մեկ գիրք, որի մի մասը արդեն 500 հազար հեռուստադիտողներ կարդացած են լինում: Իսկ Բրիտանիայում ընթերցողական «նման

¹¹ Коршунов О. П. Библиографоведение: Общий курс. Ч. I. Основы теории библиографии. Раздел I. – М., 2001. – 80-85 с.

¹² Боженова Ирина. Библиография – это вечное творчество, Библиотечное дело, 2015, N 17, С. 29-31:

¹³ Wallis, J. Cyberspace, information literacy and the information society /J. Wallis//Library Review. – 2005. – Vol. 54, N 4. – P. 221.

¹⁴ Quint, B. Will libraries vanish?, Information Today, 2012, Vol. 29, N 2, p. 8.

խմբեր» ձևավորվեցին 1997 թվականից: Օրինակ՝ «Օրանժե» ֆիրման, որը զբաղվում էր շարժական հեռախոսների վաճառքով (ինչպես այսօր Հայաստանում), զբաղվում է նաև գրքային տեղեկատվության տարածման գործով: Թեև «Օրանժեի» և գրադարանի (կամ փաստաթղթատեղեկատվական այլ կենտրոնի) գործառույթները խստորեն տարբեր են, սակայն անգլո-ամերիկյան իրականության մեջ գրքերի կարևորումը նման միջոցներով էլ ստանում է լայն տարածում:

Արտասահմանյան գրադարանային գործի պատմությունից իմանում ենք, որ ամերիկյան հանրային գրադարաններում «ակումբային ընթերցանության» զարգացման համար կարևոր դեր է խաղում «Գրադարանային ասոցիացիան»՝ 1982 թ. գործառության մեջ դնելով «Եկեք խոսենք այդ մասին» ծրագիրը («մեկ գիրք-մեկ քաղաք» սկզբունքով): Սիեթլիի հանրային գրադարանի գրքի և ընթերցանության կենտրոնի ղեկավար Նենսի Պերլը ասել է. «Գրադարանային հանրությունը վերջապես գիտակցեց, որ գրադարանների հիմնական խնդիրը ոչ միայն տեղեկատվության մատչելիության ապահովումն է, այլ նրանում, որպեսզի օգնի մարդկանց գտնել ընթերցանության համար լավ գրքեր... գիտակցել տա գրքի և ընթերցանության կարևորությունը գրադարանային աշխարհում»¹⁵:

Համաձայն մեկ այլ օրինակի՝ XXI դարի սկզբներին Նյու Յորքի հանրային գրադարանը դեռահասների համար բացում է կենտրոնական գրադարան՝ տեխնոլոգիական միջոցների բոլոր հնարավորություններով, որոնք, ընթերցանության ճգնաժամը հաղթահարելու փոխարեն, «խոստանում են սպանել ընթերցանությունը»: Բայց, ինչպես մեկ տարի անց վկայել է գրադարանի աշխատակիցը, «դեռահասներին աստիճանաբար սկսել են ձանձրացնել համակարգիչները, կոմպակտ դիսկերը, և միակ բանը, որը նրանց դեռ չի ձանձրացրել՝ գրքերն են»¹⁶: Մեր կարծիքով, այդպիսի մոտեցումը մերժելի է և բացասական ազդեցություն է թողնում ոչ միայն տվյալ երկրի տեղեկատվական և սոցիալ-հաղորդակցական գործընթացների վրա, այլ սկզբունքորեն չի համընկնում ուրիշ երկրների մասնագետների տեսակետներին, գրադարանային-տեղեկատվական գործի «ներառյալ ընթերցանության» ընդհանուր զարգացումներին, ազգային առանձնահատկություններին: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ ի տարբերություն ԱՊՀ երկրների, ԱՄՆ-ում գրադարանային գործի բնագավառում պետական միասնական քաղաքականություն ձևավորող մշակույթի նախարարություն կամ պետական որևէ կառույց բացակայում է: Շատ հարցերում այդ դերն իրականացնում է Ամերիկյան գրադարանային ասոցիացիան (ALA)՝ հիմնված 1876 թ.: ԱՊՀ

¹⁵ Pearl N. Lust for reading, American Libraries, 2005, Vol. 36, N 5, pp. 32-36.

¹⁶ Fialkoff, F. Is reading out?, Library Journal, 2004, Vol.112, N 13, Aug. 15, p. 8.

երկրներում, ներառյալ Հայաստանում ոչ միայն դրանք կան, այլև՝ գործում է «Գրադարանների և գրադարանային գործի մասին օրենքը»¹⁷: Կարծում ենք՝ տարբերությունները խիստ զգալի են երկրների միջև, որոնք էլ առիթ են հանդիսանում բանավեճերի ծագման:

Նկատի առնելով ժամանակակից մարտահրավերները և անդրադառնալով գրադարանի, գրքի և ընթերցանության դերին ու նշանակությանը, ռուս մասնագետներից Դ. Կ. Ռավինսկին ընդգծում է. «Որքան շատ էլեկտրոնային պաշար է ներկայացնում գրադարանը, այնքան առավել արդյունավետ է դառնում գրադարանից օգտվելու ավանդույթը ... Տպագիր և էլեկտրոնային ինֆորմացիաները սպասարկվում են տարբեր ընթերցողների (հատկապես հեռահար ուսուցման դեպքում), բայց նրանցից մեկը չի փոխարինում մյուսին ...»¹⁸: Համաձայն հեղինակի՝ չի էլ կարող փոխարինել. վիճարկելի չէ, օրինակ, այն հսկայական տարբերությունը, որը գոյություն ունի օգտվողի Մատենադարանում լինելու և Մատենադարանի հետ համացանցով հաղորդակցվելու, նրա վերաբերյալ տեղեկություն ստանալու միջև: Կամ մատենագետ-գրքագետի համար միայն համացանցից օգտվելու խնդիրը չէ, այլ բուն գրքի պատմությանը (...) զբաղվելը, ինչը պահանջում է տվյալ տեղեկատվական օբյեկտի հետ հետազոտողի կենդանի հաղորդակցություն՝ անկախ նրանց գտնվելու վայրից ու հեռավորությունից:

Ֆրանսիացի գրող, էսսեիստ և լրագրող Ժան-Ֆիլիպ դը Տոնակը «Հույս չունենաք, թե կազատվեք գրքերից» ժողովածուի նախաբանում գրել է. «Գրավոր խոսքի համատարած թվայնացման, էլեկտրոնային ընթերցանության նորանոր գործիքներից բխող մարտահրավերներին ընդառաջ գրքի լավ ու վատ օրերի այս հիշատակումը թույլ է տալիս մեղմել վերահաս փոխակերպումների ազդեցությունը: Ներկայացվող զրույցները՝ որպես Գուտենբերգի գալակտիկային ուղղված ուրախ ձոն, կհմայեն գիրք կոչվածի բոլոր ընթերցողներին ու սիրահարներին: Չի բացառվում, որ էլեկտրոնային գրքեր նախընտրողների կարոտն էլ արթնանա»¹⁹: Կասկած չկա ասելու, որ գրքի և գրադարանի նկատմամբ «կարոտն» ու վստահությունը քաղաքակիրթ աշխարհի համար անփոխարինելի արժեք են: Բայց այդ արժեքը գիտակցելու և հասարակության գրագիտությունը ընթերցանության

¹⁷ «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքը և որոշումներ: - Եր.: ՀՀ մշակույթի նախարարություն: Հայաստանի ԱԳ, 2013.- 47 էջ:

¹⁸ Равинский Д. К. Библиотека и вызовы XXI века: Монография. – РНБ. – СПб, 2011. – 132 с.

¹⁹ Ժան-Վլոդ Կարիեր, Ումբերտո Էկո. Հույս չունենաք, թե կազատվեք գրքերից: Զրույցներ/Ֆրանս. թարգմ.՝ Ս. Դավթյան - Եր.: Անտարես, 2015 – էջ 13:

միջոցով բարձրացնելու համար՝ որպես զարգացման ռազմավարություն, անհրաժեշտ է «ազգային ծրագիր»²⁰:

Ժամանակակից գրադարանային-տեղեկատվական զարգացումները, սակայն, ցույց են տալիս, որ գլոբալ մարտահրավերների առաջ են կանգնել բուն տեխնոլոգիական միջոցները՝ համակարգիչները, որոնցում օրեցօր աճող կիբեր-հարձակումները (վերաճելով կիբերպատերազմների) պատճառ են դարձել բազմաթիվ և բազմազան տեղեկատվական աղբյուրների ոչնչացման: Համաձայն մեդիա լրատվամիջոցների («< 1», մայիսի 15 և 16, 2017 թ.) մայիսի 12-13-ին աշխարհի համարյա բոլոր տեխնոլոգիական համակարգերը ենթարկվեցին կիբեր-հարձակման:

Համաշխարհային կիբերհարձակման հետևանքով մոտ 1000 համակարգիչ էլ նույն վիրուսով վարակվել է Հայաստանում²¹:

Ակնհայտ է, որ տեխնոլոգիական (վիրտուալ) միջավայրում, տեղեկատվական աղբյուրների անվտանգության ապահովումը և հեղինակային իրավունքի խախտումները դառնում են անկառավարելի՝ հարցականի տակ դնելով մասնավորապես գիտակրթական նպատակներով համացանցից²² օգտվելու հիմնախնդիրը: Իսկ գրքի՝ որպես ընթերցանության օբյեկտի և գրադարանի՝ որպես սոցիալական ինստիտուտի նկատմամբ վստահությունը մեծանում են ավելի: Գրքի ուժը անսահման մեծ է: Առանց **ԳՐՔԻ** անհնար է անգամ պատկերացնել կրոնական և քաղաքական գործիչների երդման արարողությունները:

Հետևություններ.

Աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ հոդվածում քննարկվող խնդիրների շուրջ առկա են տարբեր մոտեցումներ: Փաստորեն ընթերցանության օբյեկտների ընտրության և օգտվողների տեղեկատվական պահանջները բավարարելու հարցերը դիտարկվում են առանձին-առանձին, որոնք գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական տեսանկյուններից վիճարկելի են: Նկատվում է գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական գործառույթների սահմանների «սահմանափակում», ինչը տեսականորեն անընդունելի է:

²⁰ Сметанникова Н. Н. Чтение, грамотность, читательская компетентность: стратегия развития, Библиотековедение, 2017, Т. 66, N 1, С. 41-48.

²¹ Գլոբալ կիբերգրոհից Հայաստանում վիրուսով վարակվել է մոտ 1000 համակարգիչ, Հայաստանի Հանրապետություն, 2017, թ. 88, 17 մայիսի, էջ 4:

²² **Համացանց** կամ **damnatio memoriae** – Հիշողության նզովք (լատ.): Հետմահու պատժի ձև, որը Հին Հռոմում կիրառվում էր պետական հանցագործի նկատմամբ: Նրա գոյության ամեն մի վկայություն ոչնչացվում էր հիշատակն իսպառ ջնջելու համար: Տես՝ 4, էջ 219:

Որպեսզի ժամանակակից գրադարանային-տեղեկատվական ու տեխնոլոգիական գործընթացներում արհեստական մեկուսացման մեջ չհայտնվեն հումանիտար զարգացումները, անհրաժեշտ է հաշվի առնել գիտության և պրակտիկայի փոխադարձ կապը, ընթերցողների տարիքային, հաղորդակցական և ազգային առանձնահատկությունները:

Համաշխարհային ինտեգրացիոն գործընթացներում բացասական հետևանքներից խուսափելու համար պետք է կատարել մեթոդների ճիշտ ընտրություն, ցուցաբերել վերլուծական կարողություններ, նպաստել տեղեկատվական դաշտի և հասարակության գրագիտության բարելավմանը: Ըստ էության՝ կարևորելով Կապլանի և Վիտտենբերգի առաջ քաշած հարցերի իմաստաբանական նշանակությունն ու բանավեճային էությունը, տրամաբանական է համակարգիչների դեպքում այլևս կիրառել՝ «Օգտվել, թե՛ չօգտվել» արտահայտությունը: Հստակ է սակայն, որքան որ մեծանում է տեխնոլոգիական տեղեկատվության արագ տարածման գործոնի դերը, նույնքան և ավելի մեծանում են այն ամենի գինը, որոնք գտնվում են տեխնոլոգիաների սահմաններից դուրս, ինչպիսիք՝ գրքերն են:

XXI դարի մարտահրավերներում մշակութային արժեքները փրկելու, տեղեկատվության անվտանգության ու գրադարանների հասարակական դերը էլ ավելի բարձրացնելու համար անհրաժեշտ է կիրառել համապատասխան միասնական պայքար, ձգտել գրադարանային-տեղեկատվական գործի և հեղինակային իրավունքի մասին օրենքները լրջորեն պահպանելուն:

SUMMARY

As a result of the research, it became clear that the global changes taking place in the modern world put not only library and information systems, but also electronic and technological systems, in front of new development challenges. A comparative study of sources shows that the problems discussed in the article do not have a single (common) solution, and approaches are controversial.

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԿԱԸ

(կազմման սկզբունքներն ու չափորոշիչները)

Բանալի բառեր՝ գրադարան, մատենագիտություն, պատմություն, չափորոշիչները, սկզբունքները, տեսակներ:

Keywords. library, bibliography, history, standards, principles, types.

Մատենագիտությունը գրքերի, պարբերականների, հոդվածների, տպագիր կամ ձեռագիր նյութերի համահավաք ցուցակն է: Գործածվում է նաև բիբլիոգրաֆիա տերմինը: Նախապես նշանակել է ձեռագիր արտագրող, ընդօրինակող կամ գրիչ: 17-րդ դարից եվրոպական լեզուներում այն ստացել է այժմյան իմաստը՝ ոչ թե գիրք արտագրող, այլ գիրք նկարագրող, գրքերի ուղեցույց կամ ցուցակի կազմում: 5-րդ դարում հայ իրականության մեջ գործածվել է մատենագետ ձևը, որը նշանակել է «գիտակ մատենից եւ դպրութեան»:

Մատենագիտություն տերմինը գիտականորեն կյանքի է կոչվել 19-րդ դարում: Այն յուրաքանչյուր գիտության հիմքն է, քանի որ ունի աղբյուրագիտական արժեք: Ըստ Հ. Կոստիկյանի՝ «Մատենագիտությունն ինքը գիտության մի յուրահատուկ բնագավառ է՝ կապված գիտությունների բոլոր բնագավառների հետ»²:

Մատենագիտության մեջ կարևորվում են հետևյալ տարրերը.

1. Փաստի արձանագրում առանց կողմնապահության: Վերլուծական տարրն այստեղ հասցված է նվազագույն աստիճանի, քանի որ մատենագետի խնդիրն է նյութը նկարագրել այնպես, ինչպես այն կա, ինչպես այն տեսնում է՝ վերլուծությունը թողնելով համապատասխան բնագավառի մասնագետներին:

2. Տպագիր նյութի հաշվառում և մշակում:

3. Հաշվառված տպագիր նյութի գիտական դասակարգում գիտության տարբեր բնագավառներին և այլ չափորոշիչներին համապատասխան:

4. Գրքի բովանդակության, գաղափարական և գիտական առանձնահատկությունների բացահայտում:

5. Մատենագիտական նկարագրության չափորոշիչների սահմանում և կիրառում:

¹Անվանման մասին առավել մանրամասն տե՛ս Իշխանյան Ռ. Հայ մատենագիտության պատմություն: Պրակ Բ.- Ե., 1968.- էջ 4; Ավետիքեան Գաբրիել: Նոր բառգիրք հայկազեան լեզուի: Հատոր երկրորդ.- Վենետիկ, 1837.- էջ 213; Մատենագիտություն հայկական մատենագիտության.- Ե., 1963.- էջ 27-30:

²Կոստիկյան Հ. Մատենագիտության հիմունքները.- Ե., 1968.- էջ 4:

Մատենագիտության պատմական զարգացման ընթացքը զուգահեռում են հայ գրի և գրականության մշակույթի պատմությանը՝ ընդգծելով, որ 5-րդ դարից սկսած պատմիչների երկերում արդեն իսկ ակնհայտ են մատենագիտական տարրեր³: Սակայն պետք է տարանջատել մատենագիտություն և մատենագրություն տերմինները, նաև ընդգծել, որ մատենագիտությունը որպես գիտական ուղղություն ձևավորվել է ավելի ուշ՝ 19-րդ դարում:

Պատմական զարգացման տարբեր փուլերից հետո հայ մատենագիտության զարգացումը որակական նոր փուլ է թևակոխում խորհրդային շրջանում⁴: Դա պայմանավորված էր հետևյալ գործոններով.

1. Մատենագիտական աշխատանքը դառնում է պետական գործ:
2. Մատենագիտությամբ սկսում են զբաղվելը կոնկրետ մասնագիտացված կառույցներ:
3. Աշխատանքները կոնկրետանում են բուն Հայաստանում:
4. Մատենագիտությունը դառնում է մասնագիտություն:
5. Զարգանում է հրատարակչական աշխատանքը:

Այսօր մատենագիտական կենտրոններ են Հայաստանի ազգային գրադարանը և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը: Մինչև 2017 թ. մատենագիտական կենտրոն էր նաև Հայաստանի ազգային գրապալատը, սակայն 2017 թ. ՀՀ կառավարության որոշմամբ այն իր գործառույթներով միացավ Հայաստանի ազգային գրադարանին⁵: Երկու կառույցներն աշխատում են համատեղ՝ զուգադրելով և համատեղելով կատարվող և կատարվելիք աշխատանքները՝ կրկնություններից խուսափելու նպատակով: Մատենագիտական որոշ աշխատանքներ իրականացվում են նաև Երևանի պետական համալսարանի գրադարանում, Մատենադարանում, ինչպես նաև Սփյուռքում, սակայն այդ աշխատանքները մասնակի դրսևորումներով են արտացոլվում: Մինչդեռ Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության և գրադարանագիտության բաժինը հետևողականորեն իրականացնում է գործառույթները մատենագիտության զարգացման արդի պահանջներին համապատասխան:

Մատենագիտության տեսակներն արդի շրջանում (1991-2017 թթ.):

Մատենագիտության մեջ առանձնացնում են որոշ հասկացություններ, որոնք տեսականորեն և գործնականորեն կարևոր են աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար: Այդ հասկացություններից են մատենագիտության տեսակը և մատենագի-

³Օրինակ՝ Մովսես Խորենացին իր Պատմության մեջ թվարկում է այն աղբյուրները, որոնցից ինքը օգտվել է իր աշխատությունը գրելիս: Սա ինքնին հակիրճ մատենագիտական ցանկ է:

⁴Մատենագիտության զարգացման այս շրջանը լավագույնս նկարագրված է Ռ. Իշխանյանի գրքում: Տես Իշխանյան Ռ. Հայ մատենագիտության պատմություն: Պրակ Գ.- Ե., 1966.- 310 էջ:

⁵Տես ՀՀ կառավարության որոշում: 24 նոյեմբերի 2016 թ. N 1204-Ն:

տական նկարագրությունը⁶: Ներկայացնենք մատենագիտության՝ արդի շրջանում կիրառելի տեսակները:

1. Հաշվառման-գրանցային մատենագիտություն: Մատենագիտության այս տեսակը ենթադրում է տպագիր նյութի գրանցում և նրա մասին տեղեկատվության տրամադրում ընթերցողին: Սա համընդհանուր բնույթի մատենագիտությունն է, քանի որ ընդգրկում է գիտության և մշակույթի բոլոր ճյուղերին առնչվող տպագիր նյութերը բոլոր հնարավոր լեզուներով: Այստեղ կարևորվում է ճիշտ նկարագրության տարրը. Վերլուծական նկարագրությունն անհրաժեշտ պայմանն է: Մատենագիտության այս տեսակը հիմնականում օգտագործվում էր ՀՀ ազգային գրապալատում, օգտագործվում է նաև այն խոշոր գրադարաններում, որոնք համալրվում են տարաբնույթ գրականությամբ:

4. Ընդհանուր մատենագիտություն: Մատենագիտության այս տեսակն ընդգրկում է գիտության և մշակույթի բոլոր ճյուղերը: Այն հնարավորություն է տալիս հետևել նոր նյութերի տպագրմանը՝ համալրելու գրադարանային հավաքածուները: Ընդհանուր մատենագիտությունը ճյուղային մատենագիտության հիմքն է, քանի որ ապահովում է տպագիր երկերի առավել ամբողջական հաշվառումը: Այսօր ընդհանուր մատենագիտության լավագույն նմուշներն են «Հայ տպագրության տարեգիրը», որը լույս է տեսնում 12 համարով և «Նոր գրքեր» հայերեն ու օտարալեզու ցանկերը, որոնք ներկայացնում են Հայաստանի ազգային գրադարան մուտք գործած գրքերի ամբողջական պատկերը: Հայաստանի ազգային գրադարանին տրվում է տպագիր նյութի պարտադիր օրինակը, այսօր արդեն գրադարանն է տալիս տպագիր նյութի միջազգային ստանդարտ համարը: Այս երկու գործոնները բավական են՝ նշելու համար, որ Հայաստանի ազգային գրադարանը ստանում է տպագիր նյութի առավել ամբողջական փաթեթը:

6. Ընթացիկ մատենագիտություն: Այն նոր լույս տեսած գրականության մատենագիտությունն է, որը հաշվի է առնում ընթացիկ տպագիր գրականությունը՝ շաբաթվա կամ ամսվա տվյալներով: Այն պետք է լինի պարբերաբար և կանոնավոր, այլապես կդադարի լինել ընթացիկ մատենագիտություն: Այսօր մատենագիտության այս տեսակի օրինակն է «Հայ տպագրության տարեգիրը»:

7. Հետադարձ մատենագիտություն: Մատենագիտության այս տեսակը ներառում է նախկինում լույս տեսած գրականությունը: Հետադարձ բնույթի մատենագիտության օրինակ է «Հայ թարգմանական գրականություն: 1920-2010» մատենագիտության երկու հատորները, որոնք տպագրվել է Ազգային գրապալատը

⁶Թեման ավելի ընդարձակ ներկայացված է Հ. Կոստիկյանի գրքում: Տես Կոստիկյան Հ., Մատենագիտության հիմունքները.- Ե., 1968.- 422 էջ:

2013-2014 թթ.: Այսօր Հայաստանի ազգային գրադարանում ընթացքի մեջ է գրքի երրորդ հատորը, որը ներառելու է 2011-2015 թվականներն ընկած ժամանակահատվածը:

8. Կենսամատենագիտություն: Մատենագիտության այս տեսակը ենթադրում է կենսագրական և մատենագիտական տվյալների զուգակցում: Կարելի է կոչել նաև անհատական: Այն այսօր լայնորեն կիրառվում է գրադարաններում, կազմվում են բազմաթիվ կենսամատենագիտություններ:

9. Երկրագիտական մատենագիտություն: Մատենագիտության այս տեսակի խնդիրն է ներկայացնել տվյալ երկրի բնական և մշակութային հարստությունը: Մատենագիտության հիմքը գրադարաններում համալրվող երկրագիտական քարտանքներն են, որոնք պարունակում են հարուստ տեղեկատվություն գիտության, մշակույթի ամենատարբեր բնագավառների, հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ: Յուրաքանչյուր մատենագիտություն կազմելիս այս քարտանքները լավագույն հիմքն են հանդիսանում: Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժնում երկրագիտական քարտանքները համալրվել են մինչև 2013 թ., իսկ դրանից հետո ստեղծվել է «Մամուլի հոդվածներ» շտեմարանը, ուր նյութերի նկարագրությունները ներառվում են էլեկտրոնային ձևաչափով: Մատենագիտության այս տեսակը կոչվում է նաև թեմատիկ մատենագիտություն:

Մատենագիտության կազմման սկզբունքներն արդի շրջանում (1991-2017 թթ.):

Մատենագիտություն ունի կազմման իր սկզբունքները, որոնք պետք է հստակեցվեն, այլապես համակարգված աշխատանք չի կարող լինել: Ցանկացած մատենագիտություն կազմելիս անհրաժեշտ է՝

ա. նպատակի սահմանում

Յուրաքանչյուր մատենագիտություն նվիրվում է որևէ անհատի կամ իրադարձության: Նպատակը կարևոր է աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար:

բ. բովանդակության ճշգրտում

Նպատակի ձևավորումից բխում է մատենագիտության բովանդակությունը: Այն ներառում է թեմային առնչվող ամբողջ տեղեկատվությունը՝ տպագիր նյութի բոլոր տեսակների ընդգրկումով:

գ. նյութի ժամանակագրական դասավորության պահպանում

18-19-րդ դարում ժամանակագրական դասավորությունը չի պահպանվել: Նյութերը դասավորվել են այբբենական կարգով կամ խառը: 20-21-րդ դարերում ժամանակագրական դասավորությունն առաջնային է մատենագիտության կազմման

Ժամանակ: Այն հնարավորություն է տալիս լայն տեսադաշտով ներկայացնել նյութը՝ նշելով մատենագիտության կազմման սկիզբը և ավարտը:

դ. այբբենական դասավորության պահպանում

Այբբենական դասավորությունը մատենագիտության կազմման հիմքն է: Ինչպես նշեցինք, 19-20-րդ դարերում մատենագիտական ցանկերն ունեին հիմնականում այբբենական դասավորություն: Այսօր էլ կազմվում են նմանատիպ ցանկեր: Լավագույն օրինակը՝ «Լիբանանահայ գիրքը 1894-2012 թթ» (Պեյրուֆ, 2013 թ.) մատենագիտությունն է: Այբբենական կարգը պետք է խստորեն պահպանել անգամ ժամանակագրական դասավորության դեպքում: Յուրաքանչյուր տարեթվի ներսում նյութերը դասավորվում են խիստ այբբենական կարգով:

ե. նախընտրելի գրականության ցանկի սահմանում

Գրականության ընտրությունը լիարժեք լինել չի կարող, քանի որ մատենագիտական որոնումների և ներգրքային ցանկերի ուսումնասիրության արդյունքում ի հայտ են գալիս նոր մատենագիտական աղբյուրներ: Գրականության ցանկի ձևավորման հիմքը գրադարանի քարտարաններն են և ներգրքային մատենագիտական ցանկերը:

զ. մատենագիտական նկարագրության ձևաչափի սահմանում:

Մատենագիտական նկարագրության ձևաչափը միշտ սահմանվում է համապատասխան նկարագրության ընդունված չափորոշիչների⁷:

Մատենագիտության կառուցվածքը

Պահպանելով այս հիմնական սկզբունքները՝ յուրաքանչյուր մատենագետ ստեղծում է իր մատենագիտության կառուցվածքը, որը միշտ բաղկացած է լինում առաջաբանից, բուն մատենագիտությունից, օժանդակ ցանկերից:

Առաջաբանում հստակ սահմանվում են մատենագիտության խնդիրները, թեմայի պահանջված և կարևոր լինելը, նպատակը, բովանդակության հակիրճ նկարագրությունը, կառուցվածքը, նյութերի դասավորության սկզբունքները: Բուն մատենագիտության մեջ ներառվում են բոլոր մատենագիտական նկարագրությունները՝ համապատասխան դասավորությամբ, իսկ օժանդակ ցանկերը կազմվում են՝ նյութը որոնելի դարձնելու նպատակով: Օժանդակ ցանկի յուրաքանչյուր նկարագրության դիմաց տրվում է մատենագիտական նկարագրության հերթական համարը: Այսօր կազմվում են հետևյալ օժանդակ ցանկերը՝

1. Հապավումների ցանկ

Ներառում է օգտագործված տերմինների հապավումները, որոնց կողքին նշվում են հապավումների լիարժեք տարբերակները:

⁷Այս մասին ավելի մանրամասն կխոսենք Բ. ենթագլխում:

2. Անձնանունների ցանկ

Ներառում է մատենագիտության մեջ տեղ գտած բոլոր անձնանունները (նաև՝ ռուսերեն և այլալեզու բնագրերից հանվածները), բացառությամբ այն անունների, որոնք բացահայտված են հապավումների և համառոտագրությունների ցանկում: Յուրաքանչյուր անձնանվան մոտ նշված է նրա առնչության բնույթը գրքի ստեղծման կամ տպագրության հետ (հեղինակ, հրատարակիչ, թարգմանիչ, խմբագիր, նկարիչ-ձևավորող և այլն), ապա այն նկարագրության հերթական համարը կամ համարները, որտեղ հիշատակված է տվյալ անունը: Տպագրիչների անվան դիմաց հղիչ է տրվում՝ «Տե՛ս տպագրության վայրերի և տպարանների ցանկ», ապա նշվում է այն քաղաքի անունը, որտեղ գործել է այդ տպարանը: Անձնանունների ցանկում ուղղագրությունը պահպանվում է նույնությամբ (ինչպես գրքում է):

3. Վերնագրերի ցանկ

Ներառվում են մատենագիտության մեջ տեղ գտած գրքերի վերնագրերը, ինչպես նաև այն վերնագրերը, որոնք այս կամ այն հրատարակության հավելված են կազմում: Որոշ վերնագրերին կից մատենագիտության մեջ կան ենթավերնագրեր, որոնք վերնագրի արժեք ունեն և որոնք նույնպես ներառված են վերնագրային ցանկում: Վերնագրերը նկարագրվում են ըստ գրքերի տիտղոսաթերթերի, սակայն պատահում է, որ միևնույն գիրքը տիտղոսաթերթից բացի ունենում է նաև կրճատ՝ ավելի ճանաչված վերնագիր, որը երբեմն միանգամայն տարբեր է տիտղոսաթերթի վերնագրից: Նման պարագայում ցանկում բերված է գրքի կրճատ՝ ընդունված վերնագիրը, որից հղիչ է տրված դեպի տիտղոսաթերթում նշված վերնագիրը: Վերնագրերի ուղղագրությունը, կետադրությունը, մեծատառերի գրությունը, նույնիսկ սխալները պահպանվում են նույնությամբ (ինչպես տվյալ գրքում է): Վերնագրերը դասավորվում են այբբենական կարգով: Յուրաքանչյուր վերնագրի դիմաց նշվում է այն նկարագրության հերթական համարը, որում հիշատակված է այդ վերնագիրը:

4. Տպագրության վայրերի և տպարանների ցանկ

Ներառվում են տպագրության վայրերն ըստ այբբենական դասավորության, որոնց ներքո նշված են այնտեղ գործած տպարանների անունները: Յուրաքանչյուր տպարանի անվան դիմաց գրված են այդ տպարանում հրատարակված գրքերի նկարագրության համարները: Տպագրավայրերի անունները նշվում են ժամանակակից ուղղագրությամբ: Եթե գրքում նշված է տպագրավայրի հին անունը, նորի մոտ այն գրվում է փակագծերի մեջ, օր.՝ Բուխարեստ (Պուքրեշ), Փարիզ (Պարիզ, Պարիս), Կահիրե (Գահիրե):

5. Նյութերի առարկայական ցանկ

Ներառվում են նյութերի առարկայական խորագրերը՝ նշելով տվյալ նյութին վերաբերող նկարագրության հերթական համարը: Երբեմն ընդհանուր առարկայական խորագրի ներքո տարբեր անուններով հրատարակված կամ ավելի կոնկրետ ճյուղին պատկանող գրքեր, որոնք բովանդակությամբ նույնական են կամ մոտ են իրար: Խորագրերը կազմվում են նոր ուղղագրությամբ և ունեն այբբենական դասավորություն:

6. Մատենաշարերի ցանկ

Ներառվում են մատենաշարերի անունները, որոնց կողքին նշվում է մատենաշարով հրատարակված տվյալ գրքի նկարագրության հերթական համարը: Երբեմն նույն մատենաշարը տպագրվել է տարբեր ուղղագրությամբ և որոշակի փոփոխություններով: Ցանկում այդ փոփոխություններն արձանագրվում են: Մատենաշարերի անունները կազմվում են այն ուղղագրությամբ, ինչպես տպագրվել են գրքում և ունեն այբբենական դասավորություն:

Նյութի մատենագիտական նկարագրության չափորոշիչները⁸

Յուրաքանչյուր մատենագիտական նկարագրություն ստեղծվում է որոշակի չափորոշիչներին համապատասխան: 19-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբ մատենագիտությանը նկարագրության կոնկրետ պահանջներ չեն առաջադրվել: Մատենագիտությունը կազմվել է կազմողի անհատական մոտեցմամբ: 1921 թվականից հետո, երբ մատենագիտական աշխատանքներին տրվեց կանոնակարգված մոտեցում, միասնական դարձան նաև նկարագրության կանոնները բոլոր գրադարանների համար: Խորհրդային շրջանում նյութի նկարագրության չափորոշիչները նախ առանձնացվեցին ըստ խոշոր և ոչ մեծ գրադարանների⁹: Այդ չափորոշիչները հայկական գրադարանների համար մատչելի դարձնելու նպատակով 1953 թ. տպագրվում է կանոնների առանձին գիրք¹⁰: Այն կազմված էր հայերեն հրատարակությունների հենքի վրա՝ հայ գրականության և լեզվի հատկություններին համապատասխան: Գրքում սահմանվում են նկարագրության միասնական լինելու պահանջները, գրքի նկարագրության աղբյուրները և տարրերը, կրճատումները, ուղղագրությունը: Առանձնացվում էին պարբերական և շարունակվող հրատարակությունների, ինչպես նաև վերլուծական նկարագրությունների չափորոշիչները:

⁸Մագիստրոսական թեզի սահմանափակ ծավալի սահմաններում հնարավոր չէ ներկայացնել մատենագիտական նկարագրության չափորոշիչների մանրամասները, այդ պատճառով նշելու ենք միայն ընդհանուր դրույթները:

⁹Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոնները խոշոր գրադարանների համար տես Единые правила по описанию произведений печати для библиотечных каталогов. Выпуск 1-2.- М., 1949.- 334, 49 с., իսկ ոչ մեծ գրադարանների համար տես Единые правила описания произведений печати для каталогов небольших библиотек и библиографических указателей.- М., 1953.- 176 с.

¹⁰Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ ոչ մեծ գրադարանների կատալոգների և բիբլիոգրաֆիական ցանկերի համար.- Ե., 1955.- 237 էջ:

Ձեռնարկը լայնորեն կիրառվում է հայ իրականության մեջ և ընդունվում որպես հիմք¹¹:

1983 թ. Խնկո Ապոր անվան գրադարանը տպագրում է նոր ձեռնարկ՝ մատենագիտական նկարագրությունն ավելի մատչելի դարձնելու նպատակով¹²: ԽՍՀՄ ստանդարտների պետական կոմիտեի կողմից մշակված ԳՕՍՏ 7.1-76 ստանդարտը՝ «Система информационно-библиографической документации. Библиографическое описание произведений печати», շարունակում էր մնալ հիմնական փաստաթուղթ, պարզապես ներառված ոչ բոլոր հատվածներն էին կիրառվում հայ իրականության մեջ: 1986 թվականից ԳՕՍՏ 7.1-76 ստանդարտին փոխարինում է ԳՕՍՏ 7.1-84 ստանդարտը՝ Библиографическое описание документа. Общие требования и правила составления (с дополнениями и изменениями) ¹³: Գրքույկի նպատակը ստանդարտի առավել կիրառելի հատվածները գրադարաններին հասանելի դարձնելն էր:

1991 թ. Հայաստանի ազգային գրադարանը մատենագետներին և գրադարանավարներին մատուցում է կանոնների մեքենագիր մի տարբերակ, որը ընդունված ստանդարտի հայերեն փոխադրումն էր¹⁴, հարմարեցված հայկական գրադարանների պահանջներին: 2007 թ. Մոսկվայում տպագրվում է Ի. Սավինայի ձեռնարկը¹⁵, որը տարաբնույթ տպագիր նյութերի մատենագիտական նկարագրությունների օրինակների ամբողջություն է: Գիրքը ներկայացնում է ԳՕՍՏ 71-2003 ստանդարտը, որը լայնորեն կիրառվում է Ռուսաստանի գրադարաններում 2003 թվականից¹⁶:

Վերը նշված բոլոր ձեռնարկների հիմքում ընկած էր ԳՕՍՏ ստանդարտը: Մատենագիտական բոլոր նկարագրություններն արվում էին այդ չափորոշիչներով: Այսօր էլ թղթային նկարագրությունների դեպքում հենվում են այս չափորոշիչների վրա: Սակայն գրադարանային ոլորտի ավտոմատացման և թվային պաշարների ստեղծման ծավալուն աշխատանքներին ընդառաջ ձևավորվում է «մեքենաընթեռնելի քարտագրում» արտահայտությունը կամ այլ կերպ՝ MARC (Մարկ) ֆորմատը¹⁷: Այն հնարավորություն է ընձեռում մատենագիտական տվյալները համապատասխան ֆորմատով մուտք անել համակարգիչ, ստեղծել շտեմարաններ, որոնք ընթեռնելի ու հասանելի կլինեն բոլորին: Այդ շտեմարանները հնարավոր է արտածել, արտագրել

¹¹1955 թ. տպագրվում է առանձին գրքույկ, ուր ներառվում են լրացումներն ու փոփոխությունները: Տես Լրացումներ և փոփոխություններ Ա. Ս. Բաբայանի «Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոնների» մեջ, Ե., 1955 թ.- Ե., 1969.-23 էջ:

¹²Տես Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ (Մեթոդական հանձնարարական).- Ե., 1983.- 71 էջ:

¹³<http://rudiplom.ru/arc/help/gosty/gost7.1-84.pdf>

¹⁴Տես Մատենագիտական նկարագրության կազմման համառոտ կանոններ.- Ե., 1991.- 319 էջ:

¹⁵Савина И.А. Методика библиографического описания. практическое пособие.- М., 2007.- 144 с.

¹⁶file:///C:/Users/Home/Downloads/7_1_2003.pdf

¹⁷Թեմային մանրամասն ծանոթանալու համար տես Զարգայան Տիգրան, Թվային գրադարանների.-Ե., 2002.- էջ 114-129:

տարբեր սարքերի վրա՝ ապահովելով միջմեքենայական հաղորդում: Մեքենաընթեռնելի քարտագրումը ապահովում է.

- ա. միջմեքենայական փոխանակում
- բ. նյութական միջոցների խնայում
- գ. քարտագրման որակի բարձրացում
- դ. գրադարանային կոմերցիոն փաթեթների օգտագործվում
- ե. ավտոմատացման համակարգի բարելավում և զարգացում

ՅՈՒՆԻՄԱՐԿ-ում մատենագիտական գրառման դաշտերը բաժանված են նկարագրության տարբեր խմբերի միջև՝ 0-9: Յուրաքանչյուր դաշտ նախատեսված է նկարագրության որոշակի հատվածի համար:

0xx - թվերի դաշտ, օգնում է տարբերել գրառումները

1xx - հեղինակային նկարագրության դաշտ

2xx - վերնագրային նկարագրության դաշտ

3xx - ծանոթությունների դաշտ, առանձնացվում են էջերը, նկարները, քարտեզները, գրքի ֆիզիկական չափերը

4xx - մատենաշարերի նկարագրության դաշտ

5xx - ծանոթագրությունների դաշտ

6xx - խորագրերի դաշտ

7xx - գրքերի պատասխանատուների նկարագրության դաշտ

8xx - միջազգային օգտագործման դաշտ

9xx - ազգային օգտագործման դաշտ

Այս դաշտերում տվյալների մուտքագրման ժամանակ շատ կարևոր է համապատասխան նշանների կիրառումն ու պահպանումը, այլապես մատենագիտական նկարագրությունը կդառնա անընթեռնելի:

Հայաստանի ազգային գրադարանում այսօր կիրառվում է ԴՕՏ ստանդարտը՝ թղթային մատենագիտական նկարագրությունների համար և MARC ֆորմատը՝ էլեկտրոնային շտեմարանների ստեղծման համար: Դանդաղորեն MARC ֆորմատը դառնում է գերիշխող նաև թղթային մատենագիտական նկարագրությունների դեպքում:

Նշենք նաև, որ 2000 թվականից Ռուսաստանի պետական գրադարանի, Գիտատեխնիկական լրատվության համառուսաստանյան ինստիտուտի ջանքերով ընդունվում է ԳՕՍ 7.0-99 СИБИД միջպետական ստանդարտը՝ Межгосударственный стандарт. Система стандартов по информации, библиотечному и издательскому делу¹⁸, որը սահմանում է գրադարանային գործում և մատենագիտության բնագավա-

¹⁸<http://docs.cntd.ru/document/gost-7-0-99>

ռում տեղեկատվության փոխանցման և մատենագիտական նկարագրության հստակ պայմաններ և պահանջները:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության գրադարաններում մատենագիտական նկարագրության միասնական կանոններն այսօր չեն պահպանվում: Յուրաքանչյուր գրադարան ինքն է սահմանում այդ կանոնները և ստեղծում իր քարտարանները: Բաց է մեթոդական վերահսկողության դաշտը: Արդյունքում ստեղծվում են սխալ մատենագիտական նկարագրություններ, նույն տպագիր նյութն ունենում է նկարագրության տարբեր ձևեր: Այսօր հրատապ է միասնական կանոնների մշակումն ու տարածումը: Այստեղ կարևոր է Հայաստանի ազգային գրադարանի՝ որպես մատենագիտական խոշոր կենտրոնի դիրքորոշումը: Անհրաժեշտ է, որ գրադարանը՝

ա. մշակի մատենագիտական նկարագրության միասնական կանոններ՝ համատեղելով վերը թվարկված հայտնի ստանդարտների առավել կիրառելի և միջազգային հանրության կողմից ընդունելի տարբերակները,

բ. մշակված կանոնները տարածի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր գրադարաններին՝ նպաստելով միասնական դաշտի ստեղծմանը,

գ. հետամուտ լինի նկարագրության միասնական կանոնների կիրառմանը,

դ. պարբերաբար հրատարակի ուղեցույցներ, որոնք հանրությանը կտեղեկացնեն կատարված փոփոխությունների մասին:

SUMMARY

National Library of Armenia is the main center in Republic of Armenia in charge for creation of national bibliographies. In the article the history of bibliographic work and structure of bibliographic lists is provided.

ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԻՆԵ

*ՀՊՄՀ Թանգարանագիտության,
գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն*

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆԱՀԻՏ

*ՀՊՄՀ Թանգարանագիտության,
գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ
ՀԱՅԵՐԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ԳՐՔԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ, ԱՅԲԲԵՆԱԿԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ
1801-1900 ԹԹ.**

Սկիզբը նախորդ համարում

- 249. Բոկ.** Գործնական խրատներ երեխաների մտավորական և ֆիզիկական կրթության համար տանը և ուսումնարանում.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1876.- 76 էջ:
- 250. Եվտուշևսկի Պ.** Ժողովածու թվաբանական խնդիրների տարրական և միջնակարգ ուսումնարանների համար: II մաս. կոտորակներ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1876.- 130, 19 էջ:
- 251. Երեցփոխյան Գ.** Բառարան ի ռուսաց լեզվե ի հայ.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1876.- 922 էջ:
- 252. Երզնկյան Ե.** Հայկական ձայնագրության դասագիրք: Հտ. Ա.- Թիֆլիս: 1876.- 80 էջ:
- 253. Ղուկասյան Հ.** Դասագիրք ընթերցանության հայոց դպրոցների համար.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1876.- 175 էջ:
- 254. Մանդիկյան Ս.** Ուսման նախագիծ ազգային ուսումնարանների համար.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1876.- 87 էջ:
- 255. Սունդուկյան Գ.** Պեպո.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1876.- 130, 123 էջ:
- 256. Տեր-Հակոբյան Ն.** Ընթերցարան: Մաս 1-ին. Ընտանեկան կյանք.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1876.- 88 էջ:
- 257. Փիլոյան Ս.** Համառոտ սովերք հայրենյաց գործքերի վրա.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1876.- 53 էջ:
- 258. Քաթանյան Պ.** Փոքրիկ Հենրիկոսի պատմություն: Գիրք 1.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1876.- 98 էջ:
- 259. Օրացույց** 1877 թվականին Քրիստոսի և Ազգիս Հայոց ՌՅԻՁ - 1326.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1876.- 60 էջ:

- 260. Աբովյան Գ.** Համառոտություն հայոց ազգի պատմության.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 265 էջ:
- 261. Աղունակյան.** Խաչակիր օրացույց 1877 թվականին Քրիստոսի.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1877.- 112 էջ:
- 262. Աշխատություն** և հանգիստ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 39 էջ:
- 263. Երիցյան Ա.** Ներսես եպիսկոպոսը Դանիել կաթողիկոսի ժամանակ.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1877.- 36 էջ:
- 264. Երիցյան Ա.** Ներսես V Աշտարակեցին վարդապետ ժամանակ.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1877.- 65 էջ:
- 265. Երիցյան Ա.** Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1877.- 28 էջ:
- 266. Լիսիցյան Վ.** Հայկական նշանագրեր: Ա տետր.- Թիֆլիս: Տպարան Յակշատի, 1877°:
- 267. Խրիմյան Հ.** Վանգոյժ: Կուժ մի ջուր առ իմ այրած հայրենիք.- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1877.- 15 էջ:
- 268. Կանոնադրություն** Ներսիսյան ազգային հոգևոր դպրոցին Տփլիսիս.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1877.- 32 էջ:
- 269. Կրյուզեր.** Տարրական ֆիզիկա.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 171 էջ:
- 270. Հոֆման Ֆ.** Թռչնորս.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 145 էջ:
- 271. Հոֆման Ֆ.** Խավարից դեպի լույս.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 144 էջ:
- 272. Հոֆման Ֆ.** Հավատարմությունը ամեն արգելքներին հաղթում է.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 141 էջ:
- 273. Մանկական** վեպեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 26 էջ:
- 274. Նազարյան Հ.** Անեկդոտներ: Հտ. 2.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 153 էջ:
- 275. Շմիդթ Ք.** Ֆրիդոլին կամ սեր և ատելություն.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 64 էջ:
- 276. Շմիդթ Ք.** Նալա ու Դամայանտի: Հնդկաստանի հեքիաթ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 53 էջ:
- 277. Պատկանյան Մ.** Երկու խոսք հայոց կրոնի և հատկությանց մասին.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 64 էջ:
- 278. Սանդ ժ.** Բաժակ կախարդական.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1877.- 49 էջ:
- 279. Սանդ ժ.** Խոսող կաղնի.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1877.- 74 էջ:

- 280. Սիմեոնյան Մ.** Դասագիրք թվաբանության հայ. ուսումն. համար.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 196 էջ:
- 281. Սիմեոնյան Պ.** Սրբազան պատմություն Հին կտակարանի հայ տղայոց և աղջկանց համար: Հտ. Ա.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 211 էջ:
- 282. Սիմեոնյան Պ.** Սրբազան պատմություն Նոր կտակարանի հայ տղայոց և օրիորդաց համար: Հտ. Բ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 203 էջ:
- 283. Ստրետտոն.** Փոքրիկ Մեզն ու նորա մանուկները.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 98 էջ:
- 284. Տեր-Խաչատրյան Խ.** Ծնողասեր Թեկղին և իր բարի գործքերն: Հտ. 1.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1877.- 52 էջ:
- 285. Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզու: Այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1877.- 88 էջ:
- 286. Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզու: Դասագիրք ընթերցանութ. Ազգ. Ուսումն. համար.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1877.- 413 էջ:
- 287. Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզու: Փոքրահասակ մանուկների համար.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1877.- 188 էջ:
- 288. Աղայեան Ղ.** Ուսումն մայրենի լեզվի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 45 էջ:
- 289. Այվազյան Գ.** Նախակրթանք հայերեն գրաբար լեզվի: Մասն Ա.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1878.- 106 էջ:
- 290. Առավելյան Ն.** Ձայն բարբառո Հայաստանի Վանեցվոյն առ ամենայն հայս.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1878.- 64 էջ:
- 291. Ավագակ** Օտեվի գործքերը, կամ հայրը ցանեց, որդին հնձեց.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878⁹:
- 292. Բարրո Թեոդոր Հ.** Երեխաների առ իրենց ծնողք պարտավորությունները.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1878.- 102 էջ:
- 293. Ժողովրդական** այբբենարան.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 15 էջ:
- 294. Լեսսինգ Գոտհոլդ Է.** Նաթան իմաստուն.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1878.- 208 էջ:
- 295. Կովկասի** և Անդրկովկասի բնակիչներին.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1878.- 16 էջ:
- 296. Հասան-Ջալալյան Ս.** Տաղք.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 16 էջ:
- 297. Հորնի Վ.** Անապատում.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 103 էջ:

298. **Հոֆման Ֆ.** Ռընէ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 129 էջ:
299. **Ղուկասյան Հ.** Դասագիրք ընթերցանության հայոց դպրոցների համար.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 176 էջ:
300. **Մանդինյան Ս.** Համառոտ մանկավարժություն.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 223 էջ:
301. **Մանդինյան Ս.** Նահապետական և հայրենի աշխարհ.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 128 էջ:
302. **Միրիմանյան Բ.** Թվաբանական խնդիրների ժողովածու: Մաս 1.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 33 էջ:
303. **Հարո Ն.** Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ.- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1878.- 135 էջ:
304. **Հարո Ն.** «Մշակի» խմբագիր պ. Գրիգոր Արծրունու հասցեին.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 9 էջ:
305. **Նազարյան Հ.** Նախապաշարմունք: Հտ. I.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 84 էջ:
306. **Շահազիզյան Հ.** Բացատրություն ընդդեմ գրության Գալուստ Շերմազանյանի, որ «Արարատ» լրագրումը փետրվար ամսոյ սոյն ամի տպեալ էր.- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1878.- 18 էջ:
307. **Շիլլեր Ֆ.** Դոն Կարլոս.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 278 էջ:
308. **Շիլլեր Ֆ.** Օրլեանի կույսը.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 172 էջ:
309. **Շիրմազանյան Գ.** Անեկդոտներ, զվարճալի զրույցներ, համառոտ դեպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կյանքից առած.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 76 էջ:
310. **Ոսկե** ասեղներ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 28 էջ:
311. **Պալյան Մ.** Մշեցի.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 14 էջ:
312. **Պատկանյան Ռ.** Ազատ երգեր.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 16 էջ:
313. **Պռոշյան Պ.** Կռվածաղիկ.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 358 էջ:
314. **Պոլուիմպերիալ.** Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 42 էջ:
315. **Սերվանտես Մ.** Դոն Բիշոտ Լամանշեցի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 232 էջ:
316. **Տեր-Խաչատրյան Խ.** Ծնողասեր Թեկզին և իր բարի գործքերն: Հտ. 2.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 47 էջ:

- 317. Տեր-Ղևոնդյան Ն.** Բացատրություն մայրենի լեզվի.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 128 էջ:
- 318. Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզու: Այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 88 էջ:
- 319. Տեր-Մելիքսեդեկյան Գ.** Թռչող միտք կամ մեր Կովկասի հիմնական լրագիրներ.- Թիֆլիս: Տպարան Ա. Ա. Միխեյլսոնի, 1878.- 11 էջ:
- 320. Տեր-Ստեփանյան Ա.** Սկզբունք քրիստոնեական ուղղափառ հավատո Հայաստանյայց եկեղեցվո ծխական եկեղեց. ուսումն. բոլոր բաժանմունք. և միջն. ուսումն. 1-ին դասար. համար.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1878.- 182 էջ:
- 321. Օրացույց** 1879 թվականին Քրիստոսի և Ազգիս Հայոց ՌՅԻԸ - 1328.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1878.- 134 էջ:
- 322. Օրացույց** 1879 թվականին Քրիստոսի և Ազգիս Հայոց ՌՅԻԸ - 1328 - ՌՅԻԹ - 1329.- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1878.- 120 էջ:
- 323. Օրացույց** 1879 թվականին Քրիստոսի և ի սկզբնավորության Ազգիս Հայոց 3986 ևս և տոմարաշինության Ազգիս ՌՅԻԸ - 1328 - ՌՅԻԹ - 1329 և «Ծաղիկ ընտանյաց».- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1878.- 177 էջ:
- 324. Անանուն** կատակ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 48 էջ:
- 325. Աշնանային** երեկո գյուղում.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 22 էջ:
- 326. Ավենարիուս Վ.** Թավամազ մեղու.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 30 էջ:
- 327. Արծրունի Ա.** Սամվել Մուրատյանի կտակի խնդիրը.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1879.- 132 էջ:
- 328. Բաբայան Ա.** Ուսումնարանի առողջապահության հարցեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 76 էջ:
- 329. Բահաթրյան Ա.** Քերականություն աշխարհիկ լեզվի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 87 էջ:
- 330. Գեորգ** Ռոլլեստոն (Վեպ հասակավոր պատանիների համար).- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 168 էջ:
- 331. Գուլամիրյան Ա.** Բրիչ.- Թիֆլիս: Տպարան Ս. և Ա. Դավթյանների, 1879.- 55 էջ:
- 332. Գուլուբին Պ.** Փակված դրան մոտ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 20 էջ:
- 333. Եակոբսոն,** Բեքեր բիժու հանաքը.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1879.- 28 էջ:
- 334. Եղիշե,** Պատմություն Վարդանանց ըստ Անձևացյացն օրինակի.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1879.- 311 էջ:

- 335. Ժանո** և **Ժանետ**.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 45 էջ:
- 336. Լակիդէ Ա.** Երրորդ ոսկի.- Թիֆլիս: Տպարան Ա. Հ. Մելիք-Շահնազարյանցի, 1879.- 32 էջ:
- 337. Ծերենց (Շիշմանյան Հ.),** Երկունք Թ դարու.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 468 էջ:
- 338. Հախապատյան Մ.** Առձեռն բառգրքույկ ի ռուսաց լեզվե ի հայ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 672 էջ:
- 339. Մանդինյան Ս.** Կրոնք.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1879.- 108 էջ:
- 340. Մանկական** երգարան.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 28 էջ:
- 341. Մեծատունյան Ե.** Երգարան աղջկանց և աշակերտուիյաց հայկական ուսումնարանաց: Հտ. Ա.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 115 էջ:
- 342. Միքայելով Վ.** Մի քանի խոսք Վլադիկավկասի հայ հասարակության.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879⁹:
- 343. Մոլիեր Ժան Բատիստ,** Բոնի ամուսնություն.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 48 էջ:
- 344. Նավասարդյան Բ.** Դիֆտերիտ.- Թիֆլիս: Տպարան Ա. Ա. Միխեյլսոնի, 1879.- 25 էջ:
- 345. Պատկանյան Ռ.** Նոր-Նախիջևանի հիմնարկության պատմությունը.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1879.- 80 էջ:
- 346. Սիմոնյան Պ.** Սրբազան պատմություն Հին կտակարանի հայ տղայոց և աղջկանց համար: Հտ. Ա.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 211 էջ:
- 347. Վուչետիչ Ն.** Կարմիր լապտեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 34 էջ:
- 348.** Տասնամյակ Սուրբ Գայանյան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 141 էջ:
- 349. Տեր-Գրիգորյան Մ.** Պառվներուն խրատ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 22 էջ:
- 350. Տեր-Գրիգորյան Մ.** Վույ քի իմ վեչեր.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1879.- 37 էջ:
- 351. Տեր-Գրիգորյան Յ.** Վեպեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 187 էջ:
- 352. Տեր-Ղավթյան Կ.** Նոր դասագիրք ռուսերեն լեզվի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 144 էջ:

- 353. Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզու: Այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 87 էջ:
- 354. Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզու: Դասագիրք ընթերց. ազգ. ուսումն. համար.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 350 էջ:
- 355. Տեր-Մելիքսեդեկյան Գ.** Նվեր քեսսիբ գեղցիներին.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 50 էջ:
- 356. Տիգրանյան Լ.** Մարմնակազմական կամ Անատոմիական բառարան լատիներենից և ռուսերենից հայերեն.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1879.- 108 էջ:
- 357. Տիկինը** նրան սպասում է.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 13 էջ:
- 358. Փրանգլին Բ.** Փորձառու Ռիչարի Խրատները կամ հարստանալու միջոց.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1879.- 48 էջ:
- 359. Ադամյան Պ.** Քերթվածք և թարգմանությունք.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի 1880.- 243 էջ:
- 360. Ալիխանյան Ն.** Երվանդ երկրորդ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 194 էջ:
- 361. Աղայան Ղ.** Երկու քույր.- Թիֆլիս: Հրատ. Զաքարիա Գրիգորյանց Կովկասյան գրավաճառանոցի, 1880:
- 362. Այբբենարան** ժողովրդական.- Թիֆլիս: Կեդրոնական գրավաճառանոց, 1880:
- 363. Այվազյան Գ.** Պատմություն Խալիպյան ուսումնարանին Ազգիս Հայոց.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 393 էջ:
- 364. Առաքելյան Հ.** Առողջապահական ընթերցանություն նեղ և խոնավ բնակարանների մասին.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 29 էջ:
- 365. Արարատյան Ա.** Երկու թումբ.- Թիֆլիս: Զաքարիա Գրիգորյանցի Կովկասյան գրավաճառանոց, 1880:
- 366. Արարատյան Ա.** Խեղճության արգասիք.- Թիֆլիս: Կովկասյան գրավաճառանոց Զաքարիա Գրիգորյանց, 1880:
- 367. Արարատյան Ա.** Քնարիկ մանկական.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1880.- 119 էջ:
- 368. Բաբայան Ա.** Կրքեր և նոցա ազդեցությունը առողջության վրա.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1880.- 46 էջ:
- 369. Բարի** լուր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880^o:
- 370. Բոկ,** Ուսումն առողջապահության.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիադյանցի, 1880.- 120 էջ:
- 371. Գուլակյան Ա.** Երեք օր ճանապարհին.- Թիֆլիս: Տպարան Ա. Հ. Մելիք-Շահնազարյանցի, 1880.- 37 էջ:

- 372. Երեխայի** կենաց առաջին տարիները.- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1880:
- 373. Երզնկյանց Ե.** Դասագիրք ծայնագրության.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1880:
- 374. Երզնկյանց Ե.** Խմբական ծայնագրյալ ազգային երգերու.- Թիֆլիս: Հրատ. Կովկասյան գրավաճառանոց Զաքարիա Գրիգորյանցի, 1880:
- 375. Թվաբանություն.** Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 250 էջ:
- 376. Խատիսյան Գ.** Իմ ճանապարհորդության հիշատակարանից.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1880.- 16 էջ:
- 377. Կանոնագիր** Հայկազյան-Ուսումնասիրաց ընկերության Փարիզու.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1880.- 31 էջ:
- 378. Կանոնադրություն** Թիֆլիսի ընկերության հայերեն գրքերի հրատարակության.- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1880.- 8 էջ:
- 379. Կոստանյանց Կ.** Գրաբարի խոնարհումը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանց, 1880^o:
- 380. Հորնի Վ.** Անապատում.- Թիֆլիս: Կովկասյան գրավաճառանոց Զաքարիա Գրիգորյանցի, 1880:
- 381. Ձեռնարկ** նոր ընտանեկան մեդիումի և № 4-ի կարի մեքենայի համար ընտանեկան գործածության և զանազան արհեստական արդյունաբերությունների համար.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1880.- 25 էջ:
- 382. Ղուկասյան Հ.** Դասագիրք ընթերցանության Հայոց դպրոցների համար.- Թիֆլիս: Տպարան Ս. և Ա. Դավթյանների, 1880.- 161 էջ:
- 383. Ղուկասյան Հ.** Համառոտ հայացք մայրենի լեզվի վրա.- Թիֆլիս: 1880^o:
- 384. Ղուկասյան Հ.** Ընդհանուր պատմություն.- Թիֆլիս: Տպարան Ա. Ա. Միխելսոնի, 1880.- 280 էջ:
- 385. Մանդակունի Գ.** Խորհրդածություն Դոկտոր Նելսոն Ամերիկացվո և Հավելվածներ.- Թիֆլիս: Տպարան Ա. Հ. Մելիք-Շահնազարյանցի, 1880.- 292 էջ:
- 386. Մանդինյան Ս.** Ազգային ընտանեկան աշխարհք.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 60 էջ:
- 387. Մանդինյան Ս.** Ազգային ընտանեկան աշխարհք ժողովրդական բանաստեղծության հատվածներով և այբբենարան.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 32 էջ:
- 388. Մանդինյան Ս.** Նահապետական և հայրենի աշխարհ.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1880.- 128 էջ:
- 389. Մոլիեր Ժան Բատիստ,** Տղամարդկանց խրատ.- Թիֆլիս: Տպարան Ա. Ա. Միխելսոնի, 1880.- 44 էջ:
- 390. Ի օգուտ** չունևոր աշակերտաց Ներսիսյան ուսումնարանի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 25 էջ:

391. **Նոր** երգարան.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 140 էջ:
392. **Շեկսպիր Վ.** Օտելլո.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 168 էջ:
393. **Պատկանյան Ռ.** Մանկական երգեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 24 էջ:
394. **Պիշըր-Սդոյ Հարրիետ**, Թովմաս եղբոր տնակը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 78 էջ:
395. **Պռոշյան Պ.** Հացի խնդիր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 356 էջ:
396. **Սիմեոնյանց Ն.** Ընդհանուր աշխարհագրություն: 1-ին տարի նախագիտելիք.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 42 էջ:
397. **Սիմեոնյանց Ն.** Ընդհանուր աշխարհագրություն: 2-րդ տարի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 138 էջ:
398. **Սիմեոնյանց Ն.** Ընդհանուր աշխարհագրություն: Երրորդ տարի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 164 էջ:
399. **Տեր-Բարսեղյան Հ.** Մորեխ և նորան ջնջելու հնարները.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 21 էջ:
400. **Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզու: Այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 98 էջ:
401. **Տեր-Հովհաննիսյան Գ.** Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի համառոտ կենսագրություն.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1880.- 131-164 էջ:
402. **Տեր-Սարգսյան Մ.** Գեղագիտության օրինակներ.- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1880.- 11 էջ:
403. **Տեր-Ստեփանյան Ա.** Սկզբունք քրիստոնեական ուղղափառ հավատո Հայաստանյայց եկեղեցվո ծխական-եկեղեց. ուսումնարան բոլոր բաժանմունքների և միջն. Ուսումնարանի առաջին դասարանների համար.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 204 էջ:
404. **Փելլիքո Ա.** Հռիմինիացին Փրանկիսկե.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1880.- 68 էջ:
405. **Քիշմիշյան Ա.** Գրոշո և կրակի շուրջը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1880.- 45 էջ:
406. **Քրիստոնեական** (սկզբունք) ուղղափառ հավատո Հայաստանյայց Սուրբ եկեղեցվո.- Թիֆլիս: Հրատ. կեդրոնական գրավաճառանոցի, 1880:
407. **Օրացույց** և գուշակությունք օդոց 1881 թվականին Քրիստոսի և Ազգիս Հայոց ՌՅԼ-1330.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1880.- 74 էջ:
408. **Ֆրեյդուն**, Տավիղ հիսնադի.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1880.- 74 էջ:

409. **Ահմեդի** տոպրակը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 32 էջ:
410. **Աղայան Ղ.** Անահիտ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 75 էջ:
411. **Անվո** Հայաստանի հին արքայանիստ քաղաքի ավերակաց լուսատիպ պատկերների ցուցակը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 10 էջ:
412. **Առաքելյան,** Գեորգ Ռուեստոն.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881:
413. **Առաքելյան,** Խավարից դեպ ի լույս.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881:
414. **Առաքելյան,** Հավատարմությունը ամեն արգելքներին հաղթում է.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881:
415. **Ավետիք.** Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 20 էջ:
416. **Աքիմյան Գ.** Նալա և Ռամաժանտի.- Թիֆլիս: Հրատ. Զաքարիա Գրիգորյանցի Կովկասյան գրավաճառանոց, 1881:
417. **Բագրատունի Ա.** Տասն պատգամք կամ բարոյական պարտացույց.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 104 էջ:
418. **Բլեկկի Ջոն Ստիվարտ,** Մտավոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթության մասին.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 108 էջ:
419. **Բլոք Մորիս,** Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսության.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 180 էջ:
420. **Բուսաբանության** համառոտ կրկնողական դասընթաց.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 80 էջ:
421. **Գուլսամիթ Օլիվըր,** Վեքվիլդի Երեցը.- Թիֆլիս: Հրատ. Զաքարիա Գրիգորյանցի Կովկասյան գրավաճառանոց, 1881:
422. **Գրանադայի** ջրբեր և Նյուրենբերգյան ձու.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 40 էջ:
423. **Գրիգորյան Զ.** Մարդակազմության տարրական դասեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 127 էջ:
424. **Դեֆո Դ.** Ռոբինզոնի պատմությունը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 199 էջ:
425. **Դոդե Ա.** Թզուկ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 79 էջ:
426. **Եզեկյան Ա.** Դյուցազունք ըստ Խորենացվո.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 30 էջ:
427. **Զորով Ն.** Բնախոսություն հայ ուսումնարանների համար.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 318 էջ:
428. **Թագվորյան Ս.** Փորձ լեզվագիտական մի դրության որում բովանդակի բացատրություն արմատոց այբուբենի տառից պատշաճյալ հայերեն լեզվի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 36 էջ:
429. **Թոխմախյան Ա.** Հայրենիքի պահանջներ և հայ գյուղացին.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1881.- 91 էջ:

- 430. Լալայան Ն.** Պատվաստման կամ ծաղիկ կտրելու նշանակությունը.- Թիֆլիս: 1881^o:
- 431. Խասպարյան,** Շտեմարան մանկական տղոց համար ընթերցանելի գիրք.- Թիֆլիս: 1881^o:
- 432. Խոսակցություն** օրիորդաց մեջ.- Թիֆլիս: Տպարան Ա. Հ. Մելիք Շահնազարյանցի, 1881.- 35 էջ:
- 433. Ծերենց,** Թեոդորոս Ռշտունի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 235 էջ:
- 434. Ծերենց,** Թորոս Լևոնի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 235 էջ:
- 435. Կանոնագրություն** Հայոց բարեգործական ընկերության Կովկասում.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 17 էջ:
- 436. Կանոնագրություն** Հայոց բարեգործական ընկերության Կովկասում.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 31 էջ:
- 437. Կանոններ** պետական և հասարակական հիմնարկությունների տան տերերի, հյուրանոցների տերերի, քարվանսարանների համար և այլն, որոնց հիման վրա նրանք պետք է պահեն տնային մատյանների և հասցեների թերթիկների.- Թիֆլիս: 1881.- 12 էջ:
- 438. Կոստանյանց Կ.** Գրաբար բայերի խոնարհումը մի աղյուսակի մեջ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 18 էջ:
- 439. Կոստանյանց Կ.** Գրաբարի հոլովումը մի աղյուսակի մեջ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 27 էջ:
- 440. Կոստանյանց Կ.** Ծաղկաքաղ արծակ և չափածո բանից ի պետս վարժարանաց: Շրջան առաջին.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 73 էջ:
- 441. Կոստանյանց Կ.** Ծաղկաքաղ արծակ և չափածո բանից ի պետս վարժարանաց: Շրջան 2-րդ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 232 էջ:
- 442. Կոստանյանց Կ.** Ծաղկաքաղ արծակ և չափածո բանից ի պետս վարժարանաց: Շրջան երրորդ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 140 էջ:
- 443. Հենչել,** Կյանքի հանգամանքների համեմատ թվաբանություն.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 176 էջ:
- 444. Հումպերտ,** Աղքատ մանուկ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 56 էջ:
- 445. Ճիհանկիրյան Թ.** Սուրբ Էջմիածնի զանգակը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 8 էջ:
- 446. Մանդիկյան Ս.** Ազգային դյուցազնական աշխարհ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 72 էջ:
- 447. Մանկական** ոտանավորներ և երգեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 32 էջ:
- 448. Մովսես Խ.** Պատմություն հայոց.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 417 էջ:

- 449. Մոտեստով Վ.** Մարդու բարոյական զարգացում.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1881⁶:
- 450. Յարո Ն.** Մտավորապես հանգուցյալ Գրիգոր Իվանովիչ Իզմիրովի հասցեին.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 12 էջ:
- 451. Հովհաննիսյան Ա.** Հայր և Հայաստանը օտարների աչքում.- Թիֆլիս: Տպարան Համբարձում Էնֆիաճյանցի, 1881.- 96 էջ:
- 452. Նազարյան Հ.** Հայոց լեզվի ուսուցիչ ազգային դպրոցների համար: 3-րդ տարվա դասագիրք.- Թիֆլիս: Տպարան Մնացական Մարտիրոսյանցի, 1881.- 11-124 էջ:
- 453. Նազարյան Հ.** Հայոց լեզվի ուսուցիչ ազգային դպրոցների համար: 4-րդ տարվա դասագիրք.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 9-215 էջ:
- 454. Շրեբեր,** Տնային բժշկարան, մարմնամարզություն.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 115 էջ:
- 455. Չեստերտոնի** ժառանգը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 288 էջ:
- 456.** Պապի ձեռնոցները.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 30 էջ:
- 457. Պռոշյանց Պ.** Շահեն.- Թիֆլիս: Տպարան Մարտիրոսյանցի, 1881:
- 458. Սիմեոնյան Պ.** Սրբազան պատմություն Նոր կտակարանի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 202 էջ:
- 459. Սյունի Ա.** Հայաստանի սովը և Էջմիածինը (1879-1881).- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1881.- 68 էջ:
- 460. Սունդուկյան Գ.** Խաթաբալա.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 143 էջ:
- 461. Տեր-Հակովբյան Ա.** Ֆիզիկական, ժողովրդագրական և քաղաքական աշխարհագրություն Հայաստանի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 176 էջ:
- 462. Բամբոստն Ժ.** Մայրական դաստիարակությունը բնության օրինաց վերա հիմնված ծնողաց և ուսուցչաց համար.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1881.- 118 էջ:
- 463. Բաֆֆի,** Դավիթ Բեկ: Գիրք 1.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1881.- 222 էջ:
- 464. Բաֆֆի,** Դավիթ Բեկ: Գիրք 2.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1881.- 220 էջ:
- 465. Քուչարյան Գ.** Վենեթյան ախտեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1881.- 36 էջ:
- 466. Օրացույց** և գուշակությունք օդոց 1882 թվականին Քրիստոսի և Ազգիս Հայոց ՌՅԼԱ-1331.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1881.- 94 էջ:
- 467. Ագաթանգեղոս,** Ագաթանգեղա Պատմություն.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 524 էջ:

- 468. Աղայան Ղ.** Սրինգ հովվական.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 32 էջ:
- 469. Աղայան Ղ.** Ուսումն մայրենի լեզվի.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 64 էջ:
- 470. Անդերսեն Հ.** Խոզարած.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 13 էջ:
- 471. Անդերսեն Հ.** Սոխակ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 27 էջ:
- 472. Առաքելյան Բ.** Նվեր Պ. Կոլեժսկի սեկրետար Անդրեյ Մակարիչ Ջաշիտովին.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 12 էջ:
- 473. Բաբայան Ա.** Առողջապահություն մանկական հասակի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 35 էջ:
- 474. Բահաթրյան Ա.** Այբբենարան առաջին տարվա.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 16 էջ:
- 475. Բահաթրյան Ա.** Առաջին ընթերցարան.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 83 էջ:
- 476. Բահաթրյան Ա.** Ծաղկոցը կամ մանկանց պարտեզը և նրա նշանակությունը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 24 էջ:
- 477. Բահաթրյան Ա.** Համառոտ գործնական հոգեբանություն հայ ուսուցիչների համար.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1882.- 161 էջ:
- 478. Բահաթրյան Ա.** Ուղեցույց հայ ուսուցչի.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 212 էջ:
- 479. Դիկկենս Չ.** Հարս և սկեսուր.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1882.- 54 էջ:
- 480. Եղիազարյան Ս.** Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում, մեր երկրի հայաբնակ մասում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1882.- 44 էջ:
- 481. Զուբով Պ.** Ղարաբաղի աստղագետը կամ Շուշի բերդի հիմնարկությունը 1752 թվականում.- Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1882.- 244 էջ:
- 482. Ընդհանուր** ուսուցչական ժողովի կարգադրիչ հանձնաժողովի կողմից հարցեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 8 էջ:
- 483. Թոխմախյան Ա.** Մասիս լեռների հարավային ստորոտներ: Մաս Ա.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 58 էջ:
- 484. Թոխմախյան Ա.** Մասիս լեռների հարավային ստորոտներ: Մաս Բ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 66 էջ:
- 485. Ժողովածու** թվաբանական խնդիրների տարրական և միջնակարգ ուսումնարանների համար: Մաս 2.- Թիֆլիս: Տպարան Լ. Գ. Կրամարենկոյի, 1882.- 135, 19 էջ:
- 486. Լիակատար** ցուցակ կեդրոնական գրավաճառանոցի հայերեն գրյանց.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 24 էջ:

487. Լոտո, պատկերներով, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և վրացերեն.- Թիֆլիս: Թիֆլ. հրատրվչ. ընկ. 1882^o:
488. **Խատիսյան Գ.** Մանկավարժական խորհրդածություններ. հայոց ծխական ուսումնարաններ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 126 էջ:
489. **Ծննդյան** պատմությունը և մայիսյան տոնը Ֆինլեանդիայում.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 34 էջ:
490. **Ծոցի** երգարան.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 155 էջ:
491. **Կանոնադրություն** հայուհյաց բարեգործական ընկերության Թիֆլիսում.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 21 էջ:
492. **Հայնե Հ.** Ծաղկաքաղ Հ. Հեյնեի բանաստեղծություններից.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882^o:
493. **Հայրդի,** Սրբազան պատմություն Հին կտակարանի.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 240 էջ:
494. **Հաուֆ Վ.** Ուխտավորք.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 259 էջ:
495. **Հոգեփոխություն** կամ կախարդված Պրինց.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 68 էջ:
496. **Հրահանգ** տեղական վարչություններին և մասնաժողովներին Հայոց բարեգործական ընկերության Կովկասում.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 17 էջ:
497. **Հոֆման Է.** Թուղթ խաղացողի բաղդը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 70 էջ:
498. **Մանդինյան Ս.** Նահապետական և հայրենի աշխարհ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 152 էջ:
499. **Մելիք-Շահնազարյան Կ.** Ղըլըցե կնանոց պընը փեշակը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 36 էջ:
500. **Մուրացան,** Ռուզան կամ հայրենասեր օրիորդ.- Թիֆլիս: 1882.- 62 էջ:
501. **Նազարյան Հ.** Հայոց լեզվի ուսուցիչ ազգային դպրոցների համար.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 101 էջ:
502. **Շմիդթ Ք.** Գառնուկ և լուսատտնիկ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 52 էջ:
503. **Շմիդթ Ք.** Երեք զրույց.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 79 էջ:
504. Սայաթ-Նովա: Ազգային երգիչ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 36 էջ:
505. **Սանդ Ժ.** Գարիբալդի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 39 էջ:

- 506. Սանդ Ժ.** Վարդագույն ամպ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 96 էջ:
- 507. Սաֆարյան Ս.** Էս էլ իմ սագը: Հտ. 1.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 192 էջ:
- 508. Սունդուկյան Գ.** Քանդած օջախ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 132 էջ:
- 509. Վարձեղյան Գ.** Թվաբանական խնդիրներ: Մաս 1-ին.- Թիֆլիս: Տպարան Ա. Ա. Միխեյլսոնի, 1882.- 119 էջ:
- 510. Վուչետիչ Ն.** Երկու տոնածառ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 24 էջ:
- 511. Տևկանց Ա.** Հայերգ: Մեղեդիք, տաղք և երգք.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 208 էջ:
- 512. Տեր-Ղևոնդյան Ն.** Մայրենի լեզվի քերականության տարերքը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 80 էջ:
- 513. Տեր-Հակոբյան Ն.** Դասատետր աղոթից ի պետս դպրոցաց Ազգիս.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 48 էջ:
- 514. Բաֆֆի, Դավիթ Բեկ.** Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1882.- 563 էջ:
- 515. Բաֆֆի, Խամսայի մելիքությունները.** Թիֆլիս: Տպարան Կովկասի գլխավոր կառավարության, 1882.- 416 էջ:
- 516. Բաֆֆի, Ոսկի աքաղաղ: Առաջին և երկրորդ մաս.** Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 256 էջ:
- 517. Փախուստ** դրան մոտ.- Թիֆլիս: Կեդրոնական գրավաճառանոց, 1882:
- 518. Փիրղալեմյան Ղ.** Չորս ընկերք որ է ճանապարհորդություն Վանա մինչև Կոստանդնուպոլիս.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1882.- 176 էջ:
- 519. Քալանթարյան Դ.** Հայոց գյուղատնտեսական ընկերություն և նրա կանոնադրության համառոտ ծրագիրը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1882.- 50 էջ:
- 520. Աղայան Ղ.** Ուսումն մայրենի լեզվի. ընթերցարան երկրորդ և երրորդ տարվա.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 195 էջ:
- 521. Աշխատություն** և հանգիստ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883⁶:
- 522. Առաքելյան Հ.** Ազգայնություն և նրա պրինցիպները.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 54 էջ:
- 523. Արասխանյան Ա.** Ազգաբնակչությունը և ազգաբնակչական շարժումները.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 79 էջ:
- 524. Արարատյան Ա.** Գյուղական խալիֆա.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 188 էջ:
- 525. Արծրունի Ա.** Ճանապարհորդություն դեպի Ելիսավետպոլի նահանգը.- Թիֆլիս: 1883.- 28 էջ:

- 526. Բարխուդարյան Գ.** Պըլը-Պուղի.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 190 էջ:
- 527. Գեղամյան Հ.** Գինեղև: Մաս 1.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Ռոտինյանցի, 1883.- 240 էջ:
- 528. Գեորգ-Բեգյան Հ. Պանճուլազյան Մ.** Թվաբանական խնդիրների ժողովածու, սիստեմատիկական ընթացք: Մասն առաջին.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883^օ:
- 529. Գեորգ-Բեգյան Հ. Պանճուլազյան Մ.** Թվաբանական խնդիրների ժողովածու, սիստեմատիկական ընթացք: Մասն երկրորդ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 104 էջ:
- 530. Գրիգորյան Զ.** Ուսուցիչ ուսաց լեզվի.- Թիֆլիս: Տպարան Լ. Գ. Կրամարենկոյի, 1883.- 48 էջ:
- 531. Դավիդով Ա.** Տարրական երկրաչափություն.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 168 էջ:
- 532. Եզեկյան Ա.** Ծաղկունք.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 23 էջ:
- 533. Երիցյան Ա.** Վենետիկի մխիթարյանք.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 162 էջ:
- 534. Խայեաթ,** Գովեստ վասն պարոն Դավթի Գաբելյան.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 1 էջ:
- 535. Խորխոռունի,** Ախալքալաքեցու վերքերը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 44 էջ:
- 536. Խորխոռունի,** Խորխոռունու բացատրությունը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 22 էջ:
- 537. Կոլմանյան Մ.** Պատիվ.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1883.- 74 էջ:
- 538. Հայոց** դրամատիկական ակումբի կանոնագիրը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 31 էջ:
- 539. Հաշիվ** մտից և ծախուց Նորաշենու Ս. Աստվածածնա եկեղեցվո Թիֆլիզու վասն 1881 և 1882 ամաց.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 12 էջ:
- 540. Ղուկասյան Հ.** Դասագիրք ընթերցանության հայոց դպրոցների համար: Գ և Դ տարի.- Թիֆլիս: Տպարան Լ. Գ. Կրամարենկոյի, 1883.- 4 էջ:
- 541. Մանվելյան Ս.** Ձեռնարկ առևտրական հաշվարարությունների: Գիրք 1.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 208 էջ:
- 542. Մատինյան Կ.** Հայելի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1883.- 32 էջ:
- 543. Մելյան Ա.** Հայոց մեծ վարդապետ սուրբ Մեսրոպը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 47 էջ:
- 544. Մուրացան,** Հայ բողոքականի ընտանիքը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 125 էջ:

- 545. Նազարյան Հ.** Անեկդոտներ: Հտ. 3.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 256 էջ:
- 546. Նազարյան Հ.** Ընտիր հատվածներ: Մաս Ա.- Թիֆլիս: Տպարան Լ. Գ. Կրամարենկոյի, 1883.- 470 էջ:
- 547. Նազարյան Հ.** Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմությունը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 171 էջ:
- 548. Նավասարդյան Տ.** Անեծքներ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 48 էջ:
- 549. Պատկանյան Ք.** Վանի արձանագրությունները և նրանց նշանակությունը առաջավոր Ասիայի պատմության համար.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1883.- 70 էջ:
- 550. Պռոշյան Պ.** Շահեն.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1883.- 262 էջ:

**Շարունակելի...
Կազմող՝ Արմինե Դավթյան**

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ (պատմական ակնարկ)

Բանալի բառեր՝ Նոյեմբերյանի քաղաքային գրադարան, գրադարանային ծառայություններ, վիճակագրություն, սոցիոլոգիական հարցումներ:

Keywords. Noyemberyan city library, library services, statistics, sociological surveys.

Նոյեմբերյանի մշակույթի կենտրոնի քաղաքային գրադարանը (այսուհետ՝ ՆՄԿԲԳ) համայնքային գրադարան է՝ հիմնադրված տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Այն ապահովում է համայնքի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, համալրում է գրադարանային հավաքածուն հանրապետական, մարզային համապատասխան նյութական կրիչներով, ինչպես նաև էլեկտրոնային շտեմարանի միջոցով իրականացնում է դրանց պահպանումը¹: ՆՄԿԲԳ-ն գտնվում է համայնքային իշխանության ենթակայության ներքո²:

1937 թ. դեկտեմբերի 31-ին Հայկական ԽՍՀ Նոյեմբերյանի շրջանի կազմավորումից հետո խրճիթ-ընթերցարանի հենքի վրա 1938 թ. ստեղծվում է Նոյեմբերյանի շրջանային գրադարանը: 1975-1980 թթ. ստեղծված գրադարանների կենտրոնացված համակարգում Նոյեմբերյանի շրջանային գրադարանը դառնում է կենտրոնական գրադարան՝ իր կազմում ընդգրկելով տարածքի 22 մասնաճյուղ գրադարաններ: 1996 թ. Նոյեմբերյանի կենտրոնական գրադարանը վերանվանվում է Նոյեմբերյանի քաղաքային գրադարանի՝ ենթարկվելով Նոյեմբերյանի քաղաքապետարանին: 2013 թ. համայնքի ավագանու որոշմամբ Նոյեմբերյանի քաղաքային գրադարանը ներառվում է «Մարզամշակութային կենտրոն» հիմնարկի կազմի մեջ: 2016 թ. «Մարզամշակութային կենտրոն»-ից առանձնանում է սպորտդպրոցը. գրադարանը մնում է «Մշակույթի կենտրոն»-ի կազմում՝ կոչվելով Նոյեմբերյանի մշակույթի կենտրոնի քաղաքային գրադարան³:

¹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4500&lang=arm> ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայք, Հայաստանի Հանրապետության օրենքը գրադարանների և գրադարանային գործի մա-սին, ընդունվել է Երևան, 21.03.2012, գլուխ 2, հոդվ. 6:

² Տե՛ս Համայնքային ծառայության հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, ընդհ. դեկ. և խմբ.՝ Օրդյան Է., Երևան, 2009, էջ 81-82:

³ Պատմական տեղեկատվությունը տրամադրվել է ՆՄԿԲԳ-ի աշխատակիցների կողմից:

ՆՄԿԲԳ-ի խնդիրները բազմազան են: Դրանց շարքում առանձնանում է պահանջարկ ունեցող գրականության համալրումը: Գրադարանի տնօրեն Արմինե Նավասարդյանը խնդրո առարկա հարցի հետ կապված նշում է, որ առկա է հայ գրականության, դպրոցական ծրագրով նախատեսված գրականության, մասնագիտական, ժամանակակից գրականության, ուսանողական ծրագրային գրքերի պահանջարկ: Նրա կարծիքով գրադարանում ցանկալի է ստեղծել տեղեկատվական կենտրոն, որի իրագործման համար խիստ կարևոր է պետական աջակցությունը⁴:

2014 թ. մայիսի 15-ին ՆՄԿԲԳ-ն Հայաստանի ազգային գրադարանի կողմից համալրվել է 172 միավոր գրականությամբ⁵:

Որևէ կազմակերպության, հիմնարկության, տվյալ պարագայում գրադարանի առջև ծառացած օրակարգային հիմնախնդիրների բացահայտման համար կարևոր նշանակություն ունեն սոցիոլոգիական հարցումները, ըստ այդմ իրականացված ուսումնասիրություններն ու եզրահանգումները⁶: Նախապատվությունը մեծ մասամբ տրվում է հարցաթերթիկի ձևաչափին, որն իր մեջ ներառում է հետազոտական գործառույթ⁷:

2017 թ. գրադարանի աշխատակիցները՝ թվով 4 հոգի, լրացրեցին նախապես պատրաստված հարցաթերթիկը (հարցաթերթի նմուշօրինակը տե՛ս հավելված 1-ում): Հարցումը կատարվեց նաև բանավոր տարբերակով: Հարցվողները պատկանում էին 46-60 տարիքային խմբին, բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ:

Ներկայացնենք հարցերն իրենց պատասխաններով.

1. Ի՞նչ գործառույթներ է կատարում գրադարանը ընթերցողների և հասարակության համար:

Պատասխաններ՝

1. հոգևոր-մշակութային,
2. տեղեկատվության փոխանցման:

2. Ինչպիսի՞ն պետք է լինի գրադարանը, որպեսզի մեծանա ընթերցողների թվաքանակը և հաճախելիությունը:

Պատասխաններ՝

1. անհրաժեշտ գրականությամբ համալրված,
2. ժամանակակից տեխնոլոգիական հագեցվածությամբ,
3. հրապուրիչ

⁴Նավասարդյան Ա., Նոյեմբերյանի գրադարանի հոգսերը, Հոգևոր հայրենիք, Երևան, 2013, թիվ 9, Սեպտեմբեր, էջ 8:

⁵Ղազարյան Ռ., Հպարտ էի զգում, որ այսպիսի բանակ ունենք, Հոգևոր հայրենիք, Երևան, 2014, թիվ 5, Մայիս, էջ 11:

⁶Հայրապետյան Ն., Գրադարանները սոցիոլոգիական հայելու մեջ, Հայական գրադարան, տարե-գիրք 8, Երևան, 2004, էջ 23:

⁷Կրավչենկո Ա., Սոցիոլոգիա, դասագիրք, Երևան, 2004, ռուսերենից թարգմ.՝ Աբրահամյան Վ., էջ 367-368:

4. նպատակաւաց սպասարկմամբ:

3. Ի՞նչ հիմնական նպատակներ են դրված գրադարանի առջև:

Պատասխանները՝

1. ընթերցողներին տրամադրել անհրաժեշտ գրականություն,
2. տարաբնույթ միջոցառումների շնորհիվ կապեր պահպանել հասարակության տարբեր ներկայացուցիչների հետ,
3. օժանդակել ընթերցողների և հասարակության կրթությանը և մտավոր զարգացմանը,
4. Հայաստանի գրադարանների համակարգում գրադարանի համար ապահովել կայուն դիրքեր,
5. ավանդական և էլեկտրոնային գովազդի միջոցով ներկայացնել հայ գիրքը և առհասարակ տպագիր-մշակութային ժառանգությունը:

4. Ի՞նչ առաջնային հիմնախնդիրներ են դրված գրադարանի առջև:

Պատասխանները՝

1. գրականությամբ համալրում,
2. տեխնիկական միջոցների և գույքի ձեռքբերում,
3. արժանավայել աշխատավարձ,
4. նորարարական մտածողությամբ գրադարանավարի ձևավորում,
5. համագործակցություն այլ գրադարանների հետ,
6. ապահովել ընթերցողների և գրադարանավարների կապը,
7. նպաստել ընթերցողների մտավոր զարգացմանը:

5. Գրադարանի կառավարման համակարգում ի՞նչ առաջարկներ ունեք, ի՞նչ նորամուծություն կառաջարկեք:

Պատասխանները՝

1. Նոյեմբերյանի քաղաքային գրադարանի վերահսկողությունը հանձնել ՀՀ մշակույթի նախարարությանը,
2. գրադարանի կառավարումն իրականացնել Մշակույթի նախարարության համապատասխան բաժնի կողմից,
3. գրադարանը միայն գիրք տրամադրելու և վերադարձնելու վայրից դարձնել տարաբնույթ միջոցառումների, հանրային քննարկումների և բանավեճերի հարթակ,
4. տեխնիկական միջոցների և անհրաժեշտ գույքի ձեռքբերում:

6. Ընդհանուր առմամբ ինչպես կգնահատեք գրադարանի իրականացրած աշխատանքները և գործառույթները:

Պատասխաններ՝

1. Բավարար:

7. Ի՞նչ ծառայություններ կառաջարկեիք, որպեսզի գրադարանը մատուցեր. նշեք Ձեզ անհրաժեշտ անվճար և վճարովի ծառայությունների կոնկրետ տեսակները:

Պատասխանները՝

1. դասընթացների անվճար կազմակերպում,
2. անվճար տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում,
3. վճարովի ֆոնդի ստեղծում, դահլիճի և սենյակի տրամադրում վճարովի հիմունքներով,
4. տեխնիկայի առկայության պայմաններում վճարովի ծառայությունների մատուցում (համացանց, պատճենահանում, սկանավորում և այլն),
5. եզակի գրքերի վճարովի տրամադրում:

8. Ի՞նչ քայլեր և միջոցներ պետք է ձեռնարկել, որպեսզի ընդլայնվի գրադարանի համագործակցությունը ՀՀ այլ գրադարանների հետ:

Պատասխանները՝

1. դիմել ՀՀ մշակույթի նախարարության աջակցությանը,
2. դիմել զանազան գիտակրթական, մշակութային և բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարերարների օժանդակությանը,
3. լինել ակտիվ և նորարար,
4. ավանդական և էլեկտրոնային գովազդի միջոցով բարձրացնել գրադարանի հեղինակությունը:

9. Ինչպիսի՞ն է գրադարանը տեխնոլոգիական հագեցվածության (համակարգիչներ, տպիչներ և այլն) տեսանկյունից:

Պատասխանները՝

1. գրադարանը համալրել համակարգիչներով, տպիչներով և այլ ժամանակակից էլեկտրոնային սարքավորումներով,
2. անբավարար,
3. ցանկանում են, որ գրադարանը քայլի ժամանակին համընթաց,
4. ունենա որակյալ կադրեր, որոնք կարող են կիրառել ժամանակակից տեխնոլոգիաները ի շահ գրադարանի և իրենց զարգացման:

10. Ինչպե՞ս եք կարծում, որքանո՞վ է բարենպաստ գրադարանն աշխատանքային գույքի և կահավորվածության տեսանկյունից:

Պատասխաններ՝

1. Անբարենպաստ:

11. Ինչի՞ փոփոխությունը կհանգեցներ Ձեր աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Պատասխանները՝

1. աշխատավարձի բարձրացում,
2. անհրաժեշտ գրականության համալրում
3. տեխնիկական հագեցվածություն,
4. պետության հոգածություն, ուշադրություն և աջակցություն,
5. գրադարանավարի վերապատրաստում:

12. Այլ առաջարկություններ հարցին:

Պատասխանները՝

1. գրադարանը համայնքային ենթակայությունից հանձնել ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությանը,
2. գրադարանը դարձնել ինքնուրույն կենտրոնական գրադարան և նրա ենթակայության ներքո դնել համայնքների փոքր գրադարանները,
3. եթե ոչ բարձր, ապա գոնե ՀՀ օրենքով նախատեսված նվազագույն աշխատավարձի վճարում գրադարանավարին. աշխատավարձի բարձրացում,
4. ցանկալի է ընթերցողների կողմից մեծ պահանջարկ ունեցող գրքերի ձեռքբերումը:

Եզրահանգումներ և առաջարկություններ՝

- ա. պահանջարկ ունեցող գրականությամբ համալրում,
 - բ. տրամադրել արդի տեխնոլոգիական միջոցներ և անհրաժեշտ աշխատանքային գույք,
 - գ. աշխուժացնել գրադարանային տարաբնույթ միջոցառումները՝ ընթերցասեր հասարակության հետ անհրաժեշտ կապն ապահովելու նպատակով,
 - դ. ավանդական և էլեկտրոնային գովազդի միջոցով բարձրացնել գրադարանի հեղինակությունը,
 - ե. համագործակցություն հայաստանյան այլ գրադարանների հետ,
 - զ. փոփոխության ենթարկել գրադարանի կարգավիճակը՝ գրադարանի վերահսկողությունը հանձնելով ՀՀ մշակույթի նախարարությանը,
 - է. գրադարանը դարձնել ակտիվ սոցիալական կառույց,
 - ը. կիրարկել որոշակի վճարովի ծառայություններ,
 - թ. իրականացնել կադրերի վերապատրաստումն արդի կրթական չափորոշիչներին համապատասխան,
 - ժ. կարևորել նորարարության գաղափարը՝ հայաստանյան գրադարանային համակարգի զարգացումներին համահունչ գործառնելու նպատակադրմամբ:
- Սոցիոլոգիական հարցախույզի միջոցով բացահայտված հիմնախնդիրները ընդհանրական իմաստով գրեթե նույնական են ՀՀ այլ համայնքային գրադարան-

ների համար, հետևաբար կարող ենք մոտավոր պատկերացում կազմել այլ համայն-
քային գրադարանների առջև ծառացած առաջնային հիմնախնդիրների մասին:
Սոցիոլոգիական հարցախույզը հայաստանյան գրադարանների համար կարող է
ծառայել որպես նախադեպ և մեթոդաբանական հենք:

Հավելված 1

*ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի մշակույթի կենտրոնի քաղաքային գրադա-
րան, անանուն սոցիոլոգիական հարցման նմուշօրինակ.*

Նոյեմբերյանի մշակույթի կենտրոնի քաղաքային գրադարանի աշխատակից-
ների տեսակետները, կարծիքները և առաջարկները գրադարանի հիմնախնդիրների
հետ կապված

1. Ձեր տարիքը 20 - 25--- 26 - 33--- 34 - 45--- 46 - 60--- 61-ից բարձր---

2. Ձեր սեռը 1) արական--- 2) իգական---

3. Ի՞նչ կրթություն եք ստացել /կրթական մակարդակը/

1) Միջնակարգ--- 2) միջին մասնագիտական--- 3) բարձրագույն--- 4) բակալավր--- 5)
մագիստր-րատուրա--- 6) ասպրիանտուրա

Կրթության բնույթը և ուղղվածությունը

1) Բնագիտական---2) տեխնիկական--- 3) հումանիտար /հասարակական/ ---

**4. Ըստ Ձեզ ի՞նչ ֆունկցիաներ (գործառույթներ) է կատարում գրադարանը
ընթերցողների և հասարակության համար.**

1) Տեղեկատվության փոխանցման--- 2) Հաղորդակցության---3) Հոգևոր-մշակութա-
յին--- 4) Այլ կարծիքներ-----

**5. Ըստ Ձեզ ինչպիսի՞ն պետք է լինի գրադարանը, որպեսզի է՛լ ավելի
մեծանա ընթերցողների թվաքանակը և հաճախելիությունը**-----

6. Ըստ Ձեզ ի՞նչ հիմնական նպատակներ են դրված գրադարանի առջև

- 1) Ընթերցողներին տրամադրել անհրաժեշտ գրականություն-----
- 2) Հայաստանի գրադարանների համակարգում գրադարանի համար ապահովել
կայուն դիրքեր-----
- 3) Տարաբնույթ միջոցառումների շնորհիվ կապեր պահպանել հասարակության
տարբեր ներկայացուցիչների հետ-----
- 4) Ավանդական և էլեկտրոնային գովազդի միջոցով ներկայացնել հայ գիրքը և
առհասարակ տպագիր-մշակութային ժառանգությունը-----
- 5) Օժանդակել ընթերցողների և հասարակության կրթությանը և մոտավոր զարգաց-
մանը-----
- 6) Բոլորը միասին-----

7. Ըստ Ձեզ ի՞նչ առաջնային հիմնախնդիրներ են դրված գրադարանի առջև-----

8. Գրադարանի կառավարման համակարգում ի՞նչ առաջարկներ ունեք, ի՞նչ նորամուծություն կառաջարկեք-----

9. Ընդհանուր առմամբ ինչպես կգնահատեք գրադարանի իրականացրած աշխատանքներն ու գործառույթները-----

1) Գերազանց--- 2) Լավ--- 3) Բավարար--- Ցանկանում եմ-----

10. Ի՞նչ ծառայություններ կառաջարկեիք, որպեսզի գրադարանը մատուցեր. նշեք Ձեզ անհրաժեշտ անվճար և վճարովի ծառայությունների կոնկրետ տեսակները-----

11. Ըստ Ձեզ ի՞նչ քայլեր և միջոցներ պետք է ձեռնարկել, որպեսզի ընդլայնվի գրադարանի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության այլ գրադարանների հետ.

1) Դիմել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ֆինանսական միջոցներ հատկացնելու նպատակով-----

2) Դիմել ՀՀ մշակույթի նախարարության աջակցությանը-----

3) Դիմել զանազան գիտակրթական, մշակութային և բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարերարների օժանդակությանը-----

4) Ավանդական և էլեկտրոնային գովազդի միջոցով բարձրացնել գրադարանի հեղինակությունը-----

5) Ձեր տարբերակը-----

12. Ըստ Ձեզ ինչպիսին է գրադարանը տեխնոլոգիական հագեցվածության /համակարգիչներ, տպիչներ և այլն/ տեսանկյունից.

1) Գերազանց--- 2) Լավ--- 3) Բավարար--- 4) Ցանկանում եմ-----

13. Ինչպե՞ս եք կարծում, որքանո՞վ է բարենպաստ գրադարանն աշխատանքային գույքի և կահավորվածության տեսանկյունից-----

14. Ինչի՞ փոփոխությունը կհանգեցնեք Ձեր աշխատանքի արդյունավետության բարձրացմանը -----

15. Այլ առաջարկություններ-----

SUMMARY

The history of establishing the library system in Noyemberyan region is provided. To examine existing problems and to suggest some solutions, sociological survey is conducted.

ԲԱՅՐԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ Ն.

Եգիպտոսի հայկական թեմական խորհրդի անդամ,
հասարակական գործիչ, բանասեր

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ
(հիմնադրության 185-ամեակին առիթով)

Մկիզբը նախորդ համարում

25.«ԹՈՒՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ և ԸՆԿ.» Տպարան - Կազմատուն -
Գահիրե , 1922 -1960ականներ

Տպարանը հիմնուած է Արշակ և Արմենակ Թուրեան եղբայրներու կողմէ 1922-ին, հաստատուելով թիւ 7, Մատապեղ փողոց (Մազլում Փաշայի շէնքին մէջ):

Լոյս տեսած է Փրոֆ.Բ.Ս.Մէքլէհէնի հայատառ «Ուղերձ»ը 1922-ին: ¹

Հաստատութիւնը ճանչցուած է իբրեւ նրբաճաշակ կազմատուն, տպագրելով նաեւ զանազան լեզուներով հատորներ:

26.«ԱՐԳՈՍ» Տպարան - Գահիրե , 1924 -1977

Տպարանին հիմնադիրը, Տէր եւ Տնօրէնը, հրատարակիչը եւ գործող տպագրիչը եղած է Սոկրատ Սարրաֆեան 1924-ին, իր եղբօր Սարգիսին հետ:

Տպարանը հաստատուած է *թիւ 16, Թէվֆիք փողոց, **թիւ 8, Էլֆի Պէյ փողոց ***թիւ 10, Զաքարիա Ահմէտ փողոց, Գահիրե, - Փոստարկը թիւ 1749:²



Սոկրատ Սարրաֆեան նախաձեռնած է թարգմանչական աշխատանքի եւ 1934-ին հիմնած «Արգոս» հրատարակչական ընկերութիւնը: Ան, «Տարգոս» գրչանունով եւ իր թարգմանութեամբ հրատարակած է շաբաթական պրակներով 43 հատորներ, որոնցմէ 27-ը անթուակիր են: ³

Հետագային, տպարանին տէրը եւ տնօրէնը եղած է Գառնիկ Յակոբեանը, որուն արտօնատիրութեամբ լոյս տեսած եւ տպագրուած է «Հոկտեմբեր» ամսագիրը (Նոյ.1974 - Հոկտ.1977): ⁴

Տպագրուած են Հ.Բ.Ը.Մ.ի «Տեղեկատու» պարբերականին 1968-էն 1975-ի համարները: Իսկ «Փափագեան» տպարանին գործակցութեամբ լոյս ընծայուած է Արմենակ

¹Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 314

²«Լուսաբեր» երկօրեայ, 1904, Գահիրե, էջ 168

³Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 186-189

⁴Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 310

Պետեւեանի մեծարժէք «Պատկերազարդ Բազմալեզու Բուսաբանական Բառարան»ին (1936):⁵

27.«ՅԱԶԱՊԼԱՐ» - «ՄԱՍԻՍ» Տպարան - Գահիրե , 1926 -1932

Տպարանը հիմնադիրը եղած է գրաշարապետ Յ.Ազապլար 1926-ին:



Կոչում՝ Է նաեւ Տպարան «ՄԱՍԻՍ» և հաստատում՝ Գահիրեի Ֆակկալա թա-
ղաշրջանին թիւ 8, Քասր-էլ-յուլում փողոցի հասցէին :

«Յ.Ազապլար» տպարանն լոյս տեսած են Գրիգոր Նարեկացիի «Նարեկ»ը (1926), Արմեն Շիրտանեանի «Թամարա» վէպը (1930), նաեւ «Փունջ» պարբերականի 1930-ի համարներ, իսկ «Մասիս» տպարանն՝ երեք հատորներ:⁶

28.«ԱՄԻՐԱՅԵԱՆ և ԸՆԿ.» Տպարան - Գահիրէ , 1926 -1940


Տպարանին հիմնադիրը եղած է Արամ Ամիրայեան 1926-ին: Հետագային, սեփականատիրութիւնը ստանձնած է «Ռօզ Մաթոսեան և Հնկ.»ը, 1940-ին:

Տպագրուած է Արշակ Սեդրոսեանի «Առետուր եւ Հաշիւ» Ա.հատորը, 1936-ին:
Ընդհանրապէս եղած է առետուրական գործառնութիւններու հաստատութիւն:

29.«ԼՈՒՍԱՐՁԱԿ» Տպարան - Գահիրէ , 1926-1928

Տպարանը հաստատուած է Ս.Դ.Ն.Կ.ի Գահիրէի Մասնաճիւղին նախաձեռնութեամբ, հրատարակելու համար «**Լուսարձակ**» շաբաթաթերթը (1926-1928, 1-94 համար), արտօնատէր ունենալով Սարգիս Մուսայէլեանը:⁷

Տպարանին հասցեն եղած է թիւ 48, Ֆակ-
կալա Փողոց - Գահիրէ:



Այստեղ տպագրուած են «Սֆինքս» շաբաթաթերթին Գահիրէի 1928-ի քանի մը թիւերը: Նաեւ «Համեմատական Դրութիւն» պրակը և Սուֆեան Յ.ի «Եգիպտոսի Հայ Մամ-լուքներն ու Իշխանները Ֆաթիմեան Շրջանին» գրքոյկը 1928-ին: ⁸

⁵ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոբթ. Ա.Ն. Պալյամեան, 2012, Գահիրէ, թիւ 762

Հայ Մամուլը Եզիպտոսի Մէջ, Տոթթ. Ս.Ն. Պալրամեան, 2005, Գահիրէ, էջ 290

⁶ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոբթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 413, 491

⁷ «Լուսարձակ» Շաբաթաթերթ, 1927, Գահիրե

⁸ Հայ Գիրքը Եզիպտոսի Մէջ (1888-2012), Տոբթ.Ս.Ն.Պալրամեան, 2012, Գահիրէ, թիւ 458

Հայ Մամուլը Եզիպտոսի Մէջ, Տոթթ. Ս.Ն. Պարլամենան, 2005, Գահիրէ էջ 158

30. «ՅԱԲԷԹ-ՊԱՂՏԱՍԱՐ» Տպարան - Գահիրե, 1927-1937

«ՅԱԲԷԹ» Տպարան - Գահիրե, 1946-1957

Տպարանին հիմնադիրը եւ սեփականատերը եղած է Յաբեթ Պ. Խարախան-եան 1927-ին, տպարանը հաստատելով թիւ 11, Քանթարա ել Կետիտա Փողոց, Տարպ ել Կեննա - Գահիրե:

Հետագային, տպարանին արտօնատերը եղած է Թադէոս Գալֆայեան:



Տպարանը Գահիրեի մէջ, յաջորդաբար հաստատուած է * թիւ 27, Մադրապի Փողոց , ** թիւ 133(12B), Տուպրէ փողոց , Թէվֆիքեյա , *** թիւ 1, Քասր ել Լու-լուա Փողոց Ֆակկալա, **** թիւ 107, Ռէն Նազլի Պողոտայ , ***** թիւ 2, Կալալ Փաշա փողոց, թատրոն Մաժեթիքի դիմաց:

Տպագրուած են «Հրեղէն Սիւն» հոգեւոր՝ (1927-1933), «Կայծակ» մարմնակրթական՝ (1929-1930), «Համասպրամ» ընկերային՝ (1930 թիւ 1), «Զարթօնք» գրական (1939) պարբերականները, Յարութիւն Մանավեանի 1947,1948,1949,1951 եւ 1953ի «Սարկաւազին Տարեցոյց»ները: ⁹

Լոյս տեսած են նաև 1928էն 1937 թուականներուն՝ «Յաբեթ-Պաղտասար Տպարան»ի՝ թիւով 14 հրատարակութիւնները եւ «Յաբեթ տպարան»ի՝ թիւով 7 զանազան բնոյթի հատորները 1946-էն 1957 թուականներուն: ¹⁰

31.«ԳԱԼՖԱ» Տպարան - Գահիրե, 1932-1939

Տպարանին հիմնադիրը, Տէր եւ Տնօրէնը եղած է Գրիգոր Գալֆայեան 1932-ին, հաստատուելով թիւ 7, Քէնիսա ել Կետիտա Փողոց հասցէին:



Տպարանէն լոյս տեսած են «Ալպոմ» պատկերազարդ տարեգիրքը 1932-ին եւ «Գիր Եւ Արուեստ» եգիպտահայ պատկերազարդ եռամսեային միակ թիւը 1938-ին: Նաեւ՝ Փրոֆ.Յ.Թ.Գալաեանի «Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի»ն (1938) եւ կարգ մը հատորներ: ¹¹

Տպագրուած են զանազան առիթներու բացիկներ, արաբերէն եւ այլ լեզուներով արուեստի գործերու հրատարակութիւններ:

⁹ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 172, 180, 182, 230, 174

¹⁰ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 268

¹¹ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, 529, 822, 823, 839, 882

32.«ՅԱԿՈՐ ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան - Գահիրե , 1932-1946

Տպարանին հիմնադիր, Տեր եւ Տնօրէնը եղած է Յակոբ Փափազեան 1932-ին: Տպարանին հասցէն եղած է * Իպրահիմ Փաշա Փողոց (թիւ 6 , Հարէթ Ֆահիտ), իսկ հետագային՝ ** թիւ 3, Միտան Սուարէս, Գահիրե:




Տպագրուած են «Հայ Դպրոց»ի 1938-ի պրակը , «Փունջ» Մանկապատանեկանի 1946-ի համարները, «Արմաւենի» Տարեգիրքը (1937-1938) եւ Յարութիւն Մանավեանի 1935-ի «Սարկաւազին Տարեցոյց»ը : Նաեւ, Վահան Զարդարեանի «Յիշատակարան Մատենաշար»ի պրակները (1932-1939) , Արշակ Ալպոյաճեանի «Պատմութիւն Հայ Կեսարիոյ» Ա. եւ Բ. հատորները (1937), Հայր Ռ.Քօսեանի «Թուաբանութիւն» դասագրքերու Ա.էն Զ. շարքը (1937-1939) եւ զանազան վիպային հատորներ: ¹²

Տպարանը մասնագիտացած է առաւելապէս առեւտրական տպագրական աշխատանքներու:

33.«ՆԵՂՈՍ» Տպարան - Գահիրե, 1935-1952

Տպարանը հաստատուած է 1932-ին, Տեր եւ Տնօրէն ունենալով Արմենակ Զիլինկի-րեանը («Արեւ»ի նախկին գրաշարապետը):

Հաստատութեան հասցէն եղած է թիւ 1, Կալալ փաշա փողոց (Մաժէսթիք թատրոնին ճիշդ դիմացը), ապա, թիւ 12 եւ հուսկ 25, Նեկիպ Էլ Բիհանի փողոց (Քանթարէթ Էլ-Տէքքա), Գահիրե: ¹³



Տպարանէն լոյս տեսած են «Հայ Դպրոց» (Բ.հտր., 1935) եւ «Հազարումէկ Գիտելիքներ» (1938) պարբերականները, նաեւ «Էջեր Հայ Գրականութենէն» (Ա.հտր. 1942) եւ «Նեղոս» մատենաշարի հատորներուն շարքը: ¹⁴

Հետագային, տպարանը փոխանցուած է Պերճ Թուղլաճեանին:

Տպարանին գրաշարներէն եղած է Արմենակ Արսլանեան: ¹⁵

¹²Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, Գահիրե, թիւ 774,775, էջ 230,246

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 196,156,208,174

¹³Հայահամար Եգիպտոսի եւ Սուտանի - 1939», Գահիրե, էջ 163

¹⁴Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե , թիւ 196,212,238


Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 262

¹⁵Հայահամար Եգիպտոսի եւ Սուտանի - 1939», Գահիրե, էջ 94

34.«ՄԻՆԷՎԷՊ» Տպարան - Գահիրե , 1938

Տպարանին հասցեն եղած է թիւ 3, Տուարե փողոց , Գահիրե: ¹⁶

Տպում են, «Մինեվէպ» մատենաշարի կողմէ թարգմանուած եւ հրատարակուած վիպային 8 հատորները 1938-ին, գրաշարութեամբ Միսակ Թօփալեանի: ¹⁷



35.«ՍԵՒԱՆ» Տպարան - Գահիրե , 1938-1940



Տպարանը հաստատուած է 1938-ին, Իպրահիմ Փաշա փողոց – թիւ 3, Հարեթ Ֆայէտ, Գահիրե:

Տպարանէն լոյս տեսած են Գահիրեի Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի «Գրասերի Առաջնորդ»ի Ա. և Բ. տետրերը(1938-1939), Ս.Ֆ. Գոնսիլեանի «Հազարումէկ Գիտելիքներ»ուն Բ. հատորը (թիւ 11-20/1939) եւ Դաւիթ Շահլամեանի «Զարթօնք»ին Բ.հատորը (թիւ 6-10 / 1940), նաեւ Բ.Թաշեանի «Հայկարան» դասագիրքերէն (1940) եւ զանազան հատորներ: ¹⁸

36. «ՆՈՒՊԱՐ» Տպարան - NUBAR PRINTING HOUSE - Գահիրե , 1939 - «ՆՈՒՊԱՐ ՏԻՃԻԹՇԸ» Տպարան - NUBAR DIGITAL , 2003 -

Տպարանին հիմնադիր-սեփականատէրը եղած է Պօղոս Սիմոնեան 13 Նոյեմբեր 1939-ին, թիւ 14, Ղէյթ Էլ Նուպի փողոց (Սէտնաուի վաճառատան ետեւը) հասցէին:

Տպարանը հետագային յաջորդաբար հաստատուած է *թիւ 56, Խալլաթ Փողոց, Շուպրա, **Ապտ Էլ Ազիզ փողոց (Սինեմա Քարնաքի կից), ***Թերաա Էլ Պուլաքլա, Շուպրա (Մարտ 1959) եւ ****թիւ 6ա, Մատրասէթ Էլ Մուլլիմին փողոց, Ռօտ Էլ Ֆարակ, Գահիրե:



«Նուպար» Տպարանը սկզբնական շրջաններուն գործած է իր ժամանակի կապառէ տառերու գործածութեան դրութեամբ, որուն հետեւած է վիմատպագրութեան կիրարկումը Խալլաթ եւ Ապտ Էլ Ազիզ փողոցներու իր վայրերուն մէջ:

¹⁶Հայահամար Եգիպտոսի եւ Սուտանի - 1939», Գահիրե, էջ 61

¹⁷Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 262
Հայահամար Եգիպտոսի եւ Սուտանի - 1939», Գահիրե, էջ 123

¹⁸Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 238,239
Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե , էջ 220,212,230

1959-ին սկսեալ, Նուպար եւ Հրաչ Միմոնեան եղբայրները իրենց հօրենական տպարանը օժտած են արդիական Ֆօթօ-Լիթո-Օֆսէթ կազմաձևերով եւ նորագոյն տպագրական դրութեամբ:



Իսկ 1974-ին սկսեալ, տպարանին մէջ գործած են Հայտէլպրըկ մականիշով գունաւոր տպագրութեան արդիական կազմաձևերը:

Տպարան «Նուպար»ի արդիական սարքաւորումներով նոր կառուցը հաստատուած է 2001-ին Գահիրէի մերձակայ Էլ Ուպուր քաղաքին մէջ, Էլ Մանթէքա Էլ Սէնաէյա, թիւ 13 փողոց, թիւ 13 շէնքի հասցէին, «Էլ Նուպար» տպարաններ վերանուանումով եւ սեփականատիրութեամբ՝ Նուպար եւ Հրաչ Միմոնեան եղբայրներու:

Միւս կողմէ, Շուպրայի նախորդ վայրին մէջ, 2013-էն ի վեր կը գործէ «Նուպար Տիճիթըլ» (NUBAR DIGITAL) անունով եւ թուայնացումի նորագոյն դրութիւններով գործող տպարանը, «Նուպար Միմոնեանի եւ Որդիք»ի սեփականատիրութեամբ:



«Նուպար» տպարանի աւելի քան 75-ամեայ տարեգրութեան ընթացքին լոյս տեսած են եգիպտահայ մամուլի աւելի քան քսան պարբերականներ, իրենց շաբաթական, ամսական, եռամսեայ, կիսամեայ եւ տարեկան բնոյթներով: ¹⁹

Հրատարակուած են շուրջ 150 հատորներ եւ գրքոյկներ, ինչպէս նաեւ միութենական ձեռնարկ-հանդիսութիւն-ոգեկոչումներու բազմատասնեակ պրակներ եւ յայտագիրներ: ²⁰

Տպարանը իր հիմնադրութեան օրերէն խրախուսողը եղած է հայատառ հատորներու եւ պարբերականներու տպագրական նախաձեռնութիւններուն, զուգահեռ՝ օտարալեզու հրատարակութիւններու, բացիկներու, ծանուցումներու եւ յայտագիրներու: Ներկայիս, իր ունեցած լայնածիր տպագրական գործունէութիւնը ընդգրկած է եգիպտական շուկայէն դուրս արաբական, եւրոպական եւ ամերիկեան ցամաքամասի երկիրներ:


¹⁹ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 388

²⁰ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրէ, էջ 268-269

37.«ՌՈԶ ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.» Վիմատպարան - Գահիրե , 1940-1944

Նախկին՝ «ԱՄԻՐԱՅԵԱՆ ԵՒ ԸՆԿ.» Տպարան (1926)

Տպարանին հասցեն եղած է Ուապուր Սէուտի փողոց, Ռոտ Էլ Ֆարակ, Գահիրե:




Այստեղ տպագրուած են «Հայաստան Դաբերու Ընդմէջէն» եւ Առաքել Պատրիկի «Նկարաշարք Հայ Կեանքէն»ը 1944-ին: ²¹

Տպարանը մասնագիտացած է նաեւ խաւաքարտէ տուփերու շինութեան արուեստով, ինչպէս նաեւ խաղաքարտերու «Ամիր» մականիշի պատրաստութեամբ:

38. «ՆՈՐ ԱՍՏՂ» Տպարան - The New Star Press - Գահիրե , 1941-1962

Տպարանը հիմնուած է 1941-ին, Արշակ Ալպոյաճեանի եւ Սեպուհ Շալճեանի նախաձեռնութեամբ:

Արշակ Ալպոյաճեան տպարանին տնօրէնութիւնը ստանձնած է 1945-1949:



Տպարանը հաստատուած է *թիւ 7, Տարամալի Փողոց ,Պապ Էլ Լուք ,Գահիրե- Հեռ.52130 (1948), իսկ 1957-ին՝ **թիւ 89, Յուլիս 26 Փողոց (Հարէթ Էլ-Լոքանտա), Պուլաք , Գահիրե – Հեռ.58592:

Տպարանին մէջ գրաշարութիւն կատարած են Ազատ Խաչատուրեան եւ Յարութիւն Մոռալեան:

«Նոր Աստղ» տպարանէն լոյս տեսած են Գալուստեան Ազգային Վարժարանի «Տեղեկատու Պրակ»ին Բ. և Գ. թիւերը (1945-1946), «Կեանք եւ Գիր» գիրք յիշատակարանի (Բ. տարի 1947ի) համարները, Հայկ Ժամկոչեանի կազմած «Կեանք եւ Գիր» տարեգիրքը (1948), Հ.Բ.Ը.Մ.ի «Տեղեկատու»ին Ա. և Բ. տարիները (1956-1957) եւ անոր յաւելուած՝ «Մանկական Տեղեկատու»ի միակ պրակը (1957): ²²

Տպագրուած են Արշակ Ալպոյաճեանի (1945-էն-1961), Գաբրիէլ Լազեանի (1946) եւ Վահան Թէքէեանի (1950) հատորները, Բենիամին Թաշեանի (1950-էն 1960) «Հայկարան»ներէն գիրքեր, «Մտաւորական Սպասարկութեան Գրասենեակ»ի և այլ հրատարակութիւններ: ²³

²¹ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 998,1002

²² Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 248, 246, 270, 290, 292

²³ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 193, 199, 200, 201, 265

39. «ՆԱՍԻԲԻԱՆ» Տպարան - Գահիրե , 1943



Տպարանին լոյս տեսած են Վահան Թեքէեանի «Տաղարան» քերթուածներու հատորը (1944), Սօ. Ե. Յակոբեանի պատրաստած «Հայկական Պատարագի Տաղեր եւ Մեղեդիներ» ձայնագրութեամբ հատորը (1963) եւ «Մահերգ Նահատակաց» պրակը (1965):²⁴

40. «ԹՈՐՈՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ» Տպարան եւ Զինկոկրաֆ - Գահիրե, 1943-1970

Տպարանը հաստատուած է 1943-ին, Թորոս Խաչատուրեանի կողմէ, թիւ 2,-Ամիր Քադատար փողոցի հասցեով (Քասր Էլ Նիլ կամուրջին մօտ):²⁵

Այստեղ լոյս տեսած է «Շարականք Ծաղկազարդի, Աւագ Շաբթու եւ Ս.Զատիկի» ձայնագրեալ գիրքը 1952-ին:²⁶

Զանազան լեզուներով կատարուած տպագրական գործառնութեան կողքին՝ հաստատութիւնը ճանչցուած է իբրեւ Զինկոկրաֆ արուեստի մասնագիտացած հաստատութիւն:

41. «ԱՐԱՄ - ՊԷՐ» Տպարան - Գահիրե , 1948

Տպարանը հիմնուած է Տիգրան Պերպերեանի կողմէ 1948-ին, ըլլալով՝ Զինկոկրաֆ արուեստի մասնագիտութեամբ գործող հաստատութեան մէկ ճիւղը:

Տպարանին լոյս տեսած է Դաւիթ Շահլամեանի «Կեանք եւ Գիր» Հայ երիտասարդութեան Գիրք-Յիշատակարանի Գ.հատորին համարները:²⁷



42. «ՎԻԹՐՈՐԻԱ» Տպարան - VICTORIA PRESS - Գահիրե , 1963



Տպարանին սեփականատէրը եղած է Պերճ Թուղլաճեան, տպարանը հաստատելով թիւ 25, Նէկիպ Էլ Ռիհանի փողոց, Գահիրե հասցէին:

Այստեղ տպագրուած է Արմէն Տատուրի «Անապատի Խորերէն» հատորը (1963) եւ Հ.Բ.Ը.Միութեան «Տեղեկատու» պարբերականին 1963-ի 2,3 և 4 համարները:²⁸

²⁴ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 994, 1544, 1560

²⁵ Հայահամար Եգիպտոսի եւ Սուտանի - 1939», Գահիրե, էջ 127

²⁶ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 1282

²⁷ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 246

²⁸ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 1549
Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 290

43. «ԱՖՐԻԲՐՆ ՓՐԷՍ» Տպարան - AFRICAN PRESS -

«المطبعة الأفريقية»- Գահիրե, 1969 -

Տպարանին հիմնադիրը, Տեր եւ Տնօրէնը եղած է Պերճ Թերզեան 1969-ին, հաստատուելով թիւ 15, Պուսթան Էլ Տէքքա փողոց, Էմատ Էլ Տին, Գահիրե հասցէին:

Հետագային, տպարանը արդիական սարքաւորումներով՝ հաստատուած է թիւ 2, Թերաա Էլ Իսմաիլէյա փողոցի հասցէին (Էլ Նէսիկ գործատան անկիւնը):



Տպարանէն լոյս տեսած են Հ.Բ.Ը.Մ.ի «Տեղեկատու» պարբերաթերթին 1976-էն 1981-ի համարները: Տպուած են նաեւ «Տեղեկատու»ի թիւերէն յօդուածներու “Յաւելուած” պրակները:²⁹

Այստեղ տպուած են՝ Պերճ Թերզեանի հեղինակած, համադրած եւ մեկենասութիւնը ստանձնած հրատարակութիւններ:³⁰

Տպարանը մասնագիտացած է խաւաքարտէ տուփերու եւ զանազան տեսակի քարտերու նորագոյն չափանիշերով գունաւոր տպագրութեան:

ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ ՀԱՅԱՏԱՌ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԱԾ ՕՏԱՐ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ

1.«ՆԻՔ ՔԱՐԹԵՐ» Տպարան - NICK CARTER PRESS-Գահիրե

Տպարանէն լոյս տեսած են Ալէքսանտր Տիւմայի «Ժօզէֆ Պալսամօ» վէպին երկրորդ, երրորդ եւ հինգերորդ հատորները (1915,1916):³¹

2. «ՄԱՆԻԴԻՏԻՍ» Տպարան - MANIKIDIS PRESS - Գահիրե

Տպարանէն լոյս տեսած է Թովալեան մրցանակին արժանացած Հմայեակ Ս.Ազատեանի «Բաբելոն» անունով կատակերգախառն գրքոյկը (1918):³²

3. «ԷԼ ՆԻԼԿՐՕՆԱԿԱՆ» Տպարան - THE NILEMISSION PRESS - Գահիրե

Էլ Մանախ փողոց թիւ 37, հասցեով այս տպարանէն լոյս տեսած են «Եկեղեցական Միութեան Համաժողով»ի երկու գրքոյկները 1921-ին:³³

²⁹ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 267

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 290

³⁰ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 267

³¹ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 178,179,202

³² Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 252

³³ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 303,304

4. «ՖՕՍ» Տպարան - PHOS PRESS – Գահիրե




«Ֆոս» Յունարեն օրաթերթի թիւ 13, Կալալ փողոցի տպարանին մէջ տպուած են «Արեւ» օրաթերթի 27 Մարտ 1931-էն մինչեւ 1942-ի Մայիսի քանի մը համարները, ինչպէս նաեւ՝ «Կեանք Եւ Գիր» գիրք-յիշատակարան ամսագրին նոր շրջանի 1948-էն 1950-ի եռամսեայ պրակները:³⁴

5. «ՊԱՐՏԱՃ» Տպարան - IMPREMERIE BARDAGE - Գահիրե

Տպարանին մէջ տպուած են «Արեւ» օրաթերթի 22 Մայիս-28 Յունիս 1942-ի համարները: ³⁵

6. «ՇՈՒՇԱ» Տպարան - «دار شوشه للطباعة» - Գահիրե

Թիւ 3, Էլ Սայետ Էլ Պէպլաուի փողոցի, Ապտինի թաղաշրջան հասցեով այս տպարանին 1963-էն ի վեր տպագրուած է «ԶԱՀԱԿԻՐ» շաբաթաթերթը: ³⁶



մէջ,

7. «ՓՕԼ ՊԱՐՊԷՅ» Տպարան - IMPREMERIE PAUL BARBEY - Գահիրե

Տպարանին հասցէն եղած է թիւ 8, Իպրահիմ Փաշա փողոց, Հարէթ Ֆայէդ, Գահիրե:



Հաստատութեան տպագրական գործերու հսկիչ եւ մեքենագործ եղած է Արշալիր Մանավեան: ³⁷

Տպարանէն լոյս տեսած են Յարութիւն Մանավեանի(Սարկաւազ) 1945-ի եւ 1946-ի «Եգիպտահայ Տարեցոյց»ները, Յակոբ Նալպանտեանի «Մեր Լեզուն» դասագիրքերու շարքը եւ Ալեքսանտր Սարուխանի ֆրանսատառ “LA CARAVANE” (Կարաւան) եռօրեայ երգիծաթերթին 1939-ի վերջին 15 համարները:³⁸

³⁴ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 106, 246

³⁵ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 106

«Արեւ» Օրաթերթի Մատենագիտութիւն, Յ. Տէր Պետրոսեան, 1990, Գահիրե, էջ 91

³⁶ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, 262, 264

³⁷ «Սարկաւազին Տարեցոյցը», Յ. Մանավեան, 1939, 1949, Աղեքս.-Գահիրե,

³⁸ «Սարկաւազին Տարեցոյցը», Յ. Մանավեան, 1945, 1946, Աղեքս.-Գահիրե

Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, էջ 244

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 350

8. «ՀԱՊԻՊ-ՄԱՆՍՈՒՐ» Տպարան -

HABIB-MANSOUR Press - Գահիրե



Տպարանին հասցեն եղած է թիւ 3, Հարե Էլ Չահար (Շէրըրժ Պանդոկին դիմաց) Գահիրե:

Այս տպարանէն լոյս տեսած են «Աւետարանի Չայն» Հայ Աւետարանչական Ընկերակցութեան կրօնաբարոյական ամսաթերթը (1939-1940) եւ Վահան Զարդարեանի «Յիշատակարան»ին 1941-ի եւ 1942-ի տարեգիրքերը: ³⁹

9. «ՈՒԱՀՊԱ» Տպարան - IMPRIMERIE WAHBA - Գահիրե

Ուահպա տպարանին հասցեն եղած է քաղաքակեդրոն Էլուի փողոց, Գահիրե (Մարքօնի հաստատութեան դիմաց):

Յովհաննէս (Ժազ) Գալուքեան «Ուահպա» տպարանին մէջ տպած է Յովհաննէս Եաղճեանի «Երկու Սրտեր» անթուակիր վէպը: ⁴⁰



10. «ՓՐՕՔԱՅԻԱ» Տպարան -

IMPRIMERIE PROCACCIA - Գահիրե



Եգիպտահայ Ներգաղթի Կեդրոնական Կոմիտէին կողմէ հրատարակուած «Ծաղկեալ Ս.Հայաստան» պատկերներու անթուակիր ալպոմը լոյս տեսած է «Փրօքացիա» տպարանէն (1948 ?): ⁴¹

11.«ՏՐԻՄ ՓՐԷՍ» Տպարան - DREAM PRESS - Գահիրե

Տպարանէն լոյս տեսած է Հայկ Աւագեանի խմբագրութեամբ եւ աշխատասիրութեամբ՝ Գահիրեի Հ.Բ.Ը.Մ.ի Սաթենիկ Ճ. Չազըր Հիմնադրամի հրատարակութիւններու շարքին՝ Ալ. Սպենդիարեանի «Գուշակուհին» ձայնագրեալ պրակը, 2000-ին: ⁴²

12.«ԱՐԹ ՖԷՇՆ» Տպարան - مطبعة ارت فيشن - Գահիրե

Տպարանին մէջ տպուած է Յովհաննէս Տէր Պետրոսեանի «Հայ Ժողովուրդին Գոյամարտը» աշխատասիրութեան Գ. հատորը, 2009-ին: ⁴³



³⁹Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, թիւ 222,234

⁴⁰Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, թիւ 1870

⁴¹Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 1878

⁴²Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 1794

⁴³Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 1853

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ

1. «ՂԵԻՈՆԴ ՔՀՆՅ. ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1888-1889

Տ.Ղեւոնդ Քինյ. Փափազեան գրաշարութեան արուեստի մէջ ունեցած սիրողական հակումով, ձեռք բերած է տպագրական գիրերու հաւաքածոյ մը եւ զայն Եգիպտոս բերելով, տողաշարութիւն կատարած եւ Անտոն Ռշտունիի խմբագրութեամբ ու Վահան Մամասեանի վարչական գործակցութեամբ՝ Աղեքսանդրիոյ մէջ հրատարակած է տեղւոյն առաջին հայատառ «Նեղոս» լրագիրը:⁴⁴



«Նեղոս» Շաբաթաթերթը տպագրուած է Ֆ.Միգրահիի «Ինիվերսալ» տպարանին մէջ եւ տեւած է 4 ամիս (18 թիւ), 2 Յունուարէն Ապրիլ 1889:

Թերթին հասցէն եղած է, Եգիպտական Փոստարկի թիւ 275, Աղեքսանդրիա, Եգիպտոս - Boite No.275, (Poste Egyptienne) Alexandrie - Egypte.

Ղեւոնդ Քինյ. Փափազեանի տպարանէն լոյս տեսած է 60 էջնոց եգիպտահայ առաջին գրքոյկ՝ «Դատապարտեալն Շուշան» անունով վիպակը 1888-ին, Մկրտիչ Թիւրին-ճեանի հեղինակութեամբ:

Փափազեան Քահանային Եգիպտոսէն մեկնումով եւ գրաշարի չգոյութեան պատճառով, դադրած է նաեւ «Նեղոս»-ի հրատարակութիւնը:

2. «Գ.ՆԱԶԱՐԷԹԵԱՆ» Տպարան-Փորագրատուն - Աղեքսանդրիա , 1900 -1909

Տպարանը հիմնուած է 1900-ին, նախաձեռնութեամբ Գրիգոր Նազարէթեանի, հաստատուելով թիւ 16, Սթամպուլ փողոց, Աղեքսանդրիա հասցէին:

Տպարանը միաձուլուած է Սմբատ Բիրատի «Փիւնիկ» տպարանին հետ 1903-ին, անուանուելով «Միսուն» Տպարան, որ չէ յարատեւած՝ Սմբատ Բիրատի բաժանումով: ⁴⁵



Այստեղ տպագրուած են «Ազատ Խօսք» (1906), «Մտրակ» (1908) պարբերականները, 1908-ի «Արեւ» լրագիրը եւ Երուանդ Օտեանի «Ոմանց Տարեցոյց»ը (1909): Նաեւ՝ հայերէն եւ օտար լեզուներով գիրքեր, թերթեր եւ առեւտրական թուղթեր:


⁴⁴ Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952, 3.Խ.Թովուզեան, 1978, Երեւան, էջ 196

⁴⁵ Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952) 3.Խ.Թովուզեան, 1978, Երեւան, էջ 201

3. «ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆԵԱՆ» Տպարան - Գահիրե , 1900 -1901

«ԱՐԱՔՍ» Տպարան-Աղեքսանդրիա, 1917, 1925-1965, 1970-

«Արամ Ստեփանեան» տպարանը հիմնուած է Գահիրեի մէջ 1900-ին, հիմնադիր-սեփականատէր-տնօրէն ունենալով Արամ Ստեփանեան անունով գրասէր երիտասարդը: Կարճատեւ շրջանէ մը ետք, տպարանը փակուած է եւ Աղեքսանդրիա փոխադրուած՝ անոր տիրոջ գրաշարութեան արուեստի հանդէպ ունեցած հետաքրքրուածութեան պատճառով:



Աղեքսանդրիոյ մէջ, Ստեփանեան ունեցած է համեստ նախնական տպարան մը, եւ 1916-1917-ին՝ տեղւոյն գրասէր-ուսանողաց միութիւններուն հետ լոյս ընծայած է «Արաքս» անունով լրագրին երեք համարները:

Ստեփանեան, գրաշարապետութիւնը կատարած է 1915-ին հիմնուած «Արեւ» լրագրին, եւ տասնամեակ մը ետք, նախաձեռնած՝ «Արաքս» անկախ շաբաթաթերթին հրատարակութեան 1925-ին:

Այստեղ, տպարանը վերանուանուած է սկսած է գործել «ԱՐԱՔՍ Տպարան» եւ «Հայկական Տպարան Արաքս» անուններով, հաստատուելով Պուլվար Ռամլէ թիւ 13 հասցէին: Այստեղէն, տպարանը փոխադրուած է թիւ 5, Մահմուտ Փաշա Ֆալաքի փողոց, իսկ 1928-ին՝ թիւ 7, Բլեոփաթրա փողոց, Աղեքսանդրիա:

Տպարանը ստանձնած է ամէն լեզուներով տպագրական գործեր, ամենայն ճշտապահութեամբ եւ չափաւոր գիներով:⁴⁶

Արամ Ստեփանեան յանկարծամահ եղած է Երուսաղէմ իր ուխտագնացութեան ընթացքին՝ 1947-ին: Շուարշ Ստեփանեան իր հօր մահէն ետք, տպարանին մէջ եւ մինչեւ իր հայրենադարձութիւնը՝ շարունակած է «Արաքս» Շաբաթաթերթի խմբագրութիւնը եւ գործակիցներու հետ ապահոված՝ թերթին մինչեւ 1965 եւ «Գրպանի Տարեցոյց»ներու (1941-1956) հրատարակութիւնը:



1970-ին, տպարանին տէրը դարձած է Ժամանակի ծանօթ «Զինկոկրաֆ Ժիրայր» հաստատութեան տէր՝ Ժիրայր Ասորեանը: Տպարանին հասցէն եղած է եւ ցարդ կը գոյատեւէ՝ թիւ 17, Սիտի Մէթուալլի փողոց, Աթթարին թաղ, Աղեքսանդրիա:

Ներկայիս, տպարանը կը գործէ հայր եւ որդի Ժիրայր եւ Լեւոն Ասորեաններու սեփականատիրութեամբ եւ ղեկավարութեամբ:

⁴⁶ «Ազատ Բեմ» Լրագիր, Աղեքսանդրիա , 1904, Գահիրե, էջ 37

Տպարանն լոյս տեսած են «Փիւնիկ»ի թիւերը (1901-1903), «Ազատ Խօսք»ի տետրերը (1902-1903), «Ժողովուրդ» (1-4 թիւ, 1903), «Թերթիկ» (1906), «Կրակ» (1906), «Սֆինքս» (1925-1927), «Արարա» (1926-1930), «Ամենուն Գիրքը» (1937), «Տեղեկատուութիւն» (2 թիւ 1946), «Արաքս» (1925-1965) եւ այլ պարբերականներ ու լրագիրներ, նաեւ Մարտիրոս Ոսկեանի «Եգիպտահայ Տարեցոյցը» (1919), «Արաքս Մատենաշար»ի 22 վիպային հատորները, թարգմանութեամբ՝ Շաւարշ Ստեփանեանի (1927-1940) եւ «Գրպանի Տարեցոյց»ները (1941-1956):⁴⁷

4.«ՓԻՒՆԻԿ» Տպարան - Աղեքսանդրիա, 1901-1903

Տպարանը հաստատուած է 1901-ին, Սմբատ Բիւրատի (Տէր Ղազարենց) նախաձեռնութեամբ, տպագրելու համար իր խմբագրած «Փիւնիկ» լրագրին շաբաթական համարները Աղեքսանդրիոյ մէջ (1901-1903):



Տպարանը միաձուլուած է «Նազարէթեան» Տպարանին հետ 1903-ին եւ կոչուած՝ «Սիսուան» Տպարան, սակայն միութիւնը չէ յարատեւած: ⁴⁸

5.«ԿԱՄՊԷԹԱ» Տպարան - Աղեքսանդրիա, 1902

«ԸԱՖՖԻ» Տպարան - Աղեքսանդրիա , 1907

Տպարանը հաստատուած և սեփականատէրը եղած է Տոքթ. Կարապետ Յ. Փաշայեան Խան 1902-ին :

«Կամպէթա» տպարանն լոյս տեսած են «Ազատ Խօսք»ի տետրերը (1902), «Հորիզոն» պարբերականը (1904), Հ.Բ.Ը.Մ.ի «Կանոնագիր»ը (1906) եւ «Տարեկան Տեղեկագիր»ը (բ.տարի, 1908):

Հրատարակուած են նաեւ, Տոքթ. Կարապետ Փաշայեան Խանի «Դպրոցական Առողջապահութիւն»(1905), «Վիպական Հաւաքածոյ»ներուն 5 հատորները (1906) եւ Ղեւոնդ Եպս. Շիշմանեանի «Իմ Աքսորի Կեանքը» (1906):



«Կամպէթա» տպարանը շրջան մը 1907-ին գործած է խումբ մը երիտասարդներու ղեկավարութեամբ «ԸԱՖՖԻ» տպարան անունով եւ տպագրած՝ Հ.Բ.Ը.Մ.ի «Կանոնագիր»ը , «Տարեկան Տեղեկագիր»ը (1907) եւ Առանձարի «Փրկիչներ» թատերախաղը (1907):⁴⁹

⁴⁷ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ

⁴⁸ Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Յ.Խ. Թովուզեան, 1978, Երեւան, էջ 201

⁴⁹ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 77

Տիպ ու Տառ , Թեոդիկ, 1912, Կ.Պոլիս, էջ 190

6. «ՄԻՍՈՒԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903 -1905

Տպարանը հաստատուած է 1903ին, «Նազարէթեան»ն «Փիւնիկ» տպարաններուն միաձուլումով, սեփականատիրութեամբ Սմբատ Բիւրատի և Գրիգոր Նազարէթեանի:



Կարճ ժամանակ ետք, Սմբատ Բիւրատ քաշուած ըլլալով, տպարանը յարատեւած է «Գ.Նազարէթեան» Տպարան անունով: ⁵⁰

Այստեղ տպագրուած են «Փիւնիկ» եռօրեայէն համարներ 1903-ին եւ «Միսուն» պարբերականին երկու համարները, 1905-ին:⁵¹

7.«ՓԵԹԱԿ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903

Տպարանին հիմնադիր-սեփականատէրը եղած է Սեփոն Թիւֆէնկճեան-1903-ին, տպագրելու համար համանուն «Փեթակ» շաբաթաթերթը: ⁵²



8.«ԱՍՔԱՆԱԶԵԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1903 -1904

Միհրան Ասքանազեան (նախորդ տնօրէնը Աղեքսանդրիոյ Ազգ.Վարժարանին) իր քեռայրին Լեւոն Մկրտիչեանի օժանդակութեամբ՝ Աղեքսանդրիոյ Պաքոսի շրջանին մէջ 1903-ին հիմնած է «Ասքանազեան» տպարանը, հրատարակելու համար «Պարտէզ» շաբաթաթերթը (1903-1904, 50 թիւ), եւ անոր յաւելուած՝ «Սուրբանդակ Պարտէզի»ն 10 թիւերը, 1904-ին: ⁵³



Ասքանազեանի անժամանակ մահով (Դեկտեմբեր 1904), Բարսեղ Օհանեան տպարանը գնած է 1904-ին եւ շարունակած՝ Երունդ Օտեանի «Ազատ Բեմ»ի հրատարակութիւնը: ⁵⁴

Տպարանին մէջ լոյս տեսած են նաեւ տարբեր լեզուներով թերթեր, գիրքեր եւ զանազան հրատարակութիւններ:

⁵⁰Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952) , Յ.Խ. Թովուզեան,1978,Երեւան, էջ 201

⁵¹Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 14, 44

⁵²Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 26

⁵³Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ , էջ 32,34

⁵⁴Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 189, 247

9. «ՀԱՅԵԼԻ» Տպարան-Գրատուն - Աղեքսանդրիա , 1903-1904

Տպարանին հիմնադիրը եղած է Տիրան Փափագեան 1903-ին, եւ մինչեւ իր մահը՝ Հոկտեմբեր 1904, տպագրած է «Հայելի» զանազան բերթեր (թիւ 261-էն 304):⁵⁵



«Տպարան-գրատուն Հայելի»-էն նաեւ լոյս տեսած է Մարք Դուէյնի «Մէկ Միլիոն Մղերլիննոց Պանքտոմար» հատորը 1904-ին: ⁵⁶

10.«ԹԷՔԷԱՆ ԵՒ ԸՆԿ.» Տպարան – Աղեքսանդրիա , 1905

Տպարանը հաստատած է Վահան Թէքէեան եւ Ընկ.ը 1905-ին: Ընկերութեան հիմնադիրները եղած են Վահան Թէքէեան եւ Միքայէլ Կիրճեան, հրատարակելու համար «Շիրակ» պարբերականը (Ա.տարի, 11 թիւ, Աղեքսանդրիա): ⁵⁷



Տպարանէն լոյս տեսած է նաեւ «Օրէնք» օրէնսգիտական շաբաթական պարբերականը 1905-ին: ⁵⁸


11. «ԽՆԱՅՈՂԱԿԱՆ» (Imp. Economique) «ՏԱՄԱՏԵԱՆ»

Տպարան - Աղեքսանդրիա, 1910-1919

Տպարանը հաստատուած է Միհրան Տամատեանի կողմէ 1910-ին, թիւ 16, Ապու Տարտար փողոց, Աղեքսանդրիա, հասցէին:

Տպարանական գործերու պատրաստութիւնը կատարուած է խնամքով եւ չափաւոր գիներով:⁵⁹

«Խնայողական» տպարանէն 1910-էն 1912, լոյս տեսած են 10 հատորներ, իսկ 11 Մայիս 1915-էն մինչեւ 27 Մարտ 1918 (թիւ 138) տպագրուած է «Արեւ» երկօրեան:



«Տամատեան» տպարանին մէջ տպուած են Կոմիտաս Վարդապետի «Սրբազան եւ Գեղջուկ Համերգ»ի Ձեռագ Տետրակը (1911), Ռիվուար Անտրէի «Դիւզն Զօնը» (1916) հատորը եւ Հ.Բ.Ը.Մ.ի «Տարեկան Տեղեկագիր»ը (1919): ⁶⁰

⁵⁵ «Ազատ Բեմ» Լրագիր, Աղեքսանդրիա, 1904 , Գահիրէ, թիւ 25

⁵⁶ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրէ, թիւ 42

⁵⁷ Տիպ ու Տառ , Թեոդիկ, 1912 , Կ.Պոլիս, էջ 189

⁵⁸ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 46

⁵⁹ «Արեւ» օրաթերթ, 1915 Յունիս, Աղեքսանդրիա-Գահիրէ

⁶⁰ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրէ, թիւ 119,223,285

12.«Ա.ԳԱՍԱՊԵԱՆ» Տպարան - Աղեքսանդրիա, 1913 -1939

Տպարանին հիմնադիր-սեփականատերը եղած է Արամ Գասապեան 1913-ին, և տպարանը հաստատված թիւ 17, Սալահ Էլ-տին փողոց, Աղեքսանդրիա հասցէին:



Տպարանէն լոյս տեսած են Երուանդ Թօլա-յեանի «Կավրօշ Եգիպտոս»ը (1914), Սուրէն Պարթեւեանի «Եգիպտահայ Տարեցոյցը» Դ. (1917) եւ Ե. (1918) տարիները, «Պրիսմակ» (1917), «Յառաջդիմասէր» (1917) եւ «Որբունի» (1919) պարբերականները, Տօքթ.Սալբի Մ.ի (Տօքթ. Արամ Սահակեան) «Ալեակներ և Խլեակներ»ը (1919), «Ասեղ» երգիծականը (1922), Լեւոն Աճեմեանի «Եգիպտահայ Տարեցոյց»ը (1925 եւ 1926), «Փունջ» (1925-1928) եւ «Դալարիք» (1939) տարեգիրք-պարբերականները:⁶¹


13.«ՏԸ ԼԻԻՔՍ» Տպարան - Imprimerie DE LUXE - Աղեքսանդրիա, 1918

«Խ.Վ. ԹԷԼԼԱԼԵԱՆ» Տպարան , Աղեքսանդրիա

Հիմնադիր-սեփականատերը եղած է Խաչիկ Վ.Թելլալեան , 1918-ին:


Թելլալեան տպարանը հաստատուած է թիւ 9, Մահմուտ Փաշա Էլ Ֆալաքի փողոց, Աղեքսանդրիա, եւ ճանչցուած է իբրեւ իր ժամանակի ամենէն նրբաճաշակ տպարանը:⁶²

Այստեղ տպագրուած են թռուցիկ յայտարարութիւններ, ձեռնարկներու յայտագիրներ եւ առեւտրական ծանուցումներ:



14. «ՀԱՅԿ Ա.ԲԻԻՐԱՏ» Տպարան- Աղեքսանդրիա, 1935-1940

Տպարանին հիմնադիրը եղած է Հայկ Սմբատ Բիւրատ 1935-ին, Աղեքսանդրիա:



Տպագրուած են Րաֆֆիի «Կայծեր»ը ա. և բ., «Ձալալեդդին» եւ «Ոսկի Աքաղաղը» հատորները (1937), Գրիգոր Զօհրապի «Խղճմտանքի Չայներ»ը (1938), շարք մը կանոնագիրներ եւ Սմբատ Բիւրատի բազմաթիւ վիպային ու անթուակիր հատորները:⁶³

15. «ՄՈՀԱՐԴԱՄ ՓՐԷՍ» Տպարան - Աղեքսանդրիա , 1935

Տպարանին հիմնադիրը եղած է Յակոբ Թովալեան 1935-ին:

Տպարանը, հայատառ եւ օտար լեզուներով տպագրական գործարքի կողքին, մասնագիտացած է թղթածրարի, խաւաքարտէ տուփերու պատրաստութեամբ եւ թղթախաղի թուղթի տպագրութեամբ:⁶⁴

⁶¹ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տօքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ

⁶² «Եգիպտահայ Տարեցոյցը», Ս. Պարթեւեան, 1918, Գահիրէ

«Միութիւն» պարբերաթերթ, 1922, Գահիրէ, բ. պրակ

⁶³ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տօքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, թիւ 808, 810, 862, 811, 828

⁶⁴ Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար ,Ա.Գարտաշեան,բ.հտր.1982,Վենետիկ, էջ 133

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ապա ԳԱՀԻՐԷ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՏՊԱՐԱՆՆԵՐ

1.«ԱՐԱՔՍ» Տպարան -Աղեքսանդրիա , 1902 - 1905

ապա Գահիրե «ԿԻԼԻԿԻԱ» Տպարան , 1906

«Արաքս» տպարանը հաստատուած է 1902-ին Աղեքսանդրիոյ մէջ, Տոքթ.Ա.Ա. Յակոբեանի սեփականատիրութեամբ, տեղւոյն Տիգրան Երկաթ Միութեան ժողովատեղիին կողքի կալուածի հասցէին:⁶⁵

1904-ին, Բարսեղ Օհանեան փոխանորդաբար ստանձնած է տպարանին տնօրէնութիւնը, անոր պաշտօնաթուղթերը ստորագրելու իրաւատութեամբ՝, եւ հետագային տպարանը գնած եւ անոր տէրը դարձած է, թիւ 18, Նուպար Փաշա փողոց հասցէին: Տպարանին մէջ կատարուած է Հայերէն, Անգլերէն և Ֆրանսերէն լեզուներով մաքուր եւ վայելչագեղ տպագրութիւն, չափաւոր գիներով եւ ճշտապահութեամբ: ⁶⁶




1906-ին, տպարանը փոխադրուած է Գահիրե, Խալիկ-էլ-Մասրի փողոցին նամակատան դիմաց, անուանուելով՝ «ԿԻԼԻԿԻԱ» Տպարան: ⁶⁷

Տպարանէն լոյս տեսած է “Կանոնագիր Եզիպտոսի հայ Բողոքական Հասարակութեան” եզիպտական կառավարութենէն վաւերացուած եւ խտիվական հրամանագրով հաստատուած՝ հայատառ թրքերէնով գրքոյկը, գինը, 5 դր2. ողջ:⁶⁸

2. «ՀԱՅԿԱԿԱՆ» Տպարան (Օննիկ Հալէպլեան)

«ԱՐԱՔՍ» Տպարան - Աղեքսանդրիա , 1899 -1906 ,
«ԿԻԼԻԿԻԱ» Տպարան , ապա «ՀԱՅԿԱԿԱՆ» Տպարան
եւ Կազմատուն - Գահիրե , 1906 -1919

Օննիկ Հալէպլեան (Պոլսահայ կաթողիկէ) 1899-ին Աղեքսանդրիոյ մէջ հիմնած է «Տպարանական Ընկերութիւն» մը «Արաքս Տպարան» անունով, գործընկերներ ունենալով Յ. Շնորհքեան, Մուրաֆօֆ, Միհրան Տամատեան, Էօժէն Փափագեան եւ ուրիշներ: ⁶⁹



⁶⁵ «Ազատ Բեմ» Լրագիր, Աղեքսանդրիա, 1904-1907, Գահիրե, թիւ 141

⁶⁶ Եզիպտահայ Մշակոյթի Պատմութիւն, Աւետիս Եափուճեան, 1981, Գահիրե, էջ 247

«Ազատ Բեմ» Լրագիր, Աղեքսանդրիա, 1906 , Գահիրե, թիւ 41 եւ 50

⁶⁷ [31]. Տիպ ու Տառ , Թէոդիկ, 1912, Կ.Պոլիս, էջ 189

⁶⁸ Ա. «Ազատ Բեմ» Լրագիր, Աղեքսանդրիա, 1906, Գահիրե, թիւ 60

⁶⁹ Տիպ ու Տառ , Թէոդիկ, 191 , Կ.Պոլիս, էջ 188

Հալեպլեան, 1906-ին Գահիրե հաստատուած է և տպարանին «Արաքս» անունը փոխած է «Կիլիկիա»⁷⁰ և ապա «Հայկական Տպարան»⁷¹ հասցէ ունենալով յաջորդաբար * թիւ 4, Մոհամետ Ալի փողոց- ** թիւ 14, Տարպէ-Անապէ - *** թիւ 8, Հարթ-Էլ-Թուպկի փողոց, Ապտ Էլ Ազիզ (Ապտինի Ոստիկանատան մօտ, 1906):

«Հայկական» տպարան-կազմատունը հաստատուած է Խալիկ-Էլ-Մասրի փողոցի նամակատան դիմաց (1907), ուր լոյս տեսած են «Շիրակ» (1906-1907), «Նոր Ժամանակներ» (3 թիւ, 1906), «Աւել» (1908), «Յայտագիր» (5 թիւ, 1912) եւ «Զարթօնք» (5 թիւ, 1919) լրագիրները, ինչպէս նաեւ բազմաթիւ հատորներ եւ կանոնագիրներ:⁷⁰

«Կիլիկիա» տպարանէն Գահիրե, լոյս տեսած է Ավո-ի «Դարբինին Երգը» (1906) և տպագրուած է «Ազատ Բեմ»ը 1906-էն 1907: ⁷¹



«ՀԱՅԿԱՍՏԱՆ ՔԷՍԲ»
Տպարան եւ Կազմատուն - Հելիոպոլիս,
Գահիրե, 1919

Օննիկ Հալեպլեանի տպարանին այս մասնաճիւղը հաստատուած է Հելիոպոլսոյ «Քէմբ»ին մեծ մուտքին ճիշդ դիմացը, «վրան A թիւ 20»ի անկիւնը, Փոստարկդ 47, Գահիրե:⁷²

«Հայ.Արաքս» տպարանէն լոյս տեսած է Եղիազար Մուրատեանի «Քննական Պատմութիւն Արշակ Երկրորդի եւ Անոր Պապ Որդւոյն» (1900) և Թ.Ֆասուլեաճեանի «Տայը Միրիկ Անդէնը»(1901) հատորները:⁷³

3.«ԱՐԵՒ» Տպարան - Աղեքսանդրիա , 1918-1924

Գահիրե , 1924-1993

Աղեքսանդրիոյ մէջ «Արեւ» տպարանը հաստատուած է 1918-ին, թիւ 16, Ապու Տարտար փողոց, Աղեքսանդրիահասցէին, հեռ.5207, Փոստարկդ թիւ 600:

Տպարանը, Աղեքսանդրիոյ մէջ, «Արեւ» երկօրեան տպագրած է 1 Ապրիլ 1918-էն մինչեւ 29 Յուլիս 1924, եւ ապա Գահիրե փոխադրուած՝ Գահիրեի Կեդրոնական Նամակատան փոստարկդի 1060 նոր թիւը ստանալով:


⁷⁰Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 42, 54, 64, 82, 124

⁷¹Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 58

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 28

⁷²«Զարթօնք», 1919, Գահիրե, պրակ 3-4

⁷³Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրե, թիւ 18, 29



Գահիրեի մեջ, 1924-ին սկսեալ տպարանին հասցէն յաջորդաբար եղած է, * թիւ 1, Տուպրէ փողոց (1924), ** «Ժողովրդային Սրահ» թիւ 32, Քանթարէթ էլ Տէքքա փողոց (Յուլիս 1926), *** թիւ 9, Զաքի փողոց, Թէվֆիքէյա (Մայիս 1928), **** թիւ 2, Տուպրէ փողոց, եւ հետագային՝ Սուլիման էլ Հալապի փողոց, «Հայտուն»ի շէնքին մէջ Յուլիս 1952-ին: ⁷⁴

1959-ին, տպարանը օժտուած է երկու նոր տողաշարներով: ⁷⁵

Տպարանին գրաշարներէն եղած են Արմենակ Ասլանեան, Աւետիս Գնաճեան, Կարպիս Թաթարեան, Յովհաննէս եւ Տիգրան Թերզեան, Անդրանիկ Թովմասեան, Աւետիս Ծառուկեան, Ճօզէֆ Հաճէրեան, Արմենակ Մանուկեան, Յովհաննէս Մասմանեան, Աւետիս Մովսէսեան, Պօղոս Պաճագեան, Մկրտիչ Պասմաճեան, Օննիկ Պետեան, Բարունակ Պերպերեան, Գառնիկ եւ Արամ Ստեփանեան, Մանուկ Ասատուրեան, Պօղոս Թաւրայեան, Զարեհ Գըլըճեան, Դաւիթ Շահլամեան եւ հայերէն գրաշարութիւն կատարող եգիպտացի աշխատաւորներ: ⁷⁶

Տպարանի վարչական պաշտօնեաներ եղած են Վարդավառ Զէյթունցեան (1926-էն), Միքայէլ Թորիկեան, Մարօ Սազայեան եւ Օլկա Գաբրիէլեան:

«Արեւ» լրագրին եւ «Հայ Ազգային Հիմնադրամ»ի հրատարակութիւններուն կողքին, տպարանէն լոյս տեսած են աւելի քան 150 հայերէն հատորներ, տպուած են՝ ձեռնարկներու յայտագրեր, ծանուցումներ եւ զանազան բնոյթի առեւտրական գործառնութիւններ: ⁷⁷

Գրաշարական եւ տպագրական նորարարութիւններու ծախսալի պահանջքին, մարդուծի եւ նիւթական դժուարութիւններու ընդառաջ, տպագրական աշխատանքը դադրած է տպարանին մէջ, 1993-ին:

⁷⁴ «Արեւ» Օրաթերթի Մատենագիտութիւն, Յ. Տէր Պետրոսեան, 1990, Գահիրէ, էջ 85 - 93

⁷⁵ «Արեւ» Օրաթերթի Մատենագիտութիւն, Յ. Տէր Պետրոսեան, 1990, Գահիրէ, էջ 94

⁷⁶ Հայահամար Եգիպտոսի եւ Սուտանի - 1939», Գահիրէ

«Արեւ» Օրաթերթի Մատենագիտութիւն, Յ. Տէր Պետրոսեան, 1990, Գահիրէ, էջ 116

⁷⁷ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, 2012, Գահիրէ, էջ 267

ՄԱԿԱՐՅԱՆ ԱՆՈՒՇ

Խնկո Ապոր անվան

ազգային մանկական գրադարան

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ՈՐՊԵՍ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Բանալի բառեր՝ գրադարան, հանրային կապեր, վիճակագրություն, սոցիոլոգիական հարցումներ:

Keywords. library, public relations, statistics, sociological surveys.

Վերջին տասնամյակների ընթացքում մարդկությունն իր ստեղծած տվյալների շտեմարաններ ավելի է ընդարձակում: Այդ շտեմարանները հանրության սեփականությունը դարձնելու գործում մեծ է PR-ի նշանակությունը: Անխուսափելի է այն փաստը, որ ժամանակակից PR-ը պետք է գտնի իրավիճակի լուծման տարբերակներ և ստեղծի նոր արժեքներ: Յուրաքանչյուր կազմակերպություն՝ լինի պետական, կոմերցիոն /առևտրային/, թե հասարակական, ձգտում է ձևավորել և ամրապնդել կապը հանրության հետ: Պատմամշակութային զարգացման ընթացքում գրադարանը չի կորցրել իր ստեղծագործական դերը, ավելին, այն շարունակում է զարգանալ հասարակության նոր սոցիալ-մշակութային մոտեցումներին և պահանջներին համապատասխան: Գրադարանային բարենպաստ միջավայրը խթանում է սովորողի, գրադարանից օգտվող անհատի ստեղծագործական-հետազոտական աշխատանքների իրականացումը, գիտելիքների աճը, ինքնակրթությունը, բազմակողմանի զարգացումը, գիտելիքների պաշարի ավելացումը, անհրաժեշտ տեղեկատվությունն առավել արդյունավետ ստանալու ուղիները և այլն: Ժամանակակից գրադարանը, բացի ընթերցասրահներից, պետք է ունենա համակարգչային և ժամանցային սենյակ, գրախանութ՝ գրքերի և հուշանվերների, սրճարան: Զարգացած գրադարանները հարուստ են համացանցից օգտվելու հնարավորություններով, բազմապիսի կրիչներով, շտեմարաններով: Տեղեկատվական կենտրոններ լինելուց բացի այժմյան գրադարանները հանդիսանում են նաև մշակութային կենտրոններ: Գրադարանի մշակութային գործառույթը պետք է բարձրացնի ընթերցողների հոգևոր մտածողությունը, հաղորդակից դարձնի հայրենական և համաշխարհային մշակութային արժեքներին, պայմաններ ստեղծի մշակութային գործունեության համար: Գրադարանը միշտ նոր գաղափարների, բոլոր հնարավոր մոտեցումների, հետաքրքիր և ստեղծագործական մտահղացումների փնտրտուքի մեջ է: Այժմ կարելի է հանդիպել գեղեցիկ

գրադարաններով կահավորված ժամանցի վայրերի՝ սրճարանների, թեյարանների, որտեղ մարդիկ կարող են շփվել միմյանց հետ և ծանոթանալ հետաքրքիր գրքերին: Ժամանակակից գրադարանները հասարակությանը առաջարկում են ժամանցի, գործունեության նոր կազմակերպչական կենտրոններ՝ գրադարան-ակումբներ, գրադարան-թանգարաններ, գրադարան- ընթերցանության կենտրոններ, գրադարան – հոգևոր կենտրոններ և այլն: Գրադարաններին կից ակումբները և տարբեր հետաքրքրությունների միավորումները վաղուց դարձել են բնակչության տարբեր խմբերի ժամանցի կազմակերպման աշխատանքի ձև: Գրադարաններում արդեն բավականին կուտակված փորձ կա այդ ուղղությամբ:

Արդի ժամանակներում ընթերցողներն իրենք են պահանջարկ առաջարկում, և հայաստանյան գրադարանները պետք է կարողանան ապահովել նրանց պահանջները և լինեն պահանջարկ ձևավորողը:

2017 թ. մարտից հոկտեմբեր ամիսներին Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի ընթերցողների շրջանում կատարվեցին սոցիալոգումներ, որոնց արդյունքում ձևավորվեցին այն առանցքային գործոնները, որոնք կնպաստեն հասարակության մեջ գրադարանների դերի բարձրացմանը: Սոցիալոգումանը մասնակցեց 100 հոգի, որոնք Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի ընթերցողներն են կամ այցելուները: Հարցվածների 75 % իգական սեռի ներկայացուցիչներ էին, իսկ 25 %՝ արական: Տարիքային սահմանափակումը՝ 15-70 տարեկան:

Ներկայացնենք հարցումները.

1. Որո՞նք են գրադարանների մասին տեղեկատվության աղբյուրները:

Երիտասարդները, որպես գրադարանի մասին տեղեկատվության աղբյուր, նշեցին համացանցը, իրենց ընկերներին, բարեկամներին, հեռուստատեսությունը (մասնավորապես՝ «Շոդակաթ» հեռուստաալիքը): Մասնակիցները քննարկման ժամանակ կարևորեցին այն, որ հասարակության շրջանում պետք է իրականացնել գրադարան այցելելու և գիրք կարդալու գովազդ: Իրականացված աշխատանքը երիտասարդները որակեցին դրական, քանի որ «...երբ հայտնվեցին պաստառներ փողոցներում, սկսեցին նոր գրքեր փնտրել, կարդալ», իսկ գրքերի հետքերը միշտ տանում են գրադարան:

45 տարեկանից բարձր վերջին 20 տարիների ընթացքում Հայաստանում գրադարան չեն այցելել և տեղյակ չեն, թե ինչ վիճակում են այսօր գրադարանները: Միայն մեկ մասնակից էր այցելում գրադարաններ՝ կապված դպրոցում դասավանդելու հետ, և շատ բարձր գնահատեց Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի և Ավ. Իսահակյանի անվան գրադարանի աշխատակիցների ցուցա-

բերած օգնությունը՝ աշակերտների համար անհրաժեշտ գրականության ընտրության հարցում:

2. Ինչպիսի՞ն պետք է լինի գրադարանը, որպեսզի Ձեզ մոտ ցանկություն առաջանա այցելելու և կարդալու:

- և՛ բուհական, և՛ հանրային գրադարաններում անհրաժեշտ պայմանների առկայություն (պետքարան, հարմար կահավորանք և այլն),
- բարեհամբույր աշխատակազմի առկայություն,
- գրքերի թեմատիկ դասավորություն, հնարավորության դեպքում՝ առանձին սենյակներում: Յուրաքանչյուր սենյակի ներքին ինտերիերի համապատասխանում թեմատիկ ուղղվածությանը,
- լռություն և լուսավորություն,
- ID քարտի հնարավորություն. «շատ արագ տրամադրեն քարտերը, շատ փաստաթղթեր չպահանջեն, գրքերն ունենան մագնիսական կրիչներ»,
- գրքեր պատվիրելու էլեկտրոնային եղանակի առկայություն,
- գրքերի էլեկտրոնային տարբերակների հասանելիությունը և համակարգիչներից օգտվելու հնարավորություն,
- գրադարաններում միջոցառումների, գրքերի շնորհանդեսների կազմակերպում:
- գրադարաններում քննություններին պատրաստվելու հնարավորություն,
- սրճարան կամ սնվելու հնարավորություն,
- գրքի վերաբերյալ հակիրճ տեղեկատվության տրամադրում,
- աշխատանքային ժամերի համապատասխանում,
- շքամուտքում ցուցանակների և ուղեցույցների առկայությունը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ պարբերաբար այցելել սկսել են դպրոցական տարիքում՝ շուրջ 39%-ը տարրական, 44%-ը հիմնական և ավագ դպրոցական տարիքում: 5%-ը դժվարացել է հիշել, թե որ տարիքից է պարբերաբար հաճախում, իսկ 6%-ը նշել է, որ երբեք չի այցելել:

3. Ինչպե՞ս եք գնահատվում համացանցի ազդեցությունը գրադարանների վրա:

Հարցման բոլոր մասնակիցները նշեցին, որ սոցիալական ցանցերը, ֆիլմերի դիտումները, խաղերը մարդուն ընթերցանությունից, սակայն մյուս կողմից կարևորեցին համացանցի դերը գրականության որոնման գործընթացում: Գրքերի էլեկտրոնային տարբերակները գրավիչ են հատկապես երիտասարդների համար: Նրանք նախապատվությունը տալիս են էլեկտրոնային գրքերին մի շարք պատճառներով՝

- համացանցով ավելի արագ է հնարավոր փնտրել, գտնել անհրաժեշտ գիրքը և միանգամից սկսել կարդալ,
- հնարավոր է միաժամանակ կարդալ և սոցիալական ցանցեր այցելել,
- համակարգչով ընթերցելը թույլ է տալիս զուգահեռ նշումներ կատարել,
- տպագիր գիրքը գումար արժե, մինչդեռ համացանցից հնարավոր է գտնել գրքի անվճար էլեկտրոնային տարբերակը,
- տպագիր գիրքը հարմար չէ տեղափոխելու առումով, իսկ էլեկտրոնային տարբերակն ամեն տեղ հասանելի է:

Ավելի մեծ տարիքի ընթերցողները էլեկտրոնային և տպագիր նյութերի համեմատության հիմքում այլ չափանիշներ տեսնում: Նախ էկրանից երկար կարդալու դեպքում աչքերը հոգնում են: Եթե երիտասարդների համար նշումներ անելու դեպքում ավելի նախընտրելի է էլեկտրոնային տարբերակը, ապա մեծահասակները նշումները պատկերացնում են տպագիր կամ տպված նյութերի վրա: Սա գուցե պայմանավորված է այն հանգամանքով, որ մեծահասակներն առաջնորդվում են սովորույթով, կամ էլ լավ չեն տիրապետում էլեկտրոնային նյութերի հետ աշխատելու հմտություններին:

4. Հայաստանում ընթերցանության և գրադարանի մակարդակի բարձրացման ուղիները:

Հայաստանում ընթերցանության մակարդակը բարձրացնելու համար երիտասարդներն առաջարկեցին տարբեր լեզուներով ժամանակակից գրականությունը թարգմանել հայերեն՝ նպաստելով հեղինակների ստեղծագործությունների գովազդին: Թե ինչու Հայաստանում տարածված չեն հայ ժամանակակից հեղինակների ստեղծագործությունները, երկու խմբի մասնակիցներն էլ խնդիրը տեսնում են գովազդի պակասի մեջ: Կարող ենք եզրակացնել, որ երիտասարդության շրջանում ժամանակակից հայ հեղինակների վերաբերյալ տեղեկատվությունը գրեթե բացակայում է. ընդամենը մեկ-երկու հոգի դժվարությամբ կարողացան մի քանի անուն նշել:

Հարցումների ժամանակ կարևորվեց պետության դերը Հայաստանում գրադարանի և ընթերցանության մակարդակը բարձրացնելու գործում: Պետական աջակցությունը, համապատասխան միջոցների տրամադրումը կնպաստեն գրադարանների, գրքի, ընթերցանության վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացմանը: Սոցիալական մասնակիցներից մեկը եվրոպական զարգացած երկրներին օրինակով առաջարկեց սահմանել գրադարանային ժամ՝ շաբաթվա մեջ 1 անգամ երեխաները այցելեն գրադարան:

Այն հարցին, թե ինչ պետք է անի պետությունը ՀՀ-ում ընթերցանության մակարդակը բարձրացնելու համար, հնչեցին հետևյալ առաջարկները.


- անցկացնել գրադարաններում ընթերցանությունը խթանող տարբեր PR ակցիաներ,
- տարբեր լեզուներով միջոցառումներ կազմակերպել,
- փոքր տարիքից ուղղորդել դեպի գրադարան,
- ֆինանսական միջոցների ներդրում,
- հետևողական աշխատանք:

5. Որո՞նք են պահանջված գրականության ձեռքբերման տարբերակները:

Պահանջված գրականության ձեռքբերման ուղիների վերաբերյալ կարծիքները բազմազան էին: Եթե դպրոցական գրադարաններից օգտվելն անհրաժեշտություն չէր, և աշակերտները կարողանում էին գտնել իրենց անհրաժեշտ գրքերը սեփական կամ ծանոթների գրադարաններում, ապա իրավիճակն այլ է բուհական շրջանում: Մասնագիտական անվճար գրքերի ձեռքբերման հիմնական աղբյուրներն են դառնում դասախոսները, գրադարանները և համացանցը:

Ներկայացնենք նաև սոցիալական արդյունքների վիճակագրությունը.

Ընթերցանության մակարդակը ըստ հարցվողների տարիքային խմբերի՝ (տես գծապատկեր 1).




գծ. 1

Ընթերցանության մակարդակի փոփոխությունները 2012-2017 թթ. կտրվածքով (տես գծապատկեր 2).

Գծապատկեր 2-ից երևում է, որ հարցվողների շուրջ 37%-ը սկսել է այցելել գրադարաններ, 43%-ը (միավորված են «փոքր-ինչ ավելի քիչ են հաճախում» և զգալիորեն ավելի քիչ են կարդում պատասխանների տվյալները) սկսել է համեմատաբար ավելի քիչ կարդալ, 6%-ը հաճախում է այնպես, ինչպես հաճախել է դրանից առաջ, և միայն 14%-ն է նշել (միավորված են «փոքր-ինչ ավելի շատ են հաճախում» և զգալիորեն ավելի շատ եք կարդում պատասխանների տվյալները), որ սկսել է ավելի շատ հաճախել:

Եթե հաշվի առնենք, որ հարցվողների շուրջ 1/3 մասը սկսել է ընդհանրապես չհաճախել, ևս 2/5 մասը՝ փոքր-ինչ կամ զգալիորեն ավելի քիչ կարդալ, կարող ենք ասել, որ համաձայն հարցվողների պատասխանների, ընթերցանության, մարդկանց զարգացման մակարդակը Հայաստանում անկում է ապրել:

Ընթերցանության մակարդակի փոփոխությունը վերջին 5 տարիների ընթացքում




գծ. 2

Ուսումնասիրենք ընթերցողների դինամիկան ըստ այցելուների սեռի, տարիքի, կրթության, մասնագիտական ուղղվածության, ամուսնական կարգավիճակի չափանիշների, ինչպես նաև արդյունքներն ըստ բնակության վայրի:


Գծապատկեր 3-ից երևում է, որ ավելի քիչ կարդացողների և հաճախումների խմբերում արական և իգական ներկայացուցիչների թիվը գրեթե հավասար է:

Ընթերցանության դինամիկան՝ ըստ սեռի




գծ. 3

Կարդացողների խմբերում գերակշռում են բարձրագույն կրթություն ունեցողները՝ 48% («փոքր-ինչ ավելի քիչ են կարդում») և 53% («զգալիորեն ավելի քիչ են կարդում»): Ընդհանուր առմամբ նկատում ենք, որ որքան իջնում է կարդալու աստիճանը, այնքան փոքրանում է բարձրագույն կրթություն ունեցողների թիվը և մեծանում է միջնակարգ կրթություն ունեցողներինը (տե՛ս գծապատկեր 4)։



գծ.4


Գծապատկեր 5-ում պատկերված է, թե արական և իգական սեռի խմբերից յուրաքանչյուրի ներսում քանի տոկոսն է սկսել չկարդալ. արդյունքը գրեթե նույնն է՝ 74%-ը սկսել է չկարդալ արական, 76%-ը՝ իգական սեռի ներկայացուցիչների խմբում:



գծ. 5

Ավելի քիչ կարդացողների խմբում զգալիորեն գերակշռում են ամուսնացածները՝ 70%: Չամուսնացածները կազմում են 19%, կինը կամ ամուսինը մահացած կարգավիճակ ունեցող հարցվողները՝ 9%, և ամուսնալուծվածները՝ 1% (գծապատկեր 6):

Ավելի քիչ կարգաթիվների բաշխումն՝ ըստ ամուսնական կարգավիճակի




գծ. 6

Ընթերցանության անկման պատճառները.

Ընթերցանության անկման պատճառները բազմաթիվ են, սակայն ինչպես ցույց տվեցին արդյունքները, ամենատարածված պատճառը ժամանակի պակասն է (63%), իսկ 18%-ի մոտ առկա են առողջական խնդիրներ: Հնչել են նաև այնպիսի պատճառներ, ինչպիսիք են՝ հեռուստացույց դիտելը, համակարգչով կամ համացանցով զբաղվելը (մասնավորապես խաղեր, երաժշտություն, տեսահոլովակներ և ֆիլմեր, սոցիալական ցանցեր), ընկերների հետ հանդիպելը: Իսկ շուրջ 3%-ը նշել է, որ գրքերում չի գտնում իրեն հետաքրքրող տեղեկությունները կամ թեմաները (տե՛ս գծապատկեր 7):


Ընթերցանության անկման պատճառները



գծ. 7


Ինչպես տեսնում ենք գծապատկեր 8-ից, ոմանց համար պատճառ են հանդիսանում առողջական խնդիրները, մյուսները պարզապես ցանկություն չունեն կարդալու, իսկ ոմանք էլ նշել են այնպիսի պատճառներ, ինչպիսին են՝ ժամանակի պակասը, ընտանեկան հոգսերը և գրագիտության պակասը: Շուրջ 14%-ը դժվարացել է պատասխանել (տես գծապատկեր 8).

Ավելի շատ ընթերցողների բաշխումն՝ ըստ գրադվածության



Ընթերցողների շուրջ 52%-ը նշել է, որ կարդում է հաճույքի համար, 44%-ը՝ ինքնակրթության, 21%-ը՝ մասնագիտական գիտելիքներ ձեռքբերելու համար, մյուսները՝ ինֆորմացիա ստանալու, բուհի պահանջները բավարարելու համար և այլ պատճառներով:

Կարդալու դրդապատճառները



գծ. 9

Թեմայի ընտրությունը.

Նկատենք, որ տպագիր նյութերը զգալիորեն ավելի մեծ թվով ընթերցողներ ունեն, քան էլեկտրոնային նյութերը: Հարցին պատասխանած հարցվողների շուրջ 56%-ը նշել է, որ կարդում է գեղարվեստական գրքեր, 42%-ը՝ տպագիր թերթեր կամ ամսագրեր, շուրջ 34%-ը նախընտրում է կարդալ տպագիր մասնագիտական գրքեր: Էլեկտրոնային նյութերից համեմատաբար ավելի շատ ընթերցողներ ունեն էլեկտրոնային թերթերը և ամսագրերը (շուրջ 14%) և մասնագիտական գրքերը (շուրջ 9%): Երկու տարբերակով էլ բառարաններ և հանրագիտարաններ հարցվողները քիչ են կարդում: Էլեկտրոնային հանրագիտարան նախընտրում է կարդալ 3 հարցվող,

Էլեկտրոնային բառարան՝ նույնպես: Այդ պատճառով այս նյութերի վերաբերյալ տեղեկատվությունը հետագայում չի մանրամասնվի:

Ճեռքերման աղբյուրները.

Այն հարցին, թե ինչպես են ձեռք բերում իրենց անհրաժեշտ տպագիր գեղարվեստական գրքերը, հարցվողների 58%-ը նշել է անձնական տպագիր գրքերի գրադարանը, 41%-ը գտնում է ընկերների, ծանոթների, բարեկամների միջոցով, 27%-ը օգտվում է գրադարաններից:

Հարցվողների 51%-ը թերթեր, ամսագրեր ձեռք է բերում կրպակներից, 27%-ը՝ ընկերներից, ծանոթներից, բարեկամներից, 19%-ը՝ խանութներից, շուրջ 8%-ը՝ գրադարաններից: Որպես տպագիր մասնագիտական գրքերի ձեռքբերման աղբյուր հարցվողների 44%-ը նշել է գրադարանները, 38%-ը՝ ընկերներին, ծանոթներին, բարեկամներին, 37%-ը՝ անձնական տպագիր գրքերի գրադարանը, 14%-ը՝ խանութները:

Էլեկտրոնային թերթեր ամսագրեր 78%-ը գտնում է համացանցից, ինչը միանգամայն հավանական է: Շուրջ 6%-ն էլ նշել է, որ ձեռք է բերում սեփական էլեկտրոնային գրադարանից: Էլեկտրոնային մասնագիտական գրքեր հարցվողների 80%-ը նույնպես ձեռք է բերում ինտերնետից, 14%-ը՝ անձնական էլեկտրոնային գրադարանից, 7%-ը՝ գրադարաններից: Ընթերցողների շուրջ 67%-ը տպագիր հանրագիտարաններ ձեռք է բերում սեփական տպագիր գրադարանից, 47%-ը՝ ընկերների, ծանոթների, բարեկամների միջոցով, 11%-ը՝ գրադարաններից:

Էլեկտրոնային գեղարվեստական գրքերի ձեռքբերման հիմնական աղբյուրը ինտերնետն է՝ 83%: Շուրջ 13%-ն էլ օգտվում է սեփական էլեկտրոնային գրադարանից:

Կարդացողների 39%-ը տպագիր բառարաններ գտնում է սեփական տպագիր գրքերի գրադարանում, 33%-ը՝ դարձյալ ընկերներից, ծանոթներից, բարեկամներից, 22%-ը՝ ինտերնետի միջոցով, 11%-ը՝ գրադարաններից, 11%-ը՝ խանութներից:

Ընթերցանության նախընտրելի վայրը

Նկատենք, որ կարդալու գրեթե բոլոր նյութերը հարցման մասնակիցները մեծամասամբ գերադասում են կարդալ տանը: Տպագիր գեղարվեստական գրքեր կարդացողների շուրջ 96%-ը, որպես ընթերցանության նախընտրելի վայր նշել է տանը: Շուրջ 5%-ը կարդում է աշխատավայրում: Տպագիր թերթեր, ամսագրեր հարցվողների 95%-ը նախընտրում է կարդալ տանը, 11%-ը՝ աշխատավայրում: Տպագիր մասնագիտական գրքեր հարցվողների շուրջ 93%-ը կարդում է տանը, 17%-ը՝ աշխատավայրում, 6%-ը՝ բուհի գրադարանում: Էլեկտրոնային թերթեր, ամսագրեր հարցվողների 94%-ը նախընտրում է կարդալ տանը, շուրջ 7%-ը՝ աշխատավայրում:

Ընթերցողների 91%-ի համար էլեկտրոնային մասնագիտական գրքերի ընթերցման նախընտրելի վայրը տունն է: 16%-ը նախընտրում է կարդալ աշխատավայրում: Տպագիր հանրագիտարաններ կարդացողները նախընտրում են կարդալ տանը (100%), 6%-ը՝ նաև բուհական գրադարանում, 3%-ը՝ աշխատավայրում, ևս 35%-ը՝ գրադարաններում: Էլեկտրոնային գեղարվեստական գրքեր կարդացողները նախընտրում են կարդալ տանը (100%), 8%-ը՝ նաև աշխատավայրում:

Տպագիր բառարաններ կարդացողների 94%-ը նախընտրում է կարդալ տանը, շուրջ 6%-ը՝ աշխատավայրում, 6%-ը՝ բուհի գրադարանում:

Ընթերցողների նախընտրելի լեզուն


Հետազոտության ընթացքում անդրադարձել ենք նաև ընթերցանության նախընտրելի լեզվին և հարցվողներին խնդրել ենք ըստ առաջնահերթության նշել այն 3 լեզուները, որոնցով նրանք կարդում են: Գծապատկեր 10-ից երևում է, որ հարցվողների 90%-ի համար ընթերցանության նախընտրելի լեզուն հայերենն է: 9%-ը կարդում է առաջին հերթին ռուսերեն:



գծ. 10

Այն հարցին, թե ինչու առաջնահերթ հենց այդ լեզվով, հայերեն կարդացողների 39%-ը նշել է ազգային ինքնությանը վերաբերող պատասխաններ (օրինակ՝ «որովհետև հայ եմ», «իմ մայրենի լեզուն է» և այլն): 28%-ի համար հասկանալի և մատչելի են հայերենով գրված գրքերը, 16%-ը նշել է, որ կրթությունը հայերեն է, լեզվին լավ է տիրապետում կամ այլ լեզվի չի տիրապետում: 2%-ը նշեց այլ պատճառներ, ինչպիսիք են՝ «գեղեցիկ լեզու է», «պարտադրված է», «տան գրականությունը միայն հայերեն է» և այլն: Հարցվողների շուրջ 15%-ը դժվարացավ պատասխանել, թե ինչու է առաջնահերթ կարդում հայերեն լեզվով (տե՛ս գծապատկեր 11):

Հայերեն լեզվի առաջնահերթության պատճառները




գծ. 11

Նոր ստացված գրքերի մասին տեղեկատվության ձեռքբերման աղբյուրները

Հաջորդ գծապատկերից ակնհայտ է դառնում, որ ընթերցողների՝ գրքերի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման հիմնական աղբյուր են հանդիսանում ընկերները, ծանոթները, բարեկամները: Ընթերցողների շուրջ 53%-ը գրքերի մասին տեղեկատվություն ստանում է ընկերներից /ծանոթ/ բարեկամներից, շուրջ 23%-ը ինտերնետի միջոցով, 19%-ը՝ ԶԼՄ-ներից (մամուլ, հեռուստացույց, ռադիո), 10%-ը՝ գրադարաններից, շուրջ 6%-ը՝ գրախանութներից (գծապատկեր 12):

Գրքերի մասին տեղեկատվության ձեռքբերման աղբյուրները




գծ. 12

Գրադարանների ճանաչելիությունը և հաճախելիությունը

Ընթերցողների շուրջ 68%-ը նշել է, որ երբեք չի այցելում գրադարան, 18%-ն այցելում է ամսվա մեջ 2-3 անգամ: Ամեն օր այցելում է ընթերցողների 2,5%-ը միայն, շաբաթվա մեջ 2-3 անգամ՝ 4%-ը, 1,3%-ն էլ՝ 1-2 ամիսը մեկ անգամ (գծապատկեր 13):


Գրադարանայցելելու հաճախականությունը



գծ. 13

Գծապատկեր 14-ում ներկայացված է գրադարանների ճանաչելիության պատկերը: Հարցվողների շրջանում ամենահայտնի գրադարանը Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն է (հարցին պատասխանողների 43%-ը): Ավ. Իսահակյանի անվան գրադարանը ճանաչում է հարցվողների շուրջ 35%-ը, Հայաստանի ազգային գրադարանը՝ 11%-ը: Հարցվողների շրջանում հայտնի էին նաև մի շարք բուհական, դեսպանատան, մարզային, մարզերի քաղաքային, գյուղական համայնքների գրադարաններ:

Գրադարանների ճանաչելիությունը



գծ. 14

Ամփոփելով արդյունքները՝ նշենք.

1. Անչափահասների այցելությունը գրադարան ընթերցանության կազմակերպումը և գրք մշակույթի դաստիարակումը պետական մոտեցման կարիք ունի:
2. Գրադարանը մնում է ժամանակակից մարդու կյանքի ժամանցի վայր:
3. Ժամանակակից գրադարանից օգտվելու մոդելը բնութագրվում է գործնականությամբ, անհատականացմամբ, ժամանցային ընթերցանության գերակշռությամբ:

4. Գիրքը չի անտեսվում, այն հիմնականում մնում է որպես տեղեկության աղբյուր, սակայն ավելի հաճախ /հատկապես երիտասարդները/ օգտվում են համացանցից:

5. Գրադարանային մշակույթի ենթաոլորտները զարգացնելու և նրանց փոխգործակցությունն ապահովելու նպատակով շարունակական գործունեությունը պետք է հիմնվի ոլորտի իրական վիճակագրական վերլուծության վրա:

6. Պետք է ուսումնասիրվեն ընթերցողների, գրադարանից օգտվողների հետաքրքրությունները, նախասիրություններն ու պահանջմունքները, այլ ոչ թե մատուցվի այն, ինչը ավանդաբար ճիշտ ենք համարել և կրկնվել է տարիներ շարունակ:

Նկատառումների վրա հիմնվելով՝ առաջարկում ենք որոշակի քայլեր, որոնք կնպաստեն գրադարանների և ընթերցանության մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը.

- համազգային երկարաժամկետ ընթերցանության օժանդակության ծրագրի մշակում,

- պատանիների տեղեկատվական գրագիտության և ընթերցանության մշակույթի ձևավորման ու զարգացման համար գրադարանների և ուսումնական հաստատությունների ջանքերի միավորում,

- գրադարանային հեղինակային ծրագրերի առաջխաղացում, որոնց հիմնական նպատակն է ընթերցանությունը քարոզելու միջոցով մեծաթիվ ընթերցողների ներգրավումը,

- փոխադարձ տեղեկությունների համակարգի ստեղծում,

- գրքի և ընթերցանության հիմնահարցերով զբաղվող ընկերությունների սոցիալական համագործակցության զարգացում և պետական կառույցների ու մասնավոր հատվածի ներգրավում ընթերցանության հիմնահարցերի լուծման գործում,

- Բարձրաձայն ընթերցանությունների շարք այգիներում և դպրոցներում,

- Շարժական գրադարան /հիվանդանոց, ծերանոց, մանկապարտեզ/,

- Ամառային դպրոց,

- Աշխատանքային ժամերի համապատասխանեցում,

- Գրադարանի առցանց կատալոգի համակարգում, թարմացում,

- Օգտատերերի առցանց բազայի ստեղծում և համակարգում,

- Գրադարանի ֆիզիկական տարածքի և առօրյայի կազմակերպում,

- Գրադարանի հանրային կապերի ստեղծում և զարգացում,

- Գրադարանի վերաբերյալ տեղեկությունների տարածում /համակարգում (սոցցանցերով և այլ աղբյուրներով)

- Կազմակերպության կողմից հրատարակված նյութերի տարածում (գրադարան, գրախանութ, առցանց),

- Գրադարանի զարգացման համար դրամաշնորհների հայթայթում:

Գրադարանային միջավայրը կարևոր է բազմաբնույթ կրթական, մշակութային, տեղեկատվական, ստեղծագործական և ուսումնական ծրագրերի, նախագծերի իրականացման համար: Գրադարանային միջավայրը չի կարող միապաղաղ և անհրապույր լինել, ընդհակառակը, այն գրավիչ է, հարմարավետ, օգտագործելի և կենսունակ: Ժամանակակից գրադարաններում առկա տեխնոլոգիական միջոցներն ու նրանց ընձեռած հնարավորությունները օգտակար են և օգնում են անհրաժեշտ տեղեկատվությունն առավել արդյունավետ ստանալուն՝ անհրաժեշտության դեպքում գրադարանավարի օգնությամբ, ով հանդիսանում է գրադարանային միջավայրի ստեղծման, պահպանման և զարգացման իրականացնողը: Գրադարանն ինքը պետք է լինի կարծիքի ձևավորման և հանրային կարծիքի վրա ազդող միջավայր: Որպես կրթական, մշակութային հաստատություններ գրադարանները պետք է կարողանան իրենց ներդրումը ունենալ հասարակության ընդհանուր կրթամակարդակի բարձրացման հարցում:

SUMMARY

Public relations, advertising are important in the library work. Today, the library is facing new requirements, and the librarians should be able to answer to these new challenges. Using surveys the author is suggesting some new solutions.

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԲԻԱ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ Հայաստանի ազգային գրադարան, Ստամբուլի Աթաթուրքի անվան գրադարան, հայ տպագրության պատմություն, համագործակցություն, մշակույթ:

Keywords. National Library of Armenian, Ataturk Library of Istanbul, history of Armenian printing, cooperation, culture.

Հայ ժողովուրդը, գաղթելով պատմական Հայաստանի տարբեր գավառներից և սփռվելով աշխարհով մեկ, օտար ափերում իր ինքնությունը պահպանելու համար ապավինեց իր հավատքին, գրին ու գրականությանը: Հարյուրամյակների ընթացքում տարբեր գաղթօջախներում հիմնադրվեցին տպարաններ, կրթօջախներ, մշակութային միություններ, որոնց հիմնական առաքելությունը ազգային մշակութային արժեքների պահպանություն էր:

Հայ գրի ու մշակույթի պահպանությունն այսօր նույնքան արդիական է, որքան դարեր առաջ: Այսօր հրատապ խնդիր է դարձել հավաքել ու պահպանել աշխարհով մեկ սփռված մշակութային ժառանգությունը՝ հետագա դարերին այն ի պահ տալու համար: Հայաստանի ազգային գրադարանը, որն այսօր հայ գրատպության ամենախոշոր պահոցն է, լծվել է այս բարդ ու դժվարին գործին: Նպատակը՝ ստեղծել Համահայկական թվային գրադարան, մեկ ամբողջական հարթակում հավաքել և ամբողջացնել տարբեր վայրերում տպագրված գրքերի մատենագիտական նկարագրություններն իրենց թվային տարբերակներով: Նպատակի իրագործման հիմնական նախագծերը «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարաններ են:

Նպատակի իրագործման համար համագործակցություն է սկսվել աշխարհի խոշոր գրադարանների, տարբեր գաղթօջախներում գործող հայագիտական կենտրոնների հետ: Կատարվում են ուսումնասիրություններ, փոխանակվում են գրքերի թվային տարբերակներ, որոնք համալրում են «Հայ գիրք» շտեմարանում բացակա գրքերի մատենագիտական նկարագրություններն ու թվային տարբերակները:

2017 թ. ամռանը «Հրանտ Դինք հիմնադրամ»-ի հայաստանյան գրասենյակը էլեկտրոնային նամակի միջոցով տեղեկացրեց «Turkey-Armenia Fellowship scheme» ծրագրի մասին: Մինչ այդ, «Հրանտ Դինք» հիմնադրամը, Եվրասիա համագործակցության հիմնադրամի հետ համատեղ, նախաձեռնել էր «Հայաստան-Թուրքիա փորձագիտական երկխոսության խումբ» նախագիծը: Նախատեսվում էր մշակել հարևան երկրների միջև

վստահության ամրապնդմանը և հարաբերությունների կարգավորմանն ուղղված միջոցառումների ցանկ՝ հիմնվելով քաղաքացիական հասարակության կողմից մինչ օրս ձեռք բերված արդյունքների վրա: Ծրագրի նպատակն էր ամրապնդել Հայաստանի և Թուրքիայի կառավարական, հասարակական կազմակերպությունների ու մասնավոր հատվածի միջև երկխոսությունը՝ տարածաշրջանում կապեր հաստատելու, այդ կապերը պահպանելու և տեղական գործընկերների կարողությունները զարգացնելու միջոցով:

Հայաստանի ազգային գրադարանը ներկայացրեց համապատասխան հայտը և պատրաստակամություն հայտնեց մասնակցելու վերոհիշյալ ծրագրին: «Հրանտ Դինք»-ի հայաստանյան գրասենյակը կազմակերպեց կոնֆերանս, որին մասնակցեցին նաև Ազգային գրադարանի ներկայացուցիչները: Ներկայացվեց ծրագրի ձևաչափը. 10 մասնագետ Հայաստանից և Թուրքիայից հնարավորություն ունեին 4-8 ամիս ապրելու և աշխատելու հրավիրող կազմակերպությունում: «Եվրասիա» համագործակցության հիմնադրամը հայ-թուրքական ծրագրեր իրականացնելու համար ֆինանսավորել էր այնպիսի կազմակերպությունների, ինչպիսիք են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Հայկական միջազգային քաղաքական հետազոտությունների խումբը, Երևանի մամուլի ակումբը, Patker Photo ՍՊԸ-ն, Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը, Քաղաքների կայուն զարգացման հիմնադրամը և Երիտասարդական ակադեմիան: «Եվրասիա» համագործակցության հիմնադրամն իր ուշադրությունը կենտրոնացել է երեք ոլորտներում.

- աջակցություն մշակութային ծրագրերին,
- հետազոտություններ,
- հայտնի լրագրողների և կարծիքներ ձևավորողների փոխայցելություններ (պաշտոնաթող պաշտոնյաներ, գիտնականներ և այլն) Հայաստան և Թուրքիա:

2017-2018 թթ. ընթացքում 37 կազմակերպություն Թուրքիայից և 33-ը Հայաստանից հանդես եկան որպես Հյուրընկալող կազմակերպություն:

Ըստ ծրագրի՝ Հայաստանի ազգային գրադարանի երկու աշխատակիցներ՝ Աստղիկ Վարդանյանը և Անի Սարգսյանը, մեկնեցին Ստամբուլ՝ Աթաթուրքի անվան գրադարան:

Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցներին հնարավորություն ընձեռվեց նպատակին ծառայող ուսումնասիրություն կատարել Ստամբուլում, որը համարվում է հայ տպագրության ամենաբեղմնավոր և ամենահին օջախներից մեկը: Հայ տպագրությունն այստեղ սկզբնավորվել է 1568 թ. Աբգար Դ-ի Թոխաթեցու ջանքերով, մինչդեռ Կ.Պոլսում թուրքերեն առաջին գիրքը տպագրվել է 161 տարի հետո՝ 1729 թ.:

Ստամբուլում առաջին գրադարանը կառուցվել է 1924 թ. Շեհրմանթեթիում: 1939 թ. Ստամբուլի քաղաքապետը քաղաքապետարանի անդամների հետ որոշում է ընդունել



հիմնադրել թանգարան-գրադարան: 1931 թ. հանձնախումբը հավաքվել է Շիշլիի Աթաթուրքի տանը և Բեյազետի մահմադականների աստվածաբանական դպրոցում հավաքել գրքերը: 1945 թ. գրադարանը առանձնացվել է թանգարանից: 1960-ական թվականներին շենքը այլև չէր կարող ծառայել որպես գրադարան՝ հավաքածուն չտեղավորելու պատճառով: (տե՛ս նկ. 1)

Թուրքիայի Հանրապետության 50-ամյակի առիթով 1973 թ. գրադարանի համար նոր շենք է կառուցվել Տակսիմ պողոտայում, 1981 թ. այն կոչել են Աթաթուրքի անունով: Գրադարանը սկսել է գործել 100 նվիրատուների կողմից նվիրաբերած մոտ 140,000 միավոր գրականություն հավաքածուով: Այժմ գնումների և նվիրատվությունների արդյունքում ֆոնդը կազմում է 500.000 միավոր գրականություն՝ ձեռագրեր, ատլասներ, քարտեզներ, տարեգրքեր, ալբոմներ, հատուկ հավաքածուներ Ստամբուլի մասին: Ունի 1,000,000 թվայնացված էջ:

Աթաթուրքի անվան գրադարանի բաժիններն են՝ Հիմնական գրախանութ, Մամուլի ընթերցասրահ, Ընդհանուր ընթերցասրահ, Հազվագյուտ գրքեր /Անձեռնմխելի ֆոնդ/, Մատակարարման և նվիրատվության բաժին, Կազմավորման և վերականգնման բաժին, Ցուցասրահ, Կոնֆերանսների դահլիճ: Ունի երկու ընթերցասրահ, որոնցից Մամուլի ընթերցասրահը սպասարկում է մինչև 1935 թ. հրատարակված գրքերն ու պարբերականները, իսկ Ընդհանուր ընթերցասրահում՝ 1935 թ. հետո հրատարակված գրքերն ու պարբերականները: Ընթերցասրահները աշխատում են 24 ժամ:



Առաջնորդվում են անգլո-ամերիկյան մշակման կանոններով: Գրադարանն ունի մեծ թվով այցելուներ՝ դպրոցականներ, ուսանողներ, հետազոտողներ և գիտաշխատողներ:

Ընդհանուր հավաքածուի մեջ առանձնահատուկ տեղ ունի հայերեն գրականությունը՝ գրադարանի կայքէջում հատուկ ընդգծումով: Ծրագրի շրջանակում Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցների այցի հիմնական նպատակը այդ հավաքածուի ուսումնասիրությունն էր՝ «Հայ գիրք» շտեմարան չներառված կամ բացակա դրված գրքերի թվային տարբերակները համալրելու համար:

«Հրանտ Դինք» հիմնադրամի Թուրքիա-Հայաստան փորձի փոխանակման կարճաժամկետ նախագծի շրջանակում Աթաթուրքի անվան գրադարանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում ունեցել ենք հետևյալ արդյունքները.

ա. Գրադարանի հայերեն հավաքածուից, որը կազմում է 1600 անուն (1512-1935 թթ.), ուսումնասիրվել է շուրջ 1300 անուն հայերեն գիրքը:

բ. Հայտնաբերվել է 57 անուն հայերեն ու հայատառ թուրքերեն տպագիր և 1 անուն ձեռագիր գիրք, որոնց մատենագիտական նկարագրությունները կամ թվային տարբերակները առկա չէին «Հայ գիրք» շտեմարանում:

գ. Սքանավորվել և թվայնացվել են այդ գրքերը: Նրանցից 28 անուն հայերեն գրքերի մատենագիտական նկարագրությունները առկա էին «Հայ գրքի» համահավաք ցանկերում և շտեմարանում, սակայն այդ նկարագրությունները կատարվել էին ըստ մատենագիտական աղբյուրների. փաստացի գրքերը չէին ուսումնասիրվել: 28 անուն հայերեն գրքերը բոլորովին նոր անուններ են և բացակայում են հայաստանյան գրադարանների հավաքածուներից:

Սքանավորված գրքերից՝ 5-ը հնատիպ շրջանի գրքեր են (1512-1800 թթ.), 3-ը վաղ շրջանի գրքեր են (1801-1850 թթ.), 29-ը՝ 1851-1900 թթ., 7-ը՝ 1901-1920 թթ., 13-ը՝ 1920-ից բարձր:

դ. Ուսումնասիրվել են Ստամբուլի պետական տարբեր կառույցների գրադարաններ՝ պարզելու պահպանվող հայերեն գրքերի առկայությունը:

ե. Աշխատակիցներն այցելել են Ուսուցչաց հիմնարկ, ծանոթացել տարիների ընթացքում նրանց կողմից ձեռք բերված գրականությանը, ուսումնասիրել առկա 2000 անուն գրականության մեծ հատվածը:

զ. Այցելել են նաև Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի գրադարան, թանգարան, ծանոթացել նրանց հարուստ գրականությանը:

է. Այցելել են պրն. Բուզանդի գրախանութը, որը գրադարան չէր, բայց ուներ հնատիպ և ձեռագիր ժառանգություն:

ը. Ծրագրի շրջանակում մասնակցել են «Հրանտ Դինք» միջազգային մրցանակաբաշխության 9-րդ տարեդարձի արարողությանը:

Շարունակական համագործակցության արդյունքում ակնկալվում է, որ Հայաստանի ազգային գրադարանը հանդես կգա որպես հյուրընկալվող կառույց՝ հատկապես Աթաթուրքի գրադարանի մասնագետների համար:

Մշակույթն այն ոլորտն է, որը դուրս է քաղաքական և դիվանագիտական սահմաններից և համընդհանուր է բոլորի համար: Այդ առումով հայ-թուրքական երկխոսության համար կազմակերպվում են փոխայցեր, որտեղ *Գիրքը* հանդես է գալիս որպես

Հայաստան-Թուրքիա ընկերակարության, իսկ «Հրանտ Դինք» հիմնադրամը՝ աջակցության հիմնաքար:

SUMMARY

Turkey-Armenian collaboration is important for two nations. According to the Turkey-Armenia short-term experience exchange project of the Hrant Dink Foundation 2 librarians from the National Library of Armenia visited the Ataturk Library (Istanbul) for bibliographic research.

Within the scope of this project, 2 librarians studied the Armenian books and periodicals in Ataturk Library. As a result 57 new book titles were found in the Ataturk library collections.

ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ



Հայ ժողովրդի պատմության քառուղիներում գիրքն ու գրատպությունը դարձել են ազգափրկիչ օղակներ՝ սերունդներին փոխանցելով պատմական փաստերն ու գիտական ձեռքբերումները: Հայ տպագրության պատմությունն անցել է զարգացման տարբեր փուլերով՝ հնարավորություն ընձեռելով հաջորդ սերունդներին կատարելագործելու տպագրության արվեստը:

2017 թ. սեպտեմբերի 25-ին Հայաստանի ազգային գրադարանի հյուրընկալ հարկի ներքո բացվեց Գրատպության թանգարանը՝ հայ տպագրության պատմությունն արտացոլելով **Գրի ակունքները, Հայոց այբուբենը, Հայ գրատպության առաջնեկները, Հայկական գրատպության սփյուռքը, Գրահրատարակչություն, Գրի հավերժությունը** սրահների ցուցափեղկերում: Թանգարանի ստեղծման գաղափարը ծագել է 2012 թ., երբ լրացավ հայ գրքի տպագրության 500-ամյակը: Նույն թվականին **ՅՈՒՆԵՍԿՕ**-ն Երևանը հռչակեց Գրքի համաշխարհային մայրաքաղաք: Գրատպության թանգարանը բացվեց Հայաստանի ազգային

գրադարանում, քանի որ այն համարվում է հայերեն տպագիր նյութի ամենամեծ



պահոցը: Թանգարանի տարբեր սրահներում առանձնահատուկ տեղ հատկացվեց հայ տպագրության գոհարների ցուցադրությանը՝ հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը» (Վենետիկ, 1512 թ.), առաջին տպագիր Աստվածաշունչը (Ամստերդամ, 1666-1668 թթ.), առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը» (Ամստերդամ, 1695 թ.), առաջին տպագիր պարբերականը՝ «Ազդարարը» (Մադրաս, 1794-1796 թթ.) և այլ արժեքավոր տպագրություններ:

21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ, կարևորելով նաև հայ գրքի ռազմավարական նշանակությունը, աշխատանքներ են տարվում ստեղծելու և ձևավորելու համահայկական թվային գրադարան, որի նպատակը գրքի երկարաժամկետ պահպանությունը և հասանելիությունը ապահովելն է:

Գրատպության թանգարանը հագեցած է նոր տեխնոլոգիաներով, ինչը ստեղծում է ոչ ֆորմալ կրթության ինտերակտիվ միջավայր:

Թանգարանը միտում ունի դառնալու հայ գրքի հետազոտման կենտրոն:

Հայ տպագրության պատմությունն արտացոլված է Գրատպության թանգարանի վեց սրահներում՝



Գրի ակունքները սրահում ներկայացված է նախագրային շրջանից մինչև գիրն ընկած ժամանակահատվածում ստեղծված գրավոր մշակույթի նմուշներ՝ ժայռապատկերներ, սեպագիր արձանագրություններ:

Հայոց այբուբենը սրահում ներկայացված են գրչության տեսակները և եվրոպացի հրատարակիչների գրքերում փայտափորագիր հայոց այբուբենը:

Հայ գրադպության առաջնեկները սրահում ներկայացված են հայերեն տպագիր առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը» (Վենետիկ, 1512թ.), Աստվածաշունչը (Ամստերդամ, 1666-1668թթ.), առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշ-



խարհացոյցը» (Ամստերդամ, 1695թ.), առաջին տպագիր պարբերականը՝ «Ազդարարը» (Մադրաս, 1794-96թթ.):

Հայկական գրադարան սփյուռքը սրահում ներկայացված են այն հիմնական օջախները, որտեղ գործել են հայկական տպարաններ և տպագրվել են հայերեն գրքեր: Սրահում կարելի է ծանոթանալ տպագրավայրերի

համառոտ պատմությանը:

Գրահրապարակչություն սրահում ցուցադրված են տպագրական մեքենաներ, կլիշեներ, տարբեր երկրներում գործած հայկական տպարանների նկարներ: Հոլոգրաֆիկ ցուցադրության միջոցով ներկայացված են տպագրության հիմնական ձևերը:



15:45, 25 Սեպտեմբեր, 2017

Գրի հավերժությունը սրահում ներկայացված է տպագրության սկզբնավորումը ներկայիս Հայաստանի տարածքում:

Ցուցադրված են Հայաստանի և Արցախի մամուլի եզակի նմուշներ:

Թանգարանը կոչված է ծառայելու հանրությանն ու նրա զարգացմանը: Այն ցուցադրում է մարդկության ժառանգությունը՝ կրթության, ուսումնասիրության և ժամանցի կազմակերպման նպատակներով: Թանգարանը հանդես էր գալիս որպես մարդկության հավաքական հիշողության կրող և հանրության լայն զանգվածներին գիտելիք հաղորդող հարուստ կենտրոն:

THE MUSEUM OF PRINTING

In 2012 Yerevan was declared World Book Capital by **UNESCO**, and the 500th anniversary of the Armenian Book Printing was celebrated. During these events, it was agreed to establish the Museum of Printing. The museum creates in the Armenian National library which is the largest cache of Armenian printed.

On September 25, 2017, the Museum of Printing was established in the Armenian National Library.

The museum consists of six exhibition halls.

Amongst the exponats are: the first Armenian printed book Urbatagirq “The Friday Book” (1512, Venice), the first Armenian printed Bible (1666, Amsterdam), the first Armenian printed map (1695, Amsterdam), the first printed Armenian periodical “Azdarar” (1794 - 1796, Madras) and more.

In the museum the visitor will be acquainted with the first introductions of woodcut Armenian alphabet in European publications, exhibits on antique books, history of Armenian printing, printing presses, cliches.

Some exponates are being displayed with the use of computer technologies. These creates an interactive environment for informal education.

The museum is serving as an educational hub for high school and University students.

It will become a Book&Binding research center.